

Ա Խ Մ Ա Ն Գ Ա Բ Ա Մ Ա Հ Ե Ա Ն

ՀԱԻԱՔԱԾՈՅՑ

ԸՆՏԻՐ ԳՐՈՒԱԾՈՅՑ

ՕԶԳԱՅԻՆ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՏԵՆԱԳՐԱՅ

Ա.ՇԽԱԿԵՐԵՎԻ Վ.ՎՈՐՈԽԻ

ԱՐՁԱԿ ԵՒ ՕՏԱՆԱԼՈՐ

Սոյն դասագիրք բաց ի նոր եւ ընթիր համուածներէ կը պարունակէ 46 շաւաղրութեանց պատկերներ, զանազան կարեւոր ծախօրութիւնն եւ 90 շաւաղրութեանց նոր եւ բնոլայնեալ նիւթեր:

Գ.Ա.Ի.ԵՐԵՎԱՆԻ, ՅՈՒՄՈՒՄ • ԽՈՐՃ • Ա.ԶԴ • ԿԵԴՐ • Վ.ԱՐՁՈՒԹԵԱՆ

مأوف نظارت جليله سنك رخصته


ՄԱՍՆ Ա.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Լուս

260



6

11

Симон Габашвили

Содружество

Справедливо и правдиво
они не имели права на то, чтобы
иметь право на то.

Ноша и смила.

Team I.

2^o update.

Консультации

1892

Aug
260

У б У н ы ғ ү ғ ү ү ү ү ү ү ү

2000

8(025) Ир. 31191902

ՀԱՐԱՔԱՆՈՅՑ

ԵՐԵՄԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵԽ ՕՏԱՐ ՄԱՏԵՎԱԳՐԱՑ

Ա.ՇԱՄԲՈՒԿԻ ԼԵԶՈՒԱՆ

БИБЛІОТЕКА

ЧАЛЬНЫХЪ КЛАССОВЪ

Աշուակ ին օսկեանիօթ

СОКРАЩЕННЫЙ

Սայն դաստիարք բաց ի նոր եւ ընթիր հատուածներէ կը պարունակէ 16 շարադրութեանց պատկերներ, զանազան կարեւոր ծանօթութիւններ եւ 90 շարադրութեանց նոր եւ սեղյալնեալ նիւթեր։

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ ՅՈՒՄՈՒՄ • ԽՈՐՀ • ԱԶԳ • ԿԵԴՐ • ՎԱԲՉՈՒԹԵԱՇ

* № 990

P. 932

ՄԱՍՆ Ա

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱ

— 1 —

1892

1892

000 S

BRITISH LIBRARY REFERENCE NUMBER: 00000000000000000000000000000000

ବ୍ୟାକ୍ ପରିଚୟ

መግባዬና ማስታወሻ ተሸጋዕስ እና መብትዎች

Հեղինակին հասցեն՝

U. S. F. U. U. U. d b U. U.

Կ. ՊՈՂԻՄ

Հանօ-Բուլօ խան, թիւ 29.



260-2003

(4969
38)

Unit 10

13605-58)

Տպագրիչ եւ փորագրիչ Ա. Ա. Պէտղէսես. Ա. Պոլիս, Էսֆիր Զապրիկ նախահայր, թիւ 61.

ՅԱՐԱՋԱԲԱՆ

Ինչպէս պիտի տեսնեն պատուարժան ուսուցիչք, ՀԱ-
ԻՍ.ՔԱ.ԾՈՅՑիս այս Բ. տպագրութիւնն հիմնական փո-
փոխութեանց ենրարկուած է, այն նպատակաւ զի սա'
իւր տեսակին մէջ բոլորովին նոր եւ օգտակար հանդի-
սանայ: Ընտիր հատուածոց լնրեցումը մայենի լեզուի
ուսման մէջ անհրաժեշտ նկատուելով, կը կարծեմք քէ
մեր հրատարակած երկնատոր ՀԱ.ԻՍ.ՔԱ.ԾՈՅՑն յետ այս-
րիկ եւս կ'ընդունով Պօլսոյ եւ գաւառաց ազգ. վար-
ժարաններուն մէջ:

Սոյն հատուրն, բացի նոր եւ գեղեցիկ հատուածներէ, ունի ծանօթութեանց կարգին մէջ՝ զանազան զիւտեր, կրուրիչներ, բաշացուցակներ, մանաւանդ շարադրութեանց ըստ բաւականին ընդլայնեալ ծրագրեր։ Նոյնպէս յայս խսկ զետեղած էմք սոյն հատուիս մէջ շարադրութեանց պատկերներ, զորս յաջողապէս փորագրած է Ազգ. Տպագրապէս, Մեծ. Նշան Էֆ. Պէրպէրեան :

Նուիրելով սոյն այս Երկասիրութիւն՝ Երկսեռ ուսանողաց, կը յուսամֆ թէ այսու եւս նոցա յառաջդիմութեան մերովսանն ծառայելու բախտին կ'արժանացամֆ :

U.S. 9.

1892

ԵՐԱԿԻՒՏՄԱՆ

រោមទីន្មោះការណ៍

: 11000

2081



Ընթերցասիրութիւն :



ՀԱԽԱՔԱՌՈՅ

ԸՆՏԻՐ ԳՐՈՒԱԾՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ԵԽ ՕՏՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՐԸ

ԺԱՌՈՅՉ. Պ. 8. 10

(Անդրման Ավետիք)

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԿ

Ընտանեկան յարկն օրեւկան մ'է նուիրական՝ որ իւր մէջ կ'ամփոփէ ինչ որ սիրելագոյն է մարդկային սըրտին։ Ի՞նչ բան աւելի սիրելի քան հայր, մայր, եղբայր, քոյր, ամուսին, զաւակ, աւելի հետալի քան սոցա սիրոյն փոխադարձ վայելումն, և աւելի սրբազն քան այն յլշատակներ՝ որք ի սոցանէ կուգան։ Ընտանեկան յարկն կը բովանդակէ և կը բացատրէ այդ ամէն անոյշ բաներն։ Բոյն մ'է այն սիրածերմ մարդկային էակին համար իւր ամէն հասակներուն մէջ։ Ի նմա կը վայելէ խնամք անձնուեր զոր ոչ ոք դուրսը կարող է տալ նմա, սէր անսահման և իննուրաց՝ որոյ հետ չէ կարող բաղդատուկիւ այդ յարկին օտար էակի մը յաճախ կեղծուպատիր բարեկամութիւնը։

Բաղդին հարուածոց և մըրիկներուն դէմ ապաւէն
մ'է անեոյք այդ յարկն . անդ կը հանդչի մարդ , անդ
կ'սփոփի , անդ կը քաջալերուի . անեէջ սիրոյ հուրն՝
որ ի նմա կը բողոքի՝ կը տաքցնէ աշխարհի անսէր
յարաքերութիւններէն ցրտասարսուռ հոգին . անձ-
նուիրութեան անվիաս ոգին՝ որ կը բնակի ի նմա՝ յար
պատրաստ է մեր սրտի վիրաց վերայ կաթեցնել ըս-
փոփածու բալասանն : Համոյքներն՝ զոր կը վայելէ
մարդ նորա մէջ՝ անհամեմատ քաղցրութիւն մ'ունին ,
և անրիծ անարատ են , մինչ արտաքին զուարձութիւնք
յաճախ պղտոր են և կը ձգեն իւրեանց ետեւ տիսուր
յիշատակներ :

(Մաղիկ Մանեկանց)

Ո . Յ . Պ Ե Ր Ք Ր Ե Ա Ն

Ա Ռ Ա Ռ
Ըստանիքն ամէն առաքինութեանց առաջին դպրոցն է:
Ըստանիքն ամէն առաքինութեանց առաջին դպրոցն է:
Ըստանիքն ամէն առաքինութեանց առաջին դպրոցն է:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառք . — Օրեւան , թնական . — Սիրաչեմ , Սիրով
սիրած . — ինքնուրաց , տա անձնուեր . — Անեոյք , Ապանով .
— Անշէջ , Անեանելի . — Անվիաս , Զինառող :
Կըրութիւն . — Կ'երողիեան զանազան մասերու բաժնելով
զանազան հարցումներ ընկը առ ուսանողն :

Յանուարի թիւ 1873 թիւ մայս 1873 թիւ մայս
տասն , պատսպարան , պանդոկ , իջեւան հիւղ , շենանիկ ,
իցիկ . — իրմիթ , նղիկ , տաղաւար , պալատ , ամսրանոց ,
դղեակ , դպրոց , վանք , շենք , մանաստան . — հաստատութիւն .
տուն . — օթեան , բնակութիւն , դադար . — հիւնդանոց ,
հիւրանոց . — կալուած , հովանոց (հէօչ) . — քահանայատուն :

Ընթացք շարադրութեան . — թարեկարգ տուն մը .
— Հարուստ չեն Աբելեանք . բայց Աբելեանց մոյլն ամենէն հո-
գածու կին է . Երեք բան առասորէն կը վատնէ (օդ , ջուր ,
աշխատութիւն) . — Օդոյ փոփոխում . — Մաքրութիւն խոհանո-
ցի . — Դարանք շինանձ , անօմք կարգավլ շարուած , սեղան
աձառով . մաքրուած . — Փայլուած ապակիք . — արեւուն լոյս
կը թափանցէ այն փայլուն առարկայից վրայ : — Աղքատիկ է
տունդ , Հայր Աբելեան , բայց ամէն ոք դոչ է հիմ ապելով :

ՀՕՃ
ԱՐԱՐԱՏԱՆՑ ԱՐԱՐԱՏ

Եթե ու յիսբա Մ Ա Ր Ա Ռ Ո Ւ Կ Շ Ն ծոր ովայի
ուսմառը . . զի՞ մագաւուաւար ուս բարսմ յմ
բիունուա , յամբիւնու յմբաւուասար , յամմփոթ իդր
երբ կ'երեւի մանուկն , ամրող իւր ընտանեաց
Ականքն զնա կ'ողջագուրէ , քաղցր իւր հայեաց
Փայլ կ'արձակէ բնաւից աչքին .

Տըրտում և փիծ ճակատք անդամ դիտեն պարզիւ
Խորշոմներէ յաճախ՝ մանկանն այն ի տեսիլ
Անմեղունակ և զուարթաղին :

Անոյշ ժը պատովն այնքան մանուկն է գեղեցիկ ,
բազմազրուցիկ ձայնիւն , ոգւովն իւր անկեղծիկ
եւ իւր լալեօքն՝ որ շոյց ցածնու .

Շուրջ յածելով իւր պակուցեալ դէմքն ու նայուած
Մատաղ հոգեակն իւր կ'ընծայէ յոլցոյն կենաց,
Եւ բերանն ալ համբոյներու :

Ո՞վ Տէր, պահէ զանոնք զոր ես սիրեմ յասիս, Եղբայր՝ ծընող՝ բարեկամ նոյն և զթցնամիս
Հնդդէմ չարին մ' շո յալբազինեաց.

Մի՛ տար տեսնել ամառն առանց ծաղկանց ոսկի ,
Վանդակն առանց թըսչնոց, փեթակն առանց մեղղոփի,
Եւ տունն առանց մանրիկի մանկանց :
Թարգ. Եղիշէ Ե. Վ. Գուրեհան. Վ. Հերկո

ՀԱՅԻՐ ՄՏԱԾՄՈՒՆՔ


Ընտր գործ մէկ լաւ դասիարակել տղայը եւ օդ-
նել ծնողաց այս պարտաւորութեան մէջ : — Առաջնոր-
դել հոգիները , դասիարակել մանուկները , արուեստից
արուեստն է .

բանակ ուժ պարագայութեամբ անը ՓԵՌՍՈՒ

• *Wojciech Włodarczyk, Zbigniew J. Zajączkowski*


ԾԱՆՈԹԱԿՐԻՑ

Բառք . — Ողջապուրել , Սիրել . — Փիծ , Պիղծ , աղտեղի . — Բազմարոցիկ , բայ բան բաղկ . — Շոյս , Շուտով . — Յածնուշ , Խճել . — Յածնուշ , Պատահ . — Պակուցեալ , Ապօած . զարևացած . — Ցողոյնի կենաց , կեանքր ոդցութելու համար . —



ՏԱՐԱԴՐՈՒԹԻՒՆՔ ՊԱՏԿԵՐԱԿ

Աիրվարդ, փոքրիկ Տնաւելոր :



Տեղեկորդիւնք. — Սեղանը գրուած է միշտ խօսեցէք Ակրա-
վարդի ճաշակին վրայ: — 2. Ակրավարդի փոքրիկ քոյլն երեքամ-
եայ՝ փոքրիկ հնոցին մէջ պիտի այբուեր: — 3. Մանկուչի մը
որ իւր զգեստներն ինք կը կարգուէ, իւր մօլը մեծ հաճայք կը
պատճառէ: — 4. Ակրավարդի հայրը ի՞նչպէս գոհ պիտի մեայ
այս երեկոյ, երբ արգանակը ճաշակէ: — 5. Պէտք է աւելէ կա-
րասեաց վրայ եւ անկիւնները: — 6. Պէտք է գիտնալ օգտիւ-
այն վայրենենէն, երբ երկածը տաք է: Ակրավարդ զայդ գիտէ: —
7. Երեկոյին մայրը կը պատուափրէ: Ակրավարդ եւ զայն կը դրէք:
(խօսակցութիւն մօրն եւ աղջկան մէջ):

Յասին , Աշխարհի վրայ . — Նոյն , Նոյն իսկ . — Յաղրազ-
գևաց , Յաղրոլ .

Հարցմանենք . — Ընտանեաց Աէց . — Ո՞յթ են մանկան
մը առ ծնողս ունեցած պարտքերը : — Ի՞նչպէս պիտի ապացու-
ցանէք ձեր ծնողաց թէ կը սիրէք զանոնը : — Ի՞նչպէս պարտիք
չնապանդիլ ձեր ծնողաց : — Ի՞նչ կը մոտածէր մանկան մը հա-
մար՝ որ կը համարի զանձն իւր ծնողքէն գերազանց, որովհետեւ
անոնցմէ ուսեալ է : Եթէ ձեր ծնողքը աղքատ է, ի՞նչ պիտի
ընէք անոնց համար երբ դուք ձեռնհաս ըլլաք : — Ի՞նչ կը պա-
տահի ձնողաց, երբ խիստ չեն լինիր իրենց որդւոց նկատմամբ :
— Յօ՞րում կը կայանայ հնազանդութիւնը :

ლხրացქ շարադրութեան . — Յարատեւուի իւն :
Պիսի խօսիք երկու աշխագիրտաց համար՝ որոց մին յարատեւող
է, և միւսն չէ այնպէս : Առաջինն քննութեան կ'ընդունուի .
Երկրորդը կը մերժուի : — Յցուցէք թէ յարատեւութիւնն օգ-
տակար է դպրոցին մէջ և անկէ դուրս :

For some

6. Η ρισωφ ρυζηρδακις, αχεμινορδον, φιρζηρη, φιρζηρηρδε, λερνερ πο της γενετηρα βαρδημαρητη δεν βινακζορ. βιαγιη ινδιανη διαβιαρη μηνιμηιαγινη τεκηφη, γηροπιλη οισαρη ερειλαμη, ιμη διορη αποεινη ζι:

Բ. Սիրելի է ինձ զամենքը ուրախ տեսնել իմ շուրջը . իցի՞ւ փոքր տղայք , գեղեցիկ և կայտառ . իւրեանց ձնողաց խնդութիւնն ըլլան , երիտասարդիք նոցա նեղուիր , ծերունիք խնդալից գողուեն իրենց բազ-

կաց մէջ իրենց թոռնեակներն և բնութիւնն ամենուն ժպտի . սակայն ինձ համար միմիայն տեղի՝ յորում ուրախ կարենամ ըլլալ, միշտ հօրս տունն է :

Գ. ՏԵ՛ս սա ծիծառները, որոց բայցը մեր տանեաց քիւին անկիւնն է. ինչպէս խնդալից են. ամբողջ ընտանիք մ'են նոքա, բարի հայրը կանուխ կ'երթայ պարէն փնտուելու, մինչ մայրիկը կը խնամէ ի բնի իւր պիտուն ձագերը. ահա անոնցմէ մին, որոյ թեւք արդէն զօրաւոր ըլլալու են, զի կ'երթայ կը թափ մօտաւոր ծառին մի ճիւղին վրայ ուր իւր հասակակից թըւչնիկը կոչէն զինքը գեղգեղանօք, զոն վայրիկ մի կ'երդէ անոնց հետ. յետոյ իւրաքանչիւրը կը վերադառնայ առ մայր իւր: Այն սիրուն էակներուն համար իրենց բոյնը իրենց տունն է:

Դ. Այո՛, մենք ալ այդ պղափիկ արարածներուն պէս ենք, որովհեաեւ կըսուի թէ, մենք ալ անոնց պէս հիւր ենք յաշխարհի: Ահա՛ մեր հայրը գնաց իւր աշխատութեան պարապելու մեղի համար, մինչդեռ մեր մայրիկը առտնին հոգն ունի իրեն բաժին, նա կը զրադի օրն ի բուն պատրաստելու ինչ որ պէտք է իւր զաւակաց համար, նոյն միջոցին ես պիտի լնեմ, ինչպէս կընեն այն նորատի ծիծունք, որոնք առ ընկերուս իւրեանց երթան, իրեւ ի ժամադրեալ տեղի մօտաւոր ճիւղին վրայ: Այո՛, ես ալ ունիմ գեղեցիկ ճիւղ մը, ուր սիրելի է ինձ յաճախել, այդ՝ մեր դըպարոցն է, ուր ընկերուս արդ իսկ ինձ կ'սպասեն: Աշխարհիս մէջ այդ է միմիայն ընտանեաց յարկէն դուրս ապահով տեղի իրեւ իմ հօրս տունը:

Ե. Հոն կայ անձ մը սկատկառելի իւր հասակաւը և առելի եւս իւր իմաստութեամբը և առաքինութեամբը, կին մը ամենէն քաղցրագոյնը ու ամենէն համբերա-

սարը յաշխարհի . սոքա ծնողք են աշակերտաց և աշակերտք իրեւ անոնց զաւակունք. հոն կան ամեն տեսակ կտրիմ ուսուցիչներ. ո՞րչափ լաւ բաներ կ'ուսանին անդ, մանաւանդ յառաջ քան զամենայն կ'ուսանին միրել զամենաբարին Աստուած, զծնողս, և զամենեմին իրեւ եղբայր: Ո՞հ, ո՞րչափ գոհ կ'ըլլան ուսանողք, երբ իրենց պարտականութիւնը լաւ կատարեն. յայնժամ կ'ուսուսեն նոքա և կ'երդեն, և յետոյ յերեկոյին լի ուրախութեամբ իրեւ թոշնիկը ի բոյն, իւրաքանչիւրը կը դառնայ իւր հօրը տունը:

Զ. Իցիւ, երկնից օրհնութիւնը տարածուի աշխարհիս վրայ իրեւ ցող ի մարմանիի, իցիւ հեռանան և իրաց երթան բոլոր ձախողակի և բօրաբեր ամսիք, որպէս զի տուատ հունձք և կուրք իրար յաջորդեն և փոխարինեն մշակին աշխատութեանը, ինչպէս բարի և ջանասէր ուսանողք իրենց ուսուցչաց խնամոցը, իցիւ այսպէս բարի աղայքը կարենան ըստ կարգի նեցուկ ըլլալ իրենց բարի ծնողաց և մէն մի պատանեակ օգտակար ըլլալով իւր նմանեաց իւր բարի վարմունքովը պատուէ իւր հօրը տունը

Յ. ՈՍԿԱՆ

ԸՆՏԻՐ ՄՏԱԾՄՈՒՆՔ

Բոնադատեցէք զմարդիկ յաշխատութիւն, եւ պակետ ու պատուանոր պիտի ընէք զանոնք:

(ՎՈԼԹԵՒ)

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Թառք. — Իցիւ, Երանիք թէ. — Նեցուկ, Օգնական. — Քիւ, Տանեաց (ուշէ). — Գեղեղամի, Երգ. — Համբերտ, Համբերող. — Ռոսուսէլ, Յահուսէլ. — Մարման, Հովասուն Տեղուանիք. — Բօրաքեր, Գուծաքեր. — Կուրք, Այզեկուրք:

Թառզրեոյլ. — Դպրոց. — Աշակերտ. արձակուրդ. արտասահնութիւն. բառարան. գիր. գիրք. գծագրութիւն. գրակալ. գրիչ. գրութիւն. գրչուկալ. գրքոյկ. դաս. եռանկիւն. երգ. զանգակ. զրօսանք. զմիկ. էջ. ընդօրինակութիւն. ընթերցանութիւն. ընկեր. թարդմանութիւն. թերթ. թուղթ. խաւաքարտ. ծածկոյթ. կազամար. կանոն. կարկին. կաւիճ. ձգախէժ. ձեռոց. մատիոտ. մրցանակ. նստարան. ուղղագրութիւն. ուսուցիչ. պարբերութիւն. սիւնակ. սպոնգ. փարազ. վրձին. տեսոր. տոմար. բարտէս. քերականութիւն. քննութիւն. քրիստոնէական :

Քերացք շարադրութեան. — Առանին տնտեսութիւն. — Ի՞նչ կը հասկնաք առանին տնտեսութիւն ըսելով. — Օրինակներով հաստատել թէ Ժամանակին կարեոր ծախք մը չընելով գէշ հաշիւ ըրած եմք. — Յո՞րում կը կայանայ տան մը բարւոք կացութիւնը. Եղրակացութիւն :

Ը Ն Տ Ա Ն Ի Ք

Մինչ գարուն է, բնութիւն շըքեղ,
Լըսե՞ս թուշոյն զըւարթ. գեղգեղ.

Հաստատած է բոյն նորակերտ
Փափկին ի բոյս, ծաղկին ի թերթ :

Մինչ կը հսկէ մայրիկն ըզգոյշ
Իւր ձագուկներ ձնուեն ինեւր .

Մօր թեւոց տակ ապա ննջեն,
Որոնք թուշիլ դեռ ուսած չեն :

Անթարթ աչօք դիտէ թուչուն
Թեթեւ յուզմանց իւր ձագերուն.
Սրտիկն հանգիստ չունի երթեք,
Այլ հուսկ ննջէ մայրիկըն հէք :

Տեսէ՛ք, հանգչի, պատկե՛ր չըքնաղ,
Բայց յուզեալ է իւր քունն, աւա՛զ.
Խորհի ձագուց երանութեան
Իւր քընոյն մէջ խալ յաւիսեան :

Այգուն ժամն է, ամենք զարթնուն,
Պատրաստի մայրն թողուլ զիւր բոյն.

Երդն արձակուի հեղիկ թուչոց,
Մինչ կը թողուն իրենց մօր ծոց :

Մանկիկ, դու եւս ունիս մի բոյն
Ուր վայելս երանութիւն.
Անդ կը ննջես իրեւ հրեշտակ
Բո սիրելի մօր թեւոց տակ :

Ք.

ԸՆՏԻՐ ՄՏԱՆՄՈՒՆՔ

Սէրն ազնիւ հոգիները կը կատարելագործէ :

ՃԱՌՆՈԹԱԽԱԾՎԻՆ

Բառք . — Գեղեղ , Երգ . — Քնիուշ , Փափուկ :

Կրբուրիւնք . — Գարուն , Գարնանային , Գարնանաբեր . — Հպուլ , Հպուշտնալ , Հպուշտոր , Հպուշութիւն . — Հանդիսա , Հանդստանալ , Հանդստութիւն , Հանդստոց . — Այդ , այդաստղ , այդանալ , ադաղալ . — Վայելք , Վայելլ , Վայելուչ , Վայելչուղ :

Էնքայց շարադրութեան . — Փախստական մայրը . — Գերուհի մը իմանալով թէ իւր զաւակն այլ տիրոջ մը ծախուած մենելուն պիտի առանուի իւրեւէ , կ'որոշէ անոր հետ փախչիւյօհիւ :

Պէտք է ներկայացնել ձեռ գիշեր մը զնա՝ որ արթնցուցած իւր զաւակը , և բազկաց մէջ կրելով՝ Հպուշութեամբ կ'ենէ ադարակէն և անծագոյլ կը հեռանայ Օհոյի ուղղութեամբ :

Նկարագրեցէք փաքրիկին Հանդարտութիւնն , որով անփոյթ կը Հանդչի մօր ժողին մէջ , և հէք մօր անձկութիւններն գիշերային փախստեան պայուն :

Հետեւեալ օրը արեւը մարը մտած տաեն կինն կը հոսնի այն գետն : Յանկարծ կը լուէ հեռուէն ձիոց ոտնաձայներ և պահապան շանց աշակեր գոշիւն : Խելայել , կը յառաջէ հեքն առաջ ցիս վրայ , կը վազէ , որի ի բախն , մինեւ միւս եղբը և նուռ շեալ կ'ինայ մարդակը տիրով մը բազկաց մէջ :

Պարտականուրիւն . — Վերոգրեալն արձակի վերածել :

ՈՒՐ ՊԻՏԻ ԵՐԹԱՆ ՀՈԳԻՔ ԵՐԴԱՐԻՑ

Վարդն անոյշ հոտ մ'ունի , փուշով պատած է . դաշին շուշանն ալ հոտաւոր է , ու դժնիկներու մէջ կը բուսնի :

Գարունն զուարձալի է , բայց շուտով կ'անցնի . ա-

մառն աղուոր օրեր ունի , ձմեռն եակեւն կուգայ մոռցընել կուտայ :

Ծիրանի գօտին գոյնզգոյն կը փայլի , բայց մէկքանի վայրիեան :

Կեանքն ալ անուշ է , բայց մահն կը դառնացնէ :

Կայ երկիր մը , որուն վարդերն փուշ չունին , ծաղիկներն գէջ խոտերու մէջ չեն բուսնիր . անոր գարունն անանց է , օրերն միշտ պայծառ : Հոն կ'ամի կենաց ծառն անթառամ ծաղիկներով : Հոն անթիւ անհամար հոգիք Աստուծոյ աթուին շուրջ հոգեւոր երգեր կ'երգեն . հրեշտակներն ոսկի քնար կը դարնեն . քերովքիներն կրակէ թեւերով կը թոշին :

Այն երկիրն է արդարներուն հայրենիքն , գէջ բան մ'ալ չկրնար հոն մմնել :

Հոն ոչ ոք հիւանդութիւն և ցաւ կը քաշէ . ոչ ամառուան տաք կայ հոն , ոչ ձմեռուան ցուրտ . պատերազմ չըլլար հոն . ամենքն ալ զիրար կը սիրեն :

Երբ մեր մէկ բարեկամն կամ ազգականն մեռնի ու հողով ծածկուի , ալ չենք տեսներ զինքը , բայց դարձեալ պիտի գտնենք զիրենք երկնից մէջ , ու այլ եւս պիտի չզատուինք . հոն միայն սուրբեր ու առաքինի մարդիկ կը կենան :

Իրաւ որ երկրիս վրայ զԱստուած , կ'օրհնենք ու կը սիրենք . բայց երկինքն ալ աւելի ու կատարեալ կերպով պիտի սիրենք և օրհնենք : Հոն պիտի տեսնենք զՅիառաւ , որ մեզի համար յերկնից իջեր էր , ու մեզի անոր ճամբան բացաւ : Պիտի տեսնենք զԱստուած իւր փառաց մէջ : Երկրիս վրայ չենք կրնար զինքը տեսնել , բայց կրնանք սիրել :

Զենք կրնար երկիրս թողուլ , բայց պէտք է որ զԱստուած մուած ենք :

Այս աշխարհիս մէջ անցաւոր ենք . մէկ մ'որ ան-
դին անցնինք՝ հոն պիտի բնակինք յափեանս յաւ-
տենից :

(Յոյցք Ասուուծոյ)

Հ. Դ. ԱԼԵՎԱՆ

Աշխատէ՛ կը կրօւանան,

Աղօրէ՛ կը սրբանա .

Համբերէ մինչեւ իսպառ,

Արքայուրեան վարձ կըսանաս :

ԳԱԲՐԻԷԼ ԱՐՔԵԹԻՍ. ԱՅՎԱԶՅԱՆ

♦♦♦♦♦

Բառք . — Դժմիկ , Փուշ . — Անանց , Ցալիսենական :

Կրրուրիւնք . — Աշակերտք վերոգրեալ հասուուծն վեր-
ըւծելով ցցունեն թէ ո՞ր բառերն արմատ են և որո՞նք ածան-
ցեալ և բարդ :

Ընթացք շարապրութեան . — Նամակ . — Աշակերտք
յանցաւոր եղած է , արդ կը զղայ իւր յանցանքին համար , և
ուսուցէն ներում կը ինդրէ գրով :

♦♦♦♦♦

Գ Թ Ո Յ Հ Ր Ե Շ Տ Ա Կ Ն

Ա .

Խեղճ , անտերունչ մի տըղայ՝

Մինչ ձիւնէ ձըմեռ՝

Ուղեկորոյս կը դողայ ,

Նօրի , կիսամեռ . . . :

Բ .

Յանկարձ՝ բուին մէջ՝ մի լցու ,

Մի բոց և շոգի .

Կը նըշարէ , և մի կոյս

Որ իւր դէմ չոքի . . . :

Գ .

Տաքնայ տղեկն յայն հուր և բոց ,

Եւ ձայնիւ աղղու՝

Գոյչ . « Մայրիկն ես որբոց ,

Ո՞վ , ուստի ես դու . . . : »

Դ .

« Յերկնց դրախտին խակ մէջէն ,

Կուգամ ես շիտակ ,

Աստ տառապեալք զիս կոչեն

Գլթո՞Յ չընշակ : »

(Եսիր ու Յօդիր)

ԱՆՔ. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

ԸՆՏԻՐ ՄՏԱԾՄՈՒԽԻՔ

Թուառութիւնն ունեցայ ինձ ուսուցիչ, եւ նա ինձ
շատ բան սորվեցուց :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառք. — Նօրի, անօրի. — Բույ, Հողմասառն ձիւն (թէտ),
Հարցմաւեք. — Թերութիւնն եւ բարեմասնութիւնն . — Ինչու
բարութիւնն նախամեծար է քան գեղեցկութիւն . — Ին-
չու գէլ բան է ատեն . — Լաւ բան է դռնեն մտիկ ընել . —
պէտք է որ յայտնէք ճեզի մուհմօրէն յայտնուած գաղտնիք մը . —
Ի՞նչու պարապ համար ուղղաբերձ կը կանգնի բաղդատեցեք
զայն ուրիշ բանի մը հետ . — Ի՞նչու համար պէտք է խորհրդ
չգործելէ առաջ . — Ի՞նչու գէլ բան է հացը կորսնցնել կամ փը-
ճացնել . — Ինչու համար աղացք պէտք չէ բար նետեն . — Ին-
չու համար գէլ բան է բարկանալն :

Ընթացք շարադրութեան . — Զմեռ եւ զուր . — Կարա-
գութիւնն ձմրան . ախուր կերպարանն՝ զոր կ'ընծայէ երկնից ու
երկրի երեսն : Այս խստաշունչ եղանակին պէտք է յիշել աղքատ-
ներն . — Հրաւէք գթութեան :

ԱՌԱՔԵԼ ՏԱՏ⁽¹⁾

Մահտեսի Առաքել Տատ Ամիրայ՝ ցեղի հնութեամբ
և աղնուականութեամբ հոչակաւոր, նաև իրնէ սրա-
միս և մեքենական արհեստն կատարելագործելու ըն-

(1) Որ կը համորուի նահապետ Տատեան գերգասասնի, ոյք
պատուաբեր անդամք հաւատարմապէս ծառայած են և կը ծա-
ռայեն տէրութեան և ազգին : Յիշենք ի մէջ այլոց՝ Վահմէ : Յա-
րութիւն փաշա Տատեան, խորհրդական Արտաքին դործոց նա-
խարարութեան :

Պունակ՝ Օսմաննեան մեծադօր տէրութեան մէջ զանա-
զան արհեստից գործարանաց առաջին հաստատողն ե-
ղած է : Ծնած է յամին 1753, Ակնայ ծկամարակապ
գիւղը : Իւր մանկական հասակի խաղալիկներն կը լինին
շինել վայտէ մեքենաներ, մոմէ արձաններ, ևն : 1788
ին երբ Գաղիացի մը կայսեր հրամանաւ կ'արտօնուի
վասուղ դիւրութեամբ պատրաստելու համար ճախաւ-
րակ, մը չինել Այսուի վանուարանին մէջ, և
յայսմ չկրնար յաջողիլ, այն ատեն Մահտեսի Տատը կը
կոչուի, իրաւու ճարտարագործ արդէն համբաւեալ որ
իւր կորովի մոքով կը հասնի առաջադրեալ նպատակին :

Այս և ասոր նման երեւելի գիւղութեամբ սիրելի կը
մինի կայսեր՝ որ 1795ին կը չնորհէ նմա վասուղ ապետու-
թեան իշխանութիւն յԱղամլը գիւղ : Յետայնորիկ սա
կը կատարէ հետզհետէ օգտագատ գիւղեր, զորօրինակ,
կը ճնարէ վասուղի նիւթեր գիւրութեամբ պատրաստող
մեքենայ, անուաւոր նաւակ, ջրհան մեքենայ, նոյն-
պէս գլան ըսուած մեքենայն՝ որ պղինձը տափակ-
ցընելով՝ տախտակ կ'ընէք արքունի նաւուց յատակը
պատելու համար :

Այս ամէն գիւղերէն աւելի զարմանալու արժա-
նին այն եղաւ, որ ասուի գործելու համար հինգ գոր-
ծիք շինեց, և այնպէս ընտիր ասուի կը գործէր, որ
մինչեւ իսկ Սուլթան Սէլիմ Վեհափառ կայսրը իւր
արուեստագէտ ծառային հանճարը և ճարտարութիւնը
զնահաւելով՝ անոր շինած ասուիէն վերարկու հագած
յԱղամլը գնաց 1805ին, և շատ զմայլելով հրամայեց,
որ ասուելինաց գործարան հաստատուի :

Այս մեծանուն անձին մոաց ծլրգերն հաւասար
էին իւր հոգւոյ կատարելութեան : Քրիստոնէական
պարտուց մէջ հաստատուն, և աստուածաշատու-

թեան ջերմեռանդ ըլլալով՝ ծանր զբաղումներ արգելք չին լիներ իւր սովորական աղօթից և բարեպաշտութեանց։ Գործոյ մի ձեռնարկելէ առաջ անոր յաջողութիւնն նախ յերկնից կը հայցէր։ թէպէտ ի բնէ խոնարհ և մարդասէր, բայց մոլի անձերէ չէր ափորժեր։ Անզբաղ ժամանակին հոգեւոր գրքեր և պատմութիւն կարդալով կ'անցունէր։ Կը սիրէր կենակցիլ առաջինի և գիտնական արանց հետ։ Զաւակաց և թոռանց կըրթութեան և աստուածպաշտութեան համար ունեցած ջանքն յայտնի կ'երեւէ ցարդ նոյն բարեսրութեամբ և ուսումնավրութեամբ՝ զորս իբրեւ հայրենի ժառանգութիւն ընդունելով հաստատուն կը պահէ այս պանծալի ցեղը։

Մահտեսի Տատ մեռաւ 1812ին յԱղատլը, իւր տունը, և թաղուեցաւ Օրթագիւղի գերեզմանատունը տասնեեօթը տարի վառողապետութեան պաշտօնով երեք մեծազօր կայսերաց հաւատարմապէս ծառայելով։

ԸՆՏԻՐ ՄՏՍՄՄՈՒԽՔ

Անխոնջ վասակ, կեանէ ըզզաս, Են դրամագլուխ միւս պատրաս։

ԾԱՆՈԹՈՒԹՅԱՆ

Թառք. — Մրամիս, Միթք սուր. — Ընդունակ, Յարմար. — Համբաւեալ, Հոչակաւոր, — Գնահատել, Յարգր զիտնալ։

260-2003 4969) 38

Բառզբոյզլ. — Գլխաւոր ազանելիք — Անդրավարտիք · ասուեակ · գոտի · երիճաղ · զգեստ · թաշկինակ պարանցի · թիկնոց · լայնակամար, լանջանոց · լոգիկ · խանձարուրք · կապայ · կրկնոց · հեսկ · ձեռնոց · ձորձ · զենջակ · ձերմակեղէն · մուշտակ · ներքնակ · շապիկ · շղագգեստ · պատմուճան · պարեգոտ · սփածանելի · վերարկու · վինոց · տաբատ · տառատոկ · փողկապ · քրթանակ · քող · օձիք։

Ընթացք շարադրութեան · Նախակ · — Ձեր եղբայրն հեռու աշխարհէ վերադարձ է, այս առթիւ ձեր տան մէջ ընտանեկան երեկոյթ մը տեղի պիտի ունենայ. ուստի կը հրաւերէք նամակաւ ձեր հօրեղբայրն յայդ հանդէս։

ՏԵՇԵԽԻՑ

« Քու ձիւղէդ բաժնըւած, Խեղճ Տերեւ չորացած, Ուր կ'երթաս » : — « Զեմ գիտեր Հովին շրջեց արմատէն, Կաղնին՝ իմ ապաւէն, Անհանդարտ քամիներ Մըրըրին և զեկիւռ Զիս տանին հողմավար Դաշտերէ ի յանտառ, Լեռ հովիս ի ըստիւռ։ Կ'երթամ լուռ անդանդատ Ի թափառ, ուր քամին Կը տանի միամին Սարդենին և ըգվարդ » : —

Թարգմ. Հ. Ք. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

(Սոնութ)



Ա. Ռ. Ս. Ծ
Առաջինութիւնը՝ որ այժման խողօքարոյք նոտ մը
կ'արձակէ մարդոց լիշողութեան մէջ, չմեռնիր երբեք.
ՔԵՐԵԼՈՒ

Թառք. — Հողմավար, հովին հուռած. — Արդենի,
դափնի:

Հոմանիշք. — Ճեղ, սստ; ուղել. — Տերեւ, սաղարթ.
— Զորանալ, ցամաքիլ, գոսանալ, ոսնիլ, աղազիլ. — Հող,
հողմ, քամի, օդք. — Արմատ, արմն, տակ. — Ապաւէն,
ապաստան, պատապարան:

Քերացք շարայրութեան. — Նուադում. — Դպրոցին
բակին մէջ տղայք կը խաղան. Սմբատ իւր ծունկը սաստկապէս
կը զարնէ նստարանի մը, կը նուադի. — (Նկարագրել նորա վի-
ճակը). — Ուսուցիչը կը բացատրէ թէ ի՞նչ է նուազում և թէ
ի՞նչպէս պէտք է վարուիլ, խնամք: Տարածել չիւ անդն ի գե-
տին, զգեստները թռւլցնել, պաղ ջուր երեսին սրսկել. մի քանի
կաթիլ օղի խմբնել ջրախառն:

ԿՈՅՑՐՆ ԵՒ ԻԻՐ ԲՆԿԵՐՔՔ

Շատ ժամանակ առաջ 12 որսորդ սերտ բարեկա-
մութեամբ կ'ապրէին ամսյի դաշտի մը վրայ, ուր շատ
երէ կար: Ասով բաւական միս ունէին, իսկ որսացած-
երէներու մորթը կը ծախէին վաճառականաց, այնպէս
որ քիչ ժամանակէն բաւական շատ դրամ ժողվեցին:

Սնկէ ետեւ որոշեցին՝ այլ ևս երեք տարի նոյն տեղն
որսորդութիւն ընել, հաւաքուած դրամը բաժնել և
իրարմէ բաժնուիլ և հայրենիք դառնալ: Եւ ահա որ-
որդներէն մէկը կը հիւանդանայ, և հիւանդութեան
հետեւութեամբը կը կոյրնայ: Ուստի ընկերները զինք
միշտ առւնը կը թողուն. և երբ նա կը հարցնէ. «Այսօր
ի՞նչ որսացիք»: միտ տրանջերով կ'ըսեն թէ. «Այսօր
միայն նապատակ մ'որսացինք, ալ երէ չէ մնացեր»:
Կ'ուղէին զանի այս կերպով իրենցմէ հեռացնել: Բայց
վերջապէս կոյրն սկսաւ կասկածիլ ընկերներուն խօս-
քին ձշմարտութեան վրայ և ուղեց համոզուիլ: Օր մը,
երբ որսի կ'երթային, ըստու, կ'ուղէ իրենց հետ դաշտ
երթալ: Ի՞նչ կրնային ընել: Ստիպուեցան զինք հե-
տերնին առնուլ, և ամբողջ օրն դիտմամբ երէ չզար-
կին. և նա չէր հաւասար որ նոյն դաշտին վրայ երէ
մնացած ըրլայ: Ասոր վրայ իւր անհաւատարիմ ընկեր-
ներն աւելի բարկացան, և գաղտ որոշեցին կոյրը հոն
թողուն, կերակուր դաշտանաց: Ուստի փախան. իսկ
կոյրը շատ ուշ իմացաւ իւր ընկերաց խարդախու-
թիւնը: Անձկանօֆ և երկիւղիւ խարխափելով զնաց,
և ըստ պատահման մարդակերի մը բնակարանին հան-
դիպեցաւ: Մարդակերը զինք ուրախութեամբ ընդու-
նեցաւ և իրեն կերակուր հանեց: Կոյրը չգիտանալով ուր
ըլլան, ուսեւլու ժամանակ ըստու. «Այս խորովածն
շատ լաւ է», սակայն զարմանալի համ մ'ունի, ի՞նչ
բանի միա է»: — Այսպէս, մրմրաց մարդակերն, ուրե-
մըն չե՞ս դիտեր կերածդ: Անտարակոյս կոյր ես եւ
խորովածը չես աեւներ: Կեցի՛ր հիմայ կը աեւնես ի՞նչ
է կերածդ»: Մարդակերն սպեղանի մը բերաւ և կոյ-
րին աչքը շփեց: Կոյրին աչքը բացուեցաւ և ուրախու-
թեամբ սենեկին շուրջը նայեցաւ. սակայն աչքը խո-

բովածին վրայ սեւեռեալ մնաց : Սկսաւ սարսափիլ ,
վասն գլ պնակին մէջ մարդու խորովեալ սրունք մը
կար : Բարձրածայն ծիծաղելով ըսաւ մարդակերն .
«Ի՞նչ է , համով չէ խորովածն , կեցիր , վաղը քու սը-
րունքդ պիտի ըլլայ այդ պնակին մէջ » : Որսորդն իւր
բախտին հպատակիլ ձեւացնելով պատախանեց . «Ե-
թէ վաղը զիս ուտել կ'ուզես , թող որ այս շէն , զոր
միշտ հետս կը կրեմ , քանի մ'ումագ առնումի » : Օդոյ
շին հանեց , ումագ մ'առաւ և ըսաւ . «Ո՞հ , այս ի՞նչ-
պիտի սքանչելի ըմպելի է » : — «Տուր» ըսաւ մարդա-
կերն , և առնլով շիշը որսորդէն մինչեւ յատակը
քամեց : Բայց ասով այնաէս գինովցաւ , որ թանձր
քնոյ մէջ ինկաւ : Որսորդն անմիջապէս մարդակերին
գանձերէն այնչափ բան առաւ , որչափ հետը տանիլ
կրնար , և շտապաւ մարդակերին խղիկէն հեռացաւ :
Դաշտավայրին մէջ իւր ընկերներուն հանդիպեցաւ , ո-
րոնք շատ զարմացան , երբ անոր աչքերը բաց տեսան ,
սակայն աւելի անոր գանձերուն վիպայ կը զարմանային :
Որսորդն սկսաւ իւր անհաւատարիմ ընկերներուն
պատմել , որ դաշտավայրին վերին հիւսիսային եղերը
խղիկի մը մէջ ծեր մը կայ , որ սպեղանիով ամէն կոյ-
րերու աչքը կը բանայ , և բաց ամի՞ ծերն այն ամե-
նուն , զոր ինք այսպէս բժշկած է , տեսակ տեսակ
գանձեր կը պարգևէ : Այն առեն որսորդներն իրենք
իրենց աչքերը ծակեցին , և յիշեալ ուղղութեամբ մար-
դակերին խղիկն դացին . մարդակերն զիրենք բոնեց ,
ետեւէ ետեւ մեռցուց և կերաւ . . . :

Թարգմ . ի Գերմաներէնէ

Հ . Գ . Գ .

(Հանդէս ամսօրեալ)

Ա. Ռ. Ա. Ծ

Բարեկամուրիւնը կը նմանի զինւոյ , հնագոյնն է
խաղցրագոյնը :

ԿԻԿԵՐՈՆ

ՀԵՎԵ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Թառք . — Երկ , որ . — Անձկանօֆ , նեղութեամբ . —
Սպեղանի , սպիի դեղ , (Քհէլ) . — Սկւենել , յառել .

Ճումանիշ բայեր . — Գգուել , շողմել , փաղաքչել , շն-
թել . — Որսաւ , գերել . — Համրել , հաշուել , թուել . — Շա-
րունակել , յարատեւել . — Աղարտել , անուսնարկել . — Ծած-
կել , սքողել , քողարկել . — Դիղել , կուտել , շեղչել . — Կար-
ծել , համրել , փարկանել . — Սփռել , պարզել , տարածել . —
Հանդուրժել , ժուժկալել , տոկալ . — Արհամարհել , անգոս-
նել , խոտել . — Օդնել , օժանդակել , նպաստել . — Ստիպել .
բռնադատել , բռնազրուել . — զարդարել , պճնել , պաճուճել :

Ընթացք շարտուրեան . — Առանձնութիւնն զմորդ
թշուառ կ'ընէ . ամենին մեծ չարիքն բարեկամներ չունենալն է .
— Բարեկամներ ունենալու համար , պէտք է բարի և արդար լի-
նել անոնց հետ . — Մի՛ ընէք այլոց , ինչ որ չէք ուզեր զի ընեն
նոքա ձեզ . ըրէ՛ք այլոց , ինչ որ կ'ուզեք՝ զոր ընեն նոքա ձեզ :

ՀՅՈՅ

Բ. Ա. Բ Ո Յ Ա. Կ Ա. Ն Ա. Ռ Ա. Ծ Ք

Լեզի խոտը դեղ կ'ըլլայ ,

Լեզի խոսքը կեղ կ'ըլլայ :

բառայ ճառամէ մարմ

Մարդը մարդուն հայելի,
Սիրով եղողը՝ սիրելի:
—
Հաց՝ քրտինքով է եփուեր,
Զաշխատողը չի մարսեր:
—
Լացի օրը մի՛ ինսդար,
Եղիր ատենին յարմար:
—
Հարկ է ուսնիլ ու դիսնալ,
Կամ կեանքն ամբողջ քնանալ:
—
Գրասի արժեքն է իրմէն,
Մարդու արժեք՝ գլացածէն:
—
Մըսեր ազոխն է թըթու,
Համբերէ՛, կըլլայ քաղցու:
—
Երբ ճըպուռը ճոճուայ,
Վախկոտին ամպ կը գոռայ:
—
Մրտի մէջ յոյսն է խթան,
Յոյս չունեցողն ի մըթան:

(Ծաղիկ)

3. ՈՍԿԱՆ



ՅԱՆԱԹՈԹՈՒԹԻՒՆ

Բառք. — Կեղ, վեր. — Գրաս, բեռ կրող անասուն. — Աղոխ, չիասած խաղող.

Բառզբոյլ. — Մարդ. — [Հետեւեալներէն զըմանս բարդ և զոմանս ածանց բառերու վերածել]. — Աղոխ. ականջ, ակոսոց, այտ, անդամ, աշք, արին, արմուկ, բազուկ, բերան, բթամատ, գանգ, գլուխ, գերե, գի, գուղուց (ուշուց), եղունգ, երանք (պար). թիկունք (իւնք), թոք, լեզու, լինդ, ծնօտ, ծոծրակ, ծունկ, կերպարանք, կղակ, կող, կողմ, կուրծք, կռառփ, հոգի, ձայն, ձոկատ, մազ, մաճաս (հոսու), մատ, մարմին, միս, միտք, միթք, մօրուք, շունչ, շրթունք, ուռու, ոսկը, ոտք, պեխ, պնդունք, միրտ, ստամբոս, սըռունք, պիզ, տեսք, ցուցանատ, փող, քիթ, քրտիք,


Ընթացք շարադրութեան. — Նամակ. — Ութ օրէ ի վեր սրդողած էք ձեր ընկերոջ հետ. արդ գրեցէք անոր թէ մոռնայ անցեալը և հաշտուի:

ԶԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԴԱՆԵԱՑ

Դու, Որդեակ իմ, երբ միջինի բունէն կ'անցնին՝ կաց պահ մի ու զննէ, տես ու զարմացիր թէ քանի աշխոյժ է այդ նկուն կենդանին. իւր բունէն մինչեւ քառասուն քայլ աւելի ուղղագիծ ճամբայ կը բանայ, կարաւան կարաւան անդադար կ'երթայ կուգայ. միշտ մի հատիկ պարէնով կը բեռնատօրի, կը բերէ կ'ամբարէ իւր բոյնը: Եթէ պատահմամբ կոխես ու ճմէս զինք ի եկախն, եթէ սայլին անխւն իւր ճամբուկ վրայէն անցգետին, հազարներով ջախջախուին, նաև տակաւին աշխատութենէն չի կասիր. երբեք չի թողուր իւր բացած արիւնոտ ուղեգիծն, այլ դիմակներու վերայ կը կոխէ ու կ'անցնի իրբե աշխատութեան աննկուն շահատակ: Մըջիւն՝ մարդ չէ, բայց կը նախատեսէ. յամարան կը ժողովէ, կ'ամբարէ իւր պաշարը, և ի ճմերան կը վայելէ, աղատ մնալով ի սովին: Մարդ մըջիւն չէ, նախա-

ՇԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՔ ՊԱՏԿԵՐԱԿ

Արամայ թերութիւնները :



Տեղեկութիւնք. — Այս տեսարանին մէջ եղող անձինքը խօսեցուցեք: Խնչպէս որ կը տեսնէք, այս պատկերներու անձեր կը խօսին: Դուք ձեր ձարտարութեամբ կրնաք երեւակայելթէ ինչե՞ր կարող են նոքա խօսիլ:

ԾԱՌՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառք. — Նկուն , բնկնուած , տկար. — Զննել , դիտել . — Ուղղագիծ , ժիսակ զծուած . — Ամբարել , ժողվել . — Երալ երալ , խումբ խումբ . — Սարդ , մամուկ . — Անդուլ , անդադար :

Բառզբայիլ. — Թուչունք եւ կենդանիք . — Ագռաւ . աղաւնի . աղուես . այժեամն . բադ . բու . գայլ . գառնուկ . եղջերու . երաշտահաւ . էշ . թութակ . լրամարգի . կապիկ . կատու . կարապ . կաքաւ . կեռնիկ . կուռ . կով . ձի . ճնճղուկ . մուկ . ոչխար . ուլ . փասիան . փիղ .

Ընթացք շարադրութեան . — Աւշատութիւն . — Պէտք է յարգել աշխատութիւնն . երբեմն կ'անարգէին զայն . նախնի Յշնք և Հռովմայեցիք ունէին գերիներ և յոյժ դժնդակ հարուածներով կ'ստիպէին զանոնք, յաշխատութիւնն , որպէս զի իրենք անաշխատ ապրին : Սյսպէս էին Միջին գարու աշնուականք ևս : Վայրենեաց մէջ եւս նոյնն է , հզօրագոյնք կ'ստիպէն տկարներն յաշխատութիւնն , և իրենք կը լինին տէր : Արդ պէտք է գիտնալ թէ աշխատութիւնն ընդհանուր օրէնք . է :

ԲՆԱՉԴԱՒԻՄՆ

Ո՞վ սովորեցուց փոքրիկ թուշնոյն՝

Մամուլ փեարով բայն մը շինել,

Ո՞վ սովորեցուց իրեն՝ խնամով

Զագերն անոր մէջ ամիտիիել:

Ո՞վ սովորեցուց ճարտար մեղուին՝

Անոյշ ծաղկանց մէջ թուշըտել.

Եւ ձմեռուան իբրեւ սնունդ՝

Փեթակին մէջ մեղր համբարել:

Ո՞վ սովորեցուց փոքրիկ մրջման՝

Գետնի տակէն ծակեր փորել,

Եւ ամարան տաք օրերուն,

Զմրան համար ջամբ պատրաստել:

Աստուած նոցա ուսոյց ճամբան

Իրենց պէտքերը ճարելու,

Ինքն է որ խելք ու շնորհ կռւտայ,

Սշխատասէր տղաքներու:

ԳԵՂ ԵՑԻԿ ԲԱՆՔ

Աշխատութիւն, գանձ անգին,

Եցանկութիւն մեր կեանին,

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառք. — Մանուռ, բու (Էստու) . — Ջամբ, ուտելիք :

Կրրութիւն . — Մամուռ, մամաւպատ, մամռաշէն . —
Փետուր, փետրալի, նորափետուր . — Խնամմ, խնամակալ, եր-
նամատար, անխնամ . — Ճարտար, ճարտարագործ, ճարտա-
րարուեստ, ճարտարապետ . — Սնունդ, մնդաբար, մնանիլ.
— Ծակ, ծակամուտ, ծակուտկէն . — Շնորհ, շնորհակալ,
շնորհապարտ, շնորհել:

Ընթացք շարադրութեան . — Նամակ մանկան մի ուռ իւր
հօրեղայրն . — Կազմադի օրը . — Բարեմազթութիւնք նոր
տարւոյ . — Յայտնեցէք ձեր սերը . — Զեր ընտանիաց նկատ-
մամբ լուրեր հաղորդեցէք . — Վերջաւորութիւն :

ՊՐՈՊՐՈՊԵՐԱ

Թօնընկէց հովեր կը սլանան հիւսիսային ծովին և
որոտագին կը փչեն իտալիոյ դաշտաց մէջ . ամպք կը
փախչին անոնց առջեւէն՝ ինչպէս ոչխարաց հօտ մի
զոր կը հաղածէ գոյլն, վերի վայր կընեն դաշտեր,
կը տապալեն ծառեր . ճաց և գետոց վրայ սառը կը
խորտակուի ամենուատ :

Լերանց կատարը ձիւնը կը հալի և կը գահավիժէ
հազարաւոր վտակներով . ամէն ձոր լիճ մը կը ձեւա-
նայ, գետք կ'ուռին, կը բարձրանան : Իրենց մեծամեծ
ալիք կը բաղնեն զափունս, և կը թաւալեն սառուցի
ստուար հագորներ :

Կոփածոյ քարէ կամարներու և միւներու վրայ կը
բարձրանայ կամուրջ մը, զոր կատաղի ալիք ի հիմանէ
կը խեն . մէջտեղն կայ անակ մը, անդ կը բնակի կա-
մըրջապահն իւր կնոջ և որդւոց հետ . կամրջապահութ,
փութա' ի փախուատ :

Կամուրջը կը սասանի խուլ դղրդմամբ . մրբիկը կը
մոնչէ տնակին շուրջ, կամրջապահն կ'ենէ տանեաց
վրայ, և կը տեսնէ սոսկալի վտանգը : — Ողորմա'ծ եր-
կինը, գթա' ինձ, կորսուեցայ, կորսուեցայ, ո՛հ, ո՛վ
պիտի ազատէ զիս : — Ալիք կը գլորեն և կը հարուածեն
ուժգին՝ կամրջին երկու ծայրերը, աստի և անափ կը
խլեն, կը կործանեն սիւն մը, յետոյ ուրիշ մը, մէջ-
տեղն հաստատ է տակաւին . . . : «Ո՛վ Աստուած, գը-
թա' մեր վրայ» :

Եւ ահա ազնուական կոմն մը կուդայ անդիր արշա-
ւասոյր, իւր ձիուն վրայ հեծած . ի՞նչ կը բոնէ կոմն
իւր ձեռաց մէջ, քառակ մը լի և ծանր : Երկու հարիւր

ոսկի կը նուիրեմ անոր՝ որ համարձակի այս թշուառ-
ներն ազատել:

Եւ միշտ աւելի կը բարձրանան ալիք, և միշտ ա-
ւելի կը մնչէ հովը, և միշտ աւելի կ'ընկրկին քաջեր.
սիւն մը կը թաւալի, ուրիշ սիւն մի եւս. կամարը մե-
ծադրորդ կը տապալին:

«Անվեհեր եղիք վտանգին առջեւ» . կը գոչէ կոմն՝
վեր բռնելով քսակը . ամէն ոք կը լսէ, ամէն ոք կը
վարանի և ոչ ոք երեւան կ'ենէ . ի զուր կնոջ և որ-
դւոց ձայնը կ'աղաղակէր մրրկաց մէջէն, օդնութէն:

Եւ ահա պարզ և հէք շինական մը յառաջ կուգայ,
ուղեւորի ցուալ ի ձեռին, զգեցած խոշոր ասուեայ
զգեստ մը, այլ բարձրահասակ և առոյգանձն, մտիկ.
կ'ընէ կոմնին, կը հասկնայ անոր խօսքը, պահ մը վը-
տանգը կը նկատէ:

Եւ համարձակ, յանուն Աստուծոյ, ձկնորսի ա-
ռաջին նաւակին մէջ կը նետուի: Ազատարարն յաջո-
ղապէս կը հասնի նպատակին հակառակ յորձանաց,
մրրկին և կատաղի ալեաց: Բայց, ո՛վ թշուառութեան,
նաւակին շատ անձուկ է ամենքն ի միասին ազստելու
համար:

Եւ երիցս կ'արձակէ իւր նաւակ հակառակ հողմոց,
ալեաց և մոլեգին մրրկին, և երիցս յաջողապէս կը
հասնի մինչեւ որ փրկութիւնը կատարեալ ըլլայ: Այն
ինչ վտանգեալք կ'ազատին հասնելով ի ծովեզը, և
ահա կամրջին մնացեալ մասը ալեաց մէջ կը խորասուզի:
Փութա՛, կ'աղաղակէ կոմնը, ո՛վ իմ քաջ բարեկա-
մըս, ահա մրցանակդ, փութա առնուլ զայն» : — Հ-
սէք, միթէ լաւ չդորձե՞ց: Կոմն աղմիւ միշտ մը կը կրէ,
բայց աւելի աղմիւ և աւելի վեհ է այն սիրտն՝ որ կը
բարախէ գեղջուկին խոշոր ասուեայ կապային ներքէ:

«Ոսկւով չծախուիր իմ կեանքս . ստոյգ է որ աղ-
քատ եմ, այլ կերած եմ ցյագ, տուր քու ոսկիդ կա-
մըրջապահին՝ որ իւր բոլոր ինչքը կորանցուց» : Կ'ըսէ
գեղջուկն սրտադին, և իւր ուսը դարձնելով կը հե-
ռանայ:

Թարգմ.

ԸՆՏԻՐ ՄՏԱԾՄՈՒՆՔ

Վեհ սրտերն զիտեն միայն թէ ի՛նչ փառք կայ բա-
րի լինելուն մէջ:

(ՖԵՆԵԼՈՆ)

ԾՍՆՈԹՈՒԹԻՒՆ

Թառք. . — Թօնընկէց, անձեւաբեր . — Կոփածոյ, տա-
շած՝ կոկած . — Մեծադղորդ, մեծաձայն . — Կապայ, վերա-
կու . — Ցյագ, կոււսուկուռ:

Հարցմանք. . — Ի՞նչ կը պարցն յայնժամ երկինը և երկիր .
— Ի՞նչու ձորեր լիճներու կը փիտուին . — Գետերն ի՞նչ կը լինին
— Ո՞ւր հաստատուած է կամուրջն . — Ո՞վ են վտանգեալք . —
Ի՞նչ կըսէ կոմնը . — Ի՞նչ կառաջարկէ . — Ո՞վ կ'ընդունի այս
առաջարկ . — կը յաջողի՞ց գեղջուկն ազստել սյդ տարաբաղդ-
ները . — Ի՞նչ կ'ըսէ կոմն, երբ գեղջուկն կ'ազատէ զանոնք :

Հերացք շարադրութեան . — Նուարդ . — Նուարդ մա-
տաշ աղջիկն ունէր փոքր եղբայր մը, Զարեհ անուն, զօր յոյժ
կը սիրեր . — Ամրան օր մը աղջիկն զնա լճակին մօտ կը տանի, եւ
պահ մը կ'թողու զնա անդ՝ վաղելու համար թիթեռնիկի մը ետե-
ւէն՝ զոր կ'ուզէր մանկիկն . — Այս կարճատեւ բացակայութեան՝
Զարեհ լժակը կ'իյնայ. Հեղձամահ կը լինի . — Նուարդ կը մոլեգ-
նի, եւ այն օրէն ի վեր միշտ կուգայ դիտել լճակն, այն տեղն՝
ուր եղբայրն ինկած էր :

ՕՉՈՅՑՅ ՓՀԱՅՑՅ

Մ Ա Ն Կ Տ Ի Ն

Թոյլ տուք մանկուոյդ գալ առ իս,
Հսաւ Յիսուս գրկաբաց,
Ոչ իրբեւ հայր զիւր որդիս՝
Այլ կը գրկէր իբր Աստուած.
Աստուած՝ որոյ որդիք են
Անմեղն և որին աղքատիկ,
Աստուած՝ որոյ սուրբ գրկէն
Կը բղիսի սէր երջանիկ.
Նորսա գիրկը դրախտ մ'է՝
Ուր իւր սէրն է մի աղքիւր՝
Որ պաղպաջուն կը հոսէ
Անբիծ հոգւոց մէջ անդորր։

(Գարուն եւ Աշուն)

ՏԻԳՐԱՆ Ս. ՄԵԹԵԱՆ

Ա Ռ Ա Ծ

Ցըկար բոյսեր բովէ բովլ
Են փորորկէ ապահով։

Յ. ՌԱԶԵՆ

ՃԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառեք . — Թոյլ տալ, բողուլ . — Պաղպաջուն, փայլուն .
— Անդորր, հանգիս .
Կրթութիւն . — Գիրկ . գրկաբաց . գրկալիր . գրկընդիմա-

ռըն . որբ, որբանոց . որբանամ . երջանիկ . երջանկաւէտ . եր-
ջանկութիւն . սէր . սիրակէզ . սիրատոչոր :

Քերացէք շարադրութեան . — Դարդոցին մէջ . — Ի՞նչ կը
խորհիք ուսանողի մը համար՝ որ կ'ըսէ , կուզեմնախ խաղալ , յե-
տոյ պիտի աշխատիմ . — Ի՞նչ կարելի է մոտածել աշակերտի մը հա-
մար՝ որոյ տետրակը դարձունելով՝ կը գանեմք անդ ճմռտկած թեր-
թեր, խառնակ գրեր, եւն . — Ի՞նչու կը նեղանայ աշակերտ
մը ուսուցչին նկատման՝ որ կը պարսաւէ զինք , երբ իւր պարտա-
կանութիւնը գէշ կատարած ըլլայ . — Ի՞նչ կը մոտածէք աշակեր-
տի մը համար՝ որ կը նախանձի ընկերակցին , որովհետեւ նա առա-
ջինն է դասարանին մէջ . — Ընկերակց մը կ'ուզէ ձենէ ձեր պատ-
րաստած համարը [devoiρ] զայն օրինակելու , պարտաւո՞ր եք տալ:

Ե Ր Կ Ի Ր Ե Ր Կ Ի Ր

Ինչո՞ւ համար այնչափ տխուր ու տժզոյն ես,
Փերտինանուտ : Անշուշտ գէշ լուրեր ինձ կը բերես :

— Տէր, ալ չէմ կրնար նաւաստիքը բռնել . թէ որ
ծովեզերքը չերեւնայ , վճարեալ է ամէն ինչ , վասն զի
ամենքը մէկ բերան արիսնդ կ'ուզեն :

Դեռ խօսքը բերանն էր , և ահա կատաղի ամբոխը
հասաւ : Ապստամբաց աղաղակը , խաղաղ նաւահան-
գըստին մէջ թափուող խոսվայոյդ ալեաց ձայնին կը
նմանէր : Մատնի՛չ , դաւաճան , կը գոչէին , ո՞ւր են
մեզի ըրած խոստմունքներդ : Ապատէ՛ զմեզ անօթու-
թենէ , հաց տուր մեզի որ ուտենք , և թէ որ չունիս ,
արիսնդ տուր որ իմենք :

Վսեմախոհ Քոլոմազս անոնց կատաղութեանը դիւ-
ցաղնական քաղցրութեամբ մը պատասխան տուաւ .

— Թէոր արեամբս կրնաք երջանիկ ըլլալ , ձե՛րն է
առէք , Բայց թողէք , կ'աղաչէմ , որ արեւուն իր նուի-

րական ճառագայթներովը արեւելքն սակեզօծելը մէկ մըն ալ տեսնեմ։ Թէոր վաղը ազատարար ախունք մը չերեւնայ, այն առեն ես ձեզմէ մահս պիտի խնդրեմ, բայց մինչեւ այն առեն նոյն ճամբուն հետեւցէք և վասահ եղիք յԱստուած։

Դիւցագին հանդարար ու անխուով կերպարանքովը նորին կը հանդարասին։

— Տէր, ըսածիդ պէս ըլլայ, կը կանչեն միաբերան, բայց թէ որ արեգակը առանց մեզի վրդութիւն ցուցընելու ելնէ, անոր լոյսը վերջին անդամ տեսած պիտի ըլլաս։

Եւ արեգակը հորիզոնէն վար կ'իջնար, վերջալոյսը դիշերուան աեղիք կուտար, և նաւապետին կուրծքը մնշուած չէր կրնար հանդիսատ շունչ առնուլ։

Նաւուն ողնափայտը լայնածաւալ ծովը կը պատռէր կ'անցնէր, ասաղերը մէկիկ մէկիկ կ'երեւային։ բայց, աւաշ, որ յուսոյ աստղը բնաւ չէր երեւնար. Երկիրն ու փրկութիւնը շատ հեռու էին։ Տիսուր գիշերն անքուն կ'անցնէր Քոլոմպոս, հեռադիտակը ձեռքը և աչուլներն անդարար արեւմուտք դարձուցած։

— Դէպի արեւմուտք, դէպի արեւմուտք թուիր, ո՞վ նաւդ իմ հաւատարիմ։ Դուն ես լուներուս և ակընկալութեանցս նպատակը.. օրհասական մտածմունքը ու սիրոս կ'ողջունեն զքեզ։

Բայց ի՞նչ ոտնաձայն է։

— Փերախնանտ, ի՞նչու աւելի տխուր ու դեղնածես, ի՞նչ լուր կը բերես։

— Տէր, բանդ լմացած է, ահա արեւը նուիրական ճառագայթներովը դրօշակիս լուսաւորեց։

— Հանդարար կեցիր, այս ճառագայթներն Աստուծոյ ձեռքին ելած են, որ մէկ բեւեռին միւսը կը հսկէ,

և որոնք որ իրենց յոյսը խոր վրած են՝ դիտէանոնց առջեւ վերջին ճամբան բանալ։ Մնաս բարով, բարեկամ, անդին ալ կը տեսնուինք։

Թուրելու շկահինը օդը կը թնդացնէր, չվթայք մէծաշառաչ կը պատրաստուէին. Քողմակոս անխոռով զինքն երկնքի ճամբորդութեան կը պատրաստէր, և ահա յանկարծ չորս կողմէն այս ցնծալից ճայնը միայն լսելի եղաւ.

— Երկիր, Երկիր,

Զոր ոչ ոք կրցեր էր գուշակել, և Քողմակոսի հանձարը համարձակեր էր յուսաւու, նորածագ արեւուն ճառագայթներովը լուսաւորուած կ'երեւնար. և նաւատիք այն մեծ մարդուն ոտքն ինկած՝ իրենց չնորհակալութեան պաղատախառն ճայներն առ ամենակարողն Աստուած կը բարձրացնէին։

(Մասնաց աղաւնի)

Ա Ռ Ա Ծ

Երէ պարտէդ ինչ որ ալ պատահելու ըլլայ։

ԾԱՆՈԹՊԱԹԻԱԽԱՆ

Բառեմ. — Տժոյն, գունաւ. — Վճարեալ, լինցած. — Ողնափայտ, նաւուն տակի գերանը. — Լայնածաւալ, ընդարձակ. — Փրկիրեախ, փրկիրալից բերնով. — Իղձ, վափավ. — Ակնկալուրիւն, յոյս. — Մեծաշառաչ, մեծ ալմուկով։

Գիւտ. — Գտնել նետենալ բաներու հականից. — Ներքին, ստորին, առաւել. խռովարար. անէծք. անկողմակալ. ներելի. անհամբեր. զգայուն. անօգուտ. ճիշդ. կանոնաւոր.

անփոփոխ . անողոք . սիալ . վարձատրել . ծնունդ . յոռի . անգործադրելի . ժպտիլ . հարստութիւն . նուազ . ժլատ . անաշոռ . անիրաւ . պաշտպան . ծանր . գտնեք . ամառ :

Ընթացք շարադրութեան . — Անձնանուիրութիւն . — Վահրամ (քառասունամեայ) , Տիգրան (քասնամեայ) երկուքն ալ հրամ , կաշխատէին լսաստակի մը վրայ . (նկարագրեցէք) . յանկարծ լսատակը կը տապայի եւ երկուքը կը մնան փայտի մը վրայ . սոսկալի տագնապ այս երկու գործաւորաց . Տիգրան իւր անձը կը նուիրէ վահրամ ազատելու . որ բնտանեաց հայր է . կարճ խօսակցութիւն . — Տիգրան գահավէժ իշխալով կը նահատակուի : Մեծարանք այս վեհութիւնորաց :

ՅԵՒՍՈՒՍ ՄԻջԱՅՆ

Թոյլ տուր թըրոչիմ հետոցլով վրայ ,
Մանկական ձեռնըդ մէկոի տար .
Զեմ ես ինչ որ , միտուն արդայ ,
կը կարծէ զիս միտքդ ապիկար :

Ես այն թիթռան կը նըմանիմ ,
Որ յայժ վստահ իւր պովոխմանց՝
Սիրէ խաղալ մէջ ծործորին
Շուրջ վարդերուն , այլ և մանկանց :

Կուղես բըսնել զիս , բայց ընդվայր ,
Բոց մը բըսնել դիւրին էր քեզ ,
Խոյս տամ ձեռքէդ ի խաղ ու ի պար ,
Յերկնից կուգամ , հոգի մ'եմ ես :

ԼԱՄԱՐԴԻՆ

Անմեղութիւնը հայելի մ'է՝ որ կը ցոլացունէ յիմբեան Ասուծոյ պատկերն :

ԸԱՆՕԹՈՒԹԻՒՆ
Բառք . — Հետք , ոտի հեան . — Ծործոր , ձոր . — Ընկվայր , պարապ տեղ . — Խոյս տալ , փախչիլ .
Քերականական կրութիւնք . — Ա և ո բառի վերջ տն մեար , այլ միշտ անձայն յիմ կը վերջաւորին . ինչպէս վերսոյեդեալ ոտանաւորին մէջ տղայ բառը . այնպէս կը լինէն նաև ծառայ , վկայ , երթայ , գշխոյ , և այլն բառեր : կը զարտուղին բայցերու հրամայականեր , գնա՛ , գողա՛ :

Ընթացք շարադրութեան . — Ֆիւրըն . — 1807/ն Ֆիւրըն Հովանեսի մէջ իջեցուց առաջին շոգենաւն : Այս մեծանուն հնարքին ձեռնարկը փորձուելէն առաջ յիմարութիւն նկատուածէր : Նորա յաջողութիւն եւունդագին ծափահարութեամբք ընդգունեցաւ յետպ ժողովրդեան կողմէ :

Սակայն ոչ ոք կը համարձակէր զանձն վտանգի ենթարկել այս հրաշալի շոգենաւը մանելով : Այս պահուն երբ շոգենաւը կը դառնալի ի Նիւ-Եօրբ , միայն տնցորդ մը ներիսյացաւ և վճարեց վեց տոլար իրբ նաւողչէք : Ֆիւրըն իւր այնքան ճգանց փիսարէն ոյս առաջին թշշակն ստանալով , փղձկեցաւ յարտասոււ :

Միացեալ Նահանգաց համար այս գիւտոյն անմիջական արդիւնքն :

ՎԵԼԱՇՈՒՔ ԿԱՂՆԻՆ

Ագարակին շէնքերին ոչինչ չեռի կը բարձրանայ հաստարմատ կաղնի մը . Երկու մարդ անոր քով են , մին աշխատաւորի զկեստով ի ձեռին ունի տապար մը , և դիւրին է զուշակել թէ մտադիր է կործանել ծառ-

ծը, միւսն՝ որ այն ինչ եկած է, կը խօսի նմա. զեռուէն նախազգաց ըլլալիքը և վաղեց. ի՞նչ կրնայ ըսել. ի՞նչ պիտի ըսէինք անոր տեղ: «Եղբայր, ի՞նչ է նպատակդ»: — «Պիտի կործանեմ այս կաղնին. արմատէն պիտի կորեմ հաստատուն գերաններ, միւղերէն պիտի հանեմ ատաղձներ և ստերն պիտի տան լաւ վառելափայտ: Մօտ է քաղաքը, և ծառէն պիտի արտադրեմ մեծ շահ մը»: — «Ճշմարիտ է ըսածդ, բայց չկայ բան մը՝ որ ստակէն աւելի գոհունակութիւն պատճառէ քեզ: Այս կաղնոյն ներքեւ նստիլ քաղզը էր մեր մեծ հարց, անդ կը խաղայինք մենք մանկունքս մեր մօր շուրջ. թոշունք կը ճռուողէին տերեւ ակոյտին մէջ, և մենք ուրախութեան աղաղակներ կ'արձակէինք անոր զօրաւոր արմատին շուրջ դառնալով. ընտանեկան հանդէմներու ժամանակ անոր ստերու հովանոյն ներքեւ կը խմբուէինք և անդ մասուոյն վրայ մեր համեստ տօներու սեղանն կը դնէինք: Կը յիշէ ո դու, երկար բացակայութենէ մը վերջ կ'երեւէր մեզ հեռուէն իբրեւ հինաւուրց բարեկամ, և իւր լայն միւղերն կարծես մեզ կուգային. նա իւր տեղն կը գրաւէ մեր լուագոյն յիշատակաց մէջ և պիտի խօսի մեզ նկատմամբ մեր ապագայ սերնդոց: Եթէ դու զայն ի գետին ձգես, ի՞նչ պիտի դնէս քու բացած լայնավեռեկ խորխորատիդ մէջ: Ամէն ոք քենէ պիտի խնդրէ կաղնին. գարնան զայն պիտի խնդրեն փոքրիկ թոշուններ՝ որք կը սիրէին անոր տերեւներն. ամրան՝ աշխատաւորներն, երբ արեգակը տաքցնէ այն միշտ պաղքարերն՝ ուր կը նստիին անոնք հանգստեան ժամուն անոր բարերար հովանոյն ներքեւ: Աշնան՝ մանկունք պիտի հառաջեն, այն կը պաշտպանէր իրենց խաղերը, և երբ ձիւնդ տեղայ, դաշտաց հիւրերը չպիտի գտնեն

ապաստան անոր դարաւոր արմատին փապաներուն մէջ: Թող որ տպրի նախնեաց կաղնին:

Ունկնդրին նայուածքէն կը մակարերեմ որ այն ծառը դատը շահած է. երկա՞ր կեանք վսեմարերձ կաղնոյն:

Թարգմ.

ՅՈՒՍՈՒՏԻԾՈՅ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Բաղդին անիւն անդադար կը դառնայ. ո՞վ կրնայ բսել իւրովի. ես այսօր գագաթնակէտը պիտի հասնիմ:

ԿՈՄՓԻԿԻՈՆ

ՅԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառ. — Այն ինչ, ոեն նոր. — Վառելափայտ, վառելու փայտ. — Արտադրեմ, հանեմ. — Տերեւակոյն, տերեւներ. — Հիմաւորց, հին. — Փապար, ծակ, խոռոշ:

Ճարցմանն. — Ի՞նչ ծառացութիւններ մտուցած է ծառը. — Ի՞նչ օգուտներ ունի ծառաշատ երկիր մը. — Ի՞նչ բանէ յառաջ կուգայ տենդը. — Ինչո՞ւ համար անտառներու մօտ բնակող մարդիկ սուող կը լինին. — (Որովհետեւ ծառերը կը տարրաղագրեն բնածիական թթուն (բնածուի և թթուածին). անոնք կը ծծեն բնածուի և դուրս կուտան թթուածին՝ որ կը մաքրէ երկրին օդը):

Ընթացք շարադրութեան. — Անտառ մը. նկարագրութիւն. — Մեծ վայելուչ են բնդարձակ անտառք՝ կազմուած բազում զանազան ծառերէ. (Ծուեցէք անոնցմէ մի քանին, և ցըցուցէք անոնց օգուտը). թոշունք, որք կը բնակին յանտառի, վայրի գաղանք՝ որոց բնակութիւն է անտառն, պտուղք՝ որք կը գտնուին անդ. աղքիւրք և լճակք. տեսարանք անտառի. փայ-

տահարթիւն . ածխագործութիւն . հունձք խողակոց , որոր
դութիւն սկիւռից , տուն անտառապահց : Օդտակարութիւն
անտառայ՝ մշակութեան և առողջութեան տեսակէտով :

ԱԾԽԱՆ ՏՈՎԻԿ

« Որո՞յ վրայ կուլաս , հովիկ ,
« Ինչո՞ւ ցաւիս , գաղրէ հերփէ » :
— « Մէկուն վըրայ , բընաւ չեմ լար .
« Ես ոչ մէկուն չեմ մեղքընար » :
— « Ինչո՞ւ համար սուգ տրտմութիւն
« Ուրոյս վըրայ կը բերես դուն ,
« Ուր երգելով եղերական ,
« Տըխուր ատեն կէս դիշերուան » :
— « Ինչո՞ւ համար . — « Օր պիտի գայ ,
« Գերեզմանիդ քարին վըրայ ,
« Գիշեր ատեն՝ դարձեալ այսպէս ,
« Լալ ողբախու պիտի գամ ես » :


Թարգմ.

Հ. Ք. ՔՈՒՇԵՐԵԱՅ

ԸՆՏԻՐ ՄՏՍՄՄՈՒՆՔ
Քանի երկար է անսահման ժամանակաց զիւերն
կենաց կարն երազին բաղդասութեամբ .


ԺԱՌԱՅԻՒԹՅՈՒՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԱՂՋԱՑ

Յիւսուման մըանաբար



որո ո՞յ պահան . և աշխատանոց որո՞յ . և անողամերթ
մարզոց ո՞յ պահան . ունենալու անոնթիւնոց մասն . և ու ո՞յ
— ողիստ չեր ի ունութ . օնութ տեսն ո՞յ ծանուն , մշքին
ուն զատք ո՞նք ո՞յ օնուն անութ ո՞յ անութ , սանուանք . և
, ո՞յ օնք ո՞յ զամանական անութ ո՞յ անութ , ո՞յ օնք ո՞յ անութ
զի ցածանի շրջանին գրու գուն . և ո՞յ զամանական անութ ո՞յ անութ
միշտին . ին մասնաւա որու մաւուն ո՞յ զու զամ ո՞յ մէջէն
զու . և — ինուշ նոցոր ո՞յ զամանական ո՞յ զամանք զու ո՞յ
. և — մէջնուն ո՞յ զամանք ո՞յ ո՞յ զամանք ո՞յ զամանք
— զամուն զամանք մասն անութ ո՞յ անութ , զամանականութ
առք ո՞յ պահ ո՞յ պահ . ին մասնաւա մաս , մասնամասք . և
ուն ո՞յ զամանական . մասն ո՞յ ուղարք մասն

Քաղաքացի մանուկն :



Տեղեկութիւնն: — Մայրը գործաւորուհի է . յաճախ կը տրը . նի նա մի քանի դրամիներ աւելի շահէլու համար իւր կարդոսն տժգյոյն , տիեզծ կը ծծէ ծծակին (hiberon) գէշ կաթը . — 2. Քառամեայ , դպրոց կը դրուի . վասն զի եթէ դուրսը իսազար , պիտի ձգմուէր . Արդէն իւր օրունքները տձեւ են , իիստ տկար զինք կրկիռ համար . — 3. ի՞նչպէս կուգէք որ ունենայ ևս կերպարանք մը : — 4. Հինգ հոգի միեւնոյն սենեակը կը ննջեն , նա իւր օրը կ'անցունէ չորս պատերուն մէջ . երեկոյին , նա իւր դասուրը կը սորփի ճրագի մը դողդոջ լոյսով : — 5. իւր տկար աչքերն արդէն բժշկի մը ինսակը կը հայցեն : — 6. Հնգետոսանամեայ , կարդու կը ծխէ ևս կուզէ մարդ ըլլալ : — 7. Քսանամենի , այն հասակին մէջ , երբ այլք լաւ դիրք մը կունենան , կարդու կը մեռնի . թոքախտաւոր է նա :

ԹԱՆՅՕԹՈՒԹԻՒՆ

Բառէ . — Եղերական , ողբերգական մար մար մար .
Գիւտ . — Գտնել հետեւալ բառերու հականիք . — Լալ .
յաւիւ . գագրիւ . տրտութիւն . կէս գիշեր . գիշեր . գալ .
Ընթացք շարադրութեան . — Գեղեցիկ զիւեր մը նոր Աւ-
լարիի անտպատաց մէջ . — Լուսինը կը փայլէր հորիզոնին վրայ :
Տակու առ տոկաւ յերկինս կը բարձրանայ , ուր կը պարզին թե-
թեւ ամպէր : Նորա յստակութիւն կը ցոլսնայ գետոյն ալեաց
մէջ և հեռուն կ'երկարի արօտներու վրայ :
Բնութիւնն հանդարտիկ և լուին է . մերթ ընդ մերթ կը լուս
ունին նիտկարայի ջրվէմին խուլ մանչիւններն :
Մեղամաղձիկ մեծութիւն այս պատկերին :

— 308 —

ԲԱՆՔ ԱՋ ՄԱՆՈՒԿՆ

Այնչափ խաղացիր որ ահա յոդներ ես , որդեակ' :
Բոլոր օրն ի՞նչ ըրփր : Աշխարհի ամէն արարածներ ի-
րենց պարտքը պաշտօնը կատարած են . ահա թոչուն-
ներ կը լուեն . մեղուք ոչ ևս կը բզզան . արեւու լոյսը
տակաւ խոյս կուտայ ծառոց ծառերէն ու աշոարա-
տակաւ խոյս կուտայ ծառոց ծառերէն . աղաւնին իւր բունիկն ապասաներ
կաց գագամէն . աղաւնին իւր բունիկն ապասաներ
է . ահա մութել պատեց : Դուն քու օրդ ի՞նչպէս ան-
ցուցիր , որդեակ' :

Երբ մօրդ քով երթաս , ի՞նչ պիտի պատասխանես :
Առաւատուն ըրած խոստումներդ կատարեցիր թէ ոչ :
Ուրիշի պակասութեան ներեցիր , ողորմեցա՞ր տնանկին ,
ընկերացդ հետ սիրով և քաղցրութեամբ վարուեցա՞ր :

Ահ , կուգայ ուրիշ երեկոյ մի եւս . այդ երկայն
օրն ալ երեկոյ կը լինի . այն ատենն իսկ յոդնած կը
լինիս , բայց ոչ խաղալէն : Այն ատենն եւս մարմինդ

կը թուլնայ, աչուրներդ կը գոյուին, և դու կ'ըսես
թէ «ինչո՞ւ այսպէս ուշ կը մթըննայ, կ'ուղեմ ննջել» :
— իցիւ այն օրն ալ այս օրուան պէս ամրիծ լինիս,
և խողձդ մաքուր : ի՞նչ պիտի պատասխանես անցու-
ցած կենացդ համար : Առատածե՞նն էիր արդեօք, սիր-
ուրդ գթ՞ած էր, խիղձդ անարատ : — Եթէ ասոնք մը-
տածես, որդեակ, յոդնութիւնդ կ'անցնի, և այս մը-
տածութեան ճաշակը կ'առնուս, այն ատեն կը տես-
նես որ մութը կը պատէ, բայց դուն չես վախնար, և
այս օրուան պէս հանգիստ քուն կը վայելես մօրդ
դիրկը :

(Բազմավիշ)

Մ Ա Խ Ո Յ Ս Ո Յ Թ Ա Ր Ա Ր

Մարդ կ'առաջադրէ եւ Աստուած կը յաջողէ :

Օ Ս Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Խ Ն

Բառք . — Ապաստանի, ապաւինել . — Տնանի, աղքաս .
Քնիքց շարադրութեան . — Աստուածսիրութիւն եւ րի-
կերսիրութիւն . — Օր մը բարունին Յովել և իւր վեց եղբարք
տաճարին գտաթին մէջ կը ճառէին հանութենոն առջեւ ժողո-
վրդեան երկրաւոր Հանգիստն ապահովելու միջոցներուն վրայ :
Անոնցմէ իւրաքանչիւրն կարգաւ տարբեր կարծիք մը յայտնեց :
Երբ Յովել խօսեցաւ, մատաղ մանուկ մը պոռաց . օնա միայն
հանգիստ կը վայելէ՝ որ կը սիրէ զլուստուած և զիւր ընկերն,
Ծերունիք զարմացմամբ մանկան մ'ոյս խօսքն ընդունեցին :

Ա Ղ Բ Ի Կ Ր Ն Ե Ւ Շ Ո Վ Հ

կաթիլ կաթիլ ի ծովի ահեղ
կաթէր մի ջուր աղբերահոս,
երբ Ովկիանն անդնդահեղ
Զայնիւ՝ գոչեց . « ի՞նչ կ'ուղես հոս » :

« Մըրրիկն և շանթն եմ բոցակէզ,

« Անեզր եմ ես երկնից նըման,

« Է՛հ, կըրնա՞մ պէտք ունենալ քեզ,

« Մինչ փոքր ես դու, ես՝ անսահման » :

Ովկէանին՝ աղբիւրն ըստւ .

« Անշուք, անձայն Էմ, յիրաւի,

« Այլ կը բերեմ քեզ, ծո՛վ անդաւ,

« Մի կաթիլ ջուր՝ որ կը խմուի . . . » :

(Ճողեր ու ցողեր)

Վ. ՀԻՒԿՈ

Թարգմ. ԱՂԵՔ. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Ընդհանրապէս բախսը նախաւառը չէ պարկեւս
մարդոց համար . դրիգրադէկ ալիք կը բարձրանան մա-
կերեւութին վրայ, եւ մարգարիտէ կը մնան խորը .

ՍԹԱՆԻՍԼԱՍ

❖❖❖

Օ Ս Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Խ Ն

Հարցմունք . — Զրոց հոսանք . — Ո՞վ կը կազմէ ջուրց հո-
սանքը . — Ուստի կուգան անձրեւք . — ի՞նչպէս անձրեւք կը

կազմեն ջուրց հոսանք . — Անձեւք երկրիս մակերեւութիւն վրայ կը միանան ջուրց հոսանց հետ . — Ո՞ւստի գետք եւ գետակք կը բարձրանան կամ կը խոնարհին . — Ի՞նչու համար մեծամեծ գետոց և գետակաց աղբիւրը բարձրաբերձ լեռանց վրայ է : Ընթացք շարադրաւրեան . — Մողէս ու կրիայն (առողի)
 — « Տարաբախտ կիֆայ . . . » — Գոչք մի մողէզ,
 — « Խնջու տարաբախտ . . . » — « Զի ըստիպուած ես ,
 Ուր որ երթաւ տունդ հո՛ն տանիւ քեզ հետ » :
 — « Է՛՛ , բեռն օգտակար թեթեւ է յաւետ » :

Ա. Գ. Փ.

Վ. Ա. Պ. Գ. Ա. Յ. Լ. Ե. Ռ. Ն.

Վարագայ լեռը՝ որ լի է զանալան ծաղիկներով ,
 պաղորակ աղբիւրներով , էրկներով և ոչխարաց հօտերով , իւր մէկ կողին վրայ ունի թէփէ զէօլը , և
 անոր շուրջը Սուլիան Եալլասին , արքայական հովանոց , տեղի դրախտանման : Հօն է Ոսկիբակ գեղը :
 Վարագայ լեռան գլուխն է Հոկիսիմեանց խաչին պահուած ու յայտնուած կարմիր ապառաժը , Գալիխա
 անուամբ . այն տեղին պարզ կ'երեւի Մասիսը , և ուրիշ շատ տեղեր : Ճակատին վրայ է վերին Վարագը կիսամուլ , և այս փլածի շուրջը առուակներ , վտակներ ,
 մարգեր , դապարիք՝ հողին շատ , Քրիստոսի աղբիւրը ,
 Կաթնաղբիւր , Խաչաղբիւր , անմահացուցիչ ջրեր : Մէկ կողմը ձորամէջ և զառիվայր կուգայ յեօթնագմբէթ-
 տաճարն Վարագայ . միւս կողմը սուրբ Գրիգորի աղօթատեղին և վանքը , նոյնպէս ձորամէջ պրակներով զարդարուն . Զառնապատայ ջուրը խիջալով լեռնէն ի վայր կը հոսէ , և այս տեղերը Ս . Գրիգորն ու Վարագ , գառն ու մաքին , հաւքն ու ճետը , կովն ու հոր-

թիկ , ուխտաւորն ու տարփաւորը , մերն ու մածուն ,
 եղն ու կարագ , Ժամն ու պատարագ ամէնը տեղի
 կունենան գարնան կենաց օրերուն մէջ , բարեպաշտ-
 ներուն և վայելչափաց միանգամայն ցանկալի և գո-
 հացուցիչ : Այս լեռը՝ բոլոր Վանեցւոց ինչպէս զրօսա-
 նաց , նոյնպէս և բանասաւեղծական երգասացութեանց
 առարկան և նիւթն է : Ունի նա իւր հին պատմու-
 թիւնը : Ունի հրապարիչ և աղղեցիկ բնութիւն վայել-
 չական , որոյ քարերն անդամ ձայն և բարբառ ունին :
 Սերովէից , մուսայից , քաջաց և փարելեաց վայր ճանչ-
 ցուած է նա : Շուշանիկի Շուշանց գեղը և անոր գե-
 րեզմանը , զոր Շուշան խաթունի գերեզման կ'անուա-
 նեն ցայսօր , Ապարանջան աղբիւրը , Պայտա-
 գուստը Շուշանիկին օժիտը , Պղնձէ քաղաքը Վարագայ
 դաշտին մէջ , և յամենայն կողմանց չէնքով , նշանաւոր
 անուններով պրափակուած այս լեռան , ամէն կողմէն
 իրեն կը նայուի , ու ինքը կենսատու օդ . և առատ ջուր
 կը բաշխէ երկրին :

Գ. Եղիս. ՄՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Ժամանակի , աշխատուրեան եւ նամբերուրեան ըլ-
 եորիիւ բրենեոյ տերեւն սնդուս կը դաւնայ :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառզբոյկ . — Անուանի ծաղկանց եւ բուսոց . — Ազա-
 նիք . ամպար . անանաս . անուածաղիկ . գաղձն . գնդածաղիկ .

գորդինայ . գլխնածաղիկ . ելակ . եղիձ . եղբեւանի . երիցուկ .
զոպայ . զուիրակ . թանթրութիւնի . թաւրնջակ . թթուկիչ . ինկու-
նի . ծոթոր . կակաջ . հարսնամատն . հինածաղիկ . հըանունկ .
մանիշակ . մատուտակ . մեկն . մոլեխինդ . մոլոշ . յակինթ .
նարդէս . նարդոս . շահպուրակ . շուշան . ոլէանդր . վարդ .
տուղտ . փեղենայ . քրիգեմ . քրքում . օշինտր . օշան :

Ընթացք շարադրութեան . — Բացատել հետեւեալ առած-
ները . — Աղքատութիւնը մոլութիւն չէ . — Մաքութիւնը կէս
առաքինութիւն մ'է . — Մեծ աղէտներու համար մեծ դարման-
ներ պէտք են . — Կատուին բացակայութեան ժամանակ , մու-
կոր կը պարեն . — Ժանդը շուտով կը մաշեցնէ քան աշխատու-
թիւնը : — Գոհունակութիւնը գերազանց է քան զնոխութիւն :

Օ Ր Օ Ր Մ Ա Ն Ն Ի Կ Ի Ւ

(Մայրն երգէ)

Բունն է եկեր իմ Մաննիկս ,
Առնեմ օրրեմ զայն յիմ գրկիս ,
Պատմեմ վէպեր աղաւնիկս ,
Մինչեւ տանի քունն իմ զաւկիս :

Աստղեր ծագեր , ատենն է ուշ ,
Ալ ծանրացեր աչքն իւր մեղոյε ,
Երգեր բաեմ անոյշ անոյշ ,
Թող քընանայ հոգիս մուշ մուշ :

Հանգչի գլխիկն իւր ոսկեհեր ,
Կուրծքիս վրայ տրփուն յիւր սէր ,
Շոյեմ սամոյը հնիոյը մաղեր ,
Թող ոսկեղէն գան երազներ :

Օրօր օրօր Մաննիկս աղուոր ,
Քու ծընողաց թագ վառաւոր ,
Օրօր օրօր , սրախ հատոր ,
Հայր երկնաւոր տայ քեզ շատ օր :

Ննջէ ծաղիկն ի ծրղօտին ,
Ննջեն վորբիկ գառներն հօտին ,
Գլուխն իր թեւին տակ յիւր բունին
Ննջէ հեղիկ և աղաւնին :

Նիրհէ՛ դուն ալ , ի՞մս թռչուն ,
Համբուրիս տակ տանի՛ քո քուն .
Հանդշա խաղաղ մինչեւ առտուն ,
Սոխակաց հետ զարթնուս և դուն :

Ո. Յ. Պէրուբեան

Կ Ե Պ Ե Ց Ի Կ Բ Ա Ն Ք

Մեր ծնողն են մեր լաւագոյն բարեկամներն :

Ծ Ա Ն Չ Օ Թ Ա Խ Թ Ի Ւ

Բառք . — Մեղոյշ , անուշաչուի . — Ոսկեհեր , ոսկեզրին
մազով . — Տրոյուն , բարախող . — Քենոյշ , փափկիկ :

Հարցմունք . — Ի՞նչպէս է Մաննիկ . — Մայրն ի՞նչ կ'եր-
գէ . — Մանկիկ ի՞նչ կ'ընէ . — Ի՞նչ կը մաղթէ մայրն . —
Մայրն ի՞նչ բանի կը յորդորէ զիւր գսարիկ , Ե՞րբ պիտի արթննայ
Մաննիկ :

Ընթացք շարադրութեան . — Ծերունի ձկնորսը . — Զեկ-
նորս մը տեսաւ . մրկի մէջ իւր որդւոյն կորսութիլը . թշուառ

Հայրը վշտէն խենթեցաւ : Այնուհետեւ ամէն օր իւր նաւակով կ'բրթար հեռուն ծովուն մէջ , և իւր որդին կը կոչէր : Ի դարձին կ'ըսէր նո . «Վազը աւելի հեռուն պիտի երթամ . որդիս ինձ չլսեց » :

Ա Ն Ն Ա Ե Ւ Ս Ա Խ Ո Վ Մ Ի Թ

Իսրայելի երկրին մէջ , թամիոր լեբան ստորոտն այրի կին մի Աննա անուամբ կը բնակէր իւր միակ աղջըրկան հետ՝ որ կը կոչուէր Սալովմիթ : Նոքա շատ աղքատ էին , իրենց բնակած լորնիրն փոքր էր , բայց իրենց սիրան ուրախ և զուտրթէր , և իրենց օրերն կը սահէին հեշտորէն , որովհետեւ բարեպաշտ էին : Աննա կը կրթէր զիւր աղջիկ ի բարին , կ'ուսուցանէր Սալովմիթի թէ Սստուած ինչպէս երկրէն յառաջ բերած է տունկերն , կը ծաւալէ իւր ցօլն անոնց վրայ , կը ծագէ իւր արեգակն ամէն արարածոց վրայ , թէ ինչպէս ամէն օր կուտայ մարդուն այնքան բարիք ; Մանաւանդ կը պատմէր անոր՝ Ս . Գրքէն պատմութիւններ և առածներ , և երբ այս բարի մայրն կը խօսէր այսպէս , կը փղձիւր յարտասուս : Այն ատեն Սալովմիթ կ'ըսէր իւր մօրը . «Ո՞հ , կուլա՛ս : Բայց մայրը ժատելով կը պատասխանէր . «Ո՞հ , որդեակ իմ , իւր բարութիւնն և սէրն այնքան մեծ էն , որ մարդկային սիրտ մի չլրնար գանոնք հասկնալ » : Այսպէս յաճախի միասին կը խօսէին նոքա , և իրենց զործքեր իրենց խօսից համաձայն էին : Աստուած կ'օրհնէ զանոնք , և իրենց փոքրիկ պարտէզը յառաջ կը բերէր ամէն տեսակ պըտուլ , նոյնալէս և ծառեր՝ որք խրճիթը կը չըշատա-

տէին և կը բարձրանային տանիքէն վեր , այնալէս որ կիմային գեռ եւս տալ անոնցմէ այլոց , և իրենց աւելորդէն միսիթարել հիւանդներն և տնանկները : Աննա կ'ըսէր այն ատեն . «Սալովմիթ , քաղցր է աւելի տալ քան առնուլ : Ո՞հ , որքան երջանիկ եմք մեք , որ մեզ թոյլ տրուած է նուիրել մեր դրամն , և թէ ոչ ոք մենէ արհամարհանօք երես կը դարձնէ » :

Այսպէս երջանիկ և զուտրթէ կ'ապրէին իրենց խաղաղ խրճին մէջ , գեղեցկացնելով զայն իրենց մեղրով , և մշադիւր մշակելով իրենց փոքրիկ պարտէդ :

Եւ ահա ժամանակաւ մի ճարակեցաւ այն երկրին մէջ : Աննա այդ հիւանդութեամբ վարակիցաւ , և Սալովմիթ նորա աղջիկն հիւանդացաւ նոյնպէս մտաշոգութեան և անձկութեան պատճառաւ :

Այն ատեն մայրն զգաց թէ պիտի մեռնէր , և ըստ Սալովմիթի զուտրթաղէմ և բաղցրաւուրբն . «Ալքելի՛ որդեակ , ժամա հասած է . բայց արիացի՛ , սփոփուէ՛ . հայրն՝ որ յերկինս՝ պիտի խնամէ զքեզ» : Աւելի չխօսեցաւ , որովհետեւ ողեսպառ էր :

Սալովմիթ արտասուեց իւր սրափ խորին . ծունը դրաւ , ձեռներն յերկինս բարձրացուց և այսպէս աղօթեց . «Հա՛յր սիրեցեալ , որ յերկինս ես , պարգեւէ ինձ բարի մայրս , միակ նեցուկս յաշխարհի : Ի՞նչպէս պիտի կրնամ աշխարհի վրայ միայնակ մնալը » :

Այսպէս աղօթեց Սալովմիթ , և հրեշտակը անմեղ դութեան աղօթքը յերկինս տարին : Այն ատեն արշալոյսը ելաւ , ծագեցաւ արփին , և նորածաղ օրուան լոյսը տակաւ տարածուեցաւ սենեկին մէջ : Սալովմիթ կ'ողջազուրէր զիւր մայր և կ'ուզէր զայն տաքցնել : Այլ ահա մահու հրեշտակը մօտեցաւ առաւօտուլ . լուսոյն ոսկեցող ճաճանչով . նա երկութին ալ մօտեցաւ ,

մեղմիւ անոնց հոգիներն առաւ, և Աննա ու Սալով-
միթ արեգական նորանցոյլ փայլով չուեցին դէպի դե-
ղեցկագոյն աշխարհ մի:

(Թարգմ.) ՔՐՈՒՄՍԽԵԾ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔԻ ԱՐԱՐԱԿ

Մարդ ոչ հրետակ է եւ ոչ անասուն եւ քուա-
ռուրիւնը հրետակ ըլլալ ուզողը անասուն կ'ընէ:

ՓԱՍՏԱԼ

ԺԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառք. — Խրճիր, հիւղ (Քուլք) . — Փղձկիլ, սիրով ել-
ել. . — Մաղիս, սիրով. . — Վարակիլ, բռնուիլ (հիւանդու-
րեամբ). . — Քաղցրաշուրքն, քաղցրաքարքառ. . — Ողեսպառ,
տունչը հատած. . — Նեցուկ, օգնական. . — Արդի, արեգակ. . —
Ողջագուրել, գրկել, պազել. . — Չուել, նամբորդել.

Կրրուրիւն. . — Աճանց եւ բարդ բառերու վերածել նե-
տեւելաներն, . — Եղայոր. . Ճնողք. . կեանք. . զգալ. . շուրժն. . ա-
ղօթք. . չքնար. . մանուկ. . սէր. . խօսիլ. . ծագիլ. . լսու. . նշոյլ.
արտասուք. . սիրտ. . մահ. . հիւանդ. . զուարթ. . Ֆիծալ. . մօտ. . ոս-
կի. . մեղմ. . հօգի. . աշխարհ. . դեղեցիկ. . որդի. . արի. . երկիր. .
ախտ. . ձեռք. . բանիլ. . արեգ. . երկինք. . ամ. . անձուկ :

Ընթացք շարադրութեան. . — Ընտանեաց հրետակներ. . —
Ո՛քան սրտնեղիւ առանց արեւու օրն, ո՛քան անհրապար ա-
ռանց ծաղկի պարտէզը, ո՛քան թափուր տունն առանց ման-
կան, և ո՛քան տիսուր ընտանեկան յարկն առանց մատադ աղ-
ջըկան, Աղջիկն առանց զուարթութիւն կը բերէ . — Եթէ մայրն հի-
ւանդանայ, աղջիկն կ'ատանձնէ առանց հոգերն, կը դարմանէ ըլլ-
մայրն, կը սփոփէ զնա : Զմբան գիշերներն նա վէպեր կը պատմէ :

և կամ աշխոյժ երգեր կ'երգէ . վերջապէս այնպիսի քաղցրութիւն-
ներ ունի, որովք իրաւամբ կը կոչուի ընտանեաց հրեշտակն :

մամիւնայի քաշու անուն բայց ան ո՞ւ »

: մայրակ մայրակ դպրուածան յուն »

տուաշոյի բոց գեղարդի ո՞ւ »

ՀՐԵՇՏԱԿ ԵՒ ՄԱՆՈՒԿ

պիտու ոչ մէ յանձն զազան և Հրեշտակ մի լոյս երեսով այլ

Որորոցի մ' մոնարհած քով, ունի ան

կարծես՝ իրեն դէմք կը տեսնար, ուն

իրը յառուակի ջինջ և պայծառ :

« Միրուն մանկիկ, ինձ նման են, մի

կ'ասէր, «Արի', ե'կ ետեւէս .

« Զէ՛ արժանի երկիրս քեզի,

« Մէկտեղ լինմէր, երնէ՛կ մեզի :

« Հոս բերկրութիւն չիք կատարեալ,

« Հաճոյք՝ հոգւոյն կուտան մրայլ.

« Զուարթ ձայնին խարն յաւոց վաճի,

« Եւ հեշտութեան՝ դասն հառաջանք :

« Հանդէսք տօնից են ահալի,

« Պայծառ խալաղ չըկայ օր մի,

« Փոթորկախառըն ևս մըլըրկէ

« Վաղուան օրըն ևս ազատ չէ :

« Մէ՛զք, պիտի գան վիշտք ահարկու,

« Զամիխծ ձակատըդ խառվելու,

« Դաւնակրսկիծ աղի արցունք,

« Պի մթագնեն կապոյտ աշխունք :

« Ո՛չ, ո՛չ աղամ անարդել մեղլ,

« Թռչինք, երթանք մենք միատեղ .

« Քոյն վերայ Երկինք դըթաց,

« Կանցնես օրերըդ անկասկած :

« Քեզի համար և ոչ մէկուն դժբահ նաք և
« Զգեստք սպոյ գոյն թող չառնուն .

« Թո ծընընդեանդ , մահուդ վայրկեան
« Թող անտարբեր լիմին մարդկան :

« Թո սիրելիք՝ խոց վըշտանար
« Թող չկանդնեն քեզ խաշաքար .

« Մաքուր , անմեղ են քո տարիք
« Եւ յետին օրդ շատ գեղեցիկ»:

Եւ թօթուելով ձերմակ թեւեր սուր
Խօսքը կըտրեց , թըռաւ ի վեր ,
Դէպի յերկնց սուրբ կայարան .
Խեղմ մայր , որդիդ , աւար մահուան :

(Որպուլ)

Թարգմ. Հ. Ք. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

Ա Ռ Ա Ծ

Ձի՞ն բան Զի՞նչ թանկագին կրառք .
Քանի զամանական գին :

Ա Ռ Ա Ծ
Ձի՞ն բան Զի՞նչ թանկագին կրառք .
Քանի զամանական գին :

Թառք . — Մոայլ , մօււ , մուր . — Վաճկ , ձայն . —
Դառնակալիծ , չարչար կալծնող . — Վշտանար , տրմական .
Գիւտ . — Գտնել հետեւեալ բաներու հականիւմ . — Հրեշ-
տակ . լցու . խոնարհել . ջնջ . երանի . մույլ . վիշտ . ամբիծ .
անկասած . սուգ . ծնունդ . կանդնել . գեղեցիկ . եօսիլ . խեղմ .
գդայուն . համայ . գուգակ . գուգակ . գուգակ .

Ընթացք շարադրաւեան . — Հարցումն մանկան . —
Ի՞նչ բան վաղանցիկ է . գեղուն , հողմն , աստղն , ամպն , ծի-

ժա՞ռն , կայծա՞կն , հեղե՞ղն , քամի՞ն . մասման Որդեակիմ , թող
տպագայն չուսուցանէ քեզ այս քաղցր և միանդամայն դաշն
գիտութիւնն . ամենէն վաղանցիկ երջանիկ օրեն են մաս նաք
ուուզ սրուզո նի մազրմ բոլո դուզուց սրա յան յան
և զմբայի խման պրաւանդ այս բուժ նի մ զմբ
տայի ըստ դուզր սրա յանան , զմբ նմ զմբայրաց
յանան . ԴԱՐՁ ՊԱՆԴԻՍԻՆ ի ՏՈՒՆ իիթան իոյայի
սրայուն զու սրայի ույզպարտն և ոչ ապարան սրա
ԱՀա մայրս կուգայ : Մրափ թնդումէն կականա-
բարձ կուլայ , և թեւերը բացած կը թոփ յիս համե-
լու , զիս գրկելու , կրծոց վրայ պրկելու և համրուրե-
լու . . . Երթամ ձեռքը պագնեմ , ետեւէն եկողներն
ալ եղարքս են . և այն երամով թովացող կանոն-
գլուզները եղարքս զաւակներն են :

Թո՞ղ : Ներէ ինձի վայրկեան մը ծնողական և ըն-
տանեկան երանութիւնս վայելեմ , բարեկամ : Ահ ,
բաւակա՞ն շատ միջոց եղաւ . կարօտի և անձկութեան
կրակը սիրոս կը լափէ . . . միքանի պուտ արտաւնք ալ
իմ աչերէս . . . թող կաթին . . . որ հովանայ հոգիս :

Յո՞ւշ , առհասարակ պանդուխտները . . . Յո՞ւշ հե-
ռացելոց և մնացելոց սրտի վիճակը , մորմոքումն ու
լացը :

Ես , թէպէտ ամենուրեք մարդասիրաբար ու պատ-
ուսակարար հանդիսա գտած եմ , այլ սակայն չէի
կրնար մունալ ոչ մեր փողոցի ծառն ու ծիւլ , ոչ ջու-
րըն ու հող , ոչ ողոն ու հով , ոչ ծուռն ու խաղող ,
ոչ տանձն ու խնձոր , ոչ ծիրանն ու սալոր , ոչ աղ-
րիւրն ու ջրհոր , ոչ գաշտն , ոչ սար և ոչ ձոր : Երբ
ուտէի հաց ու կեր , կը յիշէի մօրս եփածները , երբ
ի պարտէկ և ի բուրաստան մը հրաւիրուէի , կը յափրչ-
տակուէի հոս : Զկրցի երրէք գոհ ընել դիս , և մասնայ

տալ սրախա ու մաքիս այս հողաշն անչուք իրմիթը ;
որ իմ հայրենական տունն էս յորում ես առաջին ան-
գամ աչերս բացած և արեւ տեսած եմ : Չկրցի մոռ-
նալ տալ այս շուքերը , որոց ներքեւ իմ օրօրոց օրոր-
ուեր և իմ ծնող մօրա սրապուղիս ձայնով խաղեր և
դարդարներ եմ լսեր , մոռնալ այս ձղերը , որոց վրայ
ելլերով ձեռքքս միրգեր եմ քաղեր և կերեր , մոռնալ
այս դալարաւէտ և ծաղկաբոլր վայրը , ուր ծնողաց,
եղարցու , և հիւրերու ու ընկերաց հետ նստած հաց
կերեր , ծաղիկ փնջեր , մանկան խաղեր ու զուարձու-
թիւններ անցուցած ենք :

Ո՞ մանկական երանաւէտ օրեր և ժամեր . այսօր
ձեզ կը հանդիպիմ վերստին , և շատ դիւրութեամբ
մէկն կը մոռնամ իմ տեսած սրանչելի շնչեր , պա-
լատներ , պարտէզներ , ջրեր , ճոխութիւնք և վայել-
չութիւնք պայծառ մեծամեծ քաղաքաց , որք իրենց
ամէն պերճութեամբ և զբեղութեամբ չկրցան մուցնել
տալ զձեզ ինձ . այլ յաւէտ առ ձեզ կը դանուիմ յա-
փշտակեալ :

Եղան թերեւս ծնողքիս աւելի խնամածուք ինձ ,
եղան եղբայրներէս ու մանկական ընկերներէս առա-
ւել սիրողք և մտերիսք ինձ . այլ չեղաւ հնար որ միե-
նոյն յարգանք ու համակրանք գրաւէին , ինչպէս այս
պառաւ մայրս , այս հասարակ մարդ երեւցած ընկեր-
քըն և եղբարքս :


Գ. ԵՊԻՍ. ՄՐՈՒԱԶՏԵԱՆՑ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Լաւ բան է ծիծաղին , եւ երէ շիւղ մը կրնայ խըս-
դութել մարդ մը , երջանկուրեան գործի մ'է այն : Անա-

ԸԱ.ՐԱ.Դ.ՐՈՒԹ.Ի.Խ.Ն.Ք ՊԱ.ՏԱ.ԵՐԱ.Հ

Տիրայր , բարի գործաւորն :



Տիղեկուրինեն . — Տիրայր տասներեք տարու՝ կահագործի (սողրամանը) աշակերտ է . — 2. Տասնեւութ տարեկան եղած
ատեն լաւ գործաւոր է . իւր վարպետը նախամեծար կը սեպէ
խրկել զանի իւրյաճախորդաց : — 3. Ամումացած է . կիւրակէ
է . կը կարծէք որ իւր ժամանակը տան մէջ անցունէ , ո՛չ —
Ժուռ կուգայ իրեններուն հետ : — 4. Խնայողական արկղի հին-
աւուրց պաշտօնեայն զանի կը ճանչէ . վասն զի , ամէն ամիս ,
անոր գալը կը տեսնէ նա : — 5. Տիրայր ինքն իր գլխուն կը գոր-
ծէ : — 6. իւր գործերը յուսալից են :

ԱՊՈՒԱԿԻՐ ԽԵՎԱԳԻՆԱՌԱՅԱՅ

ԹՈՒԱՅՏԱՐ ՁԱՎ ։ ՊՐՈՒՑ



Ենակը շնորհ եւստու զիւնդն ։ Ալ ուստավ իմ թու ։
Ենակը մաքնէու ի առաջնու ։ Հայած ապա առ ապա ու ապա առ ապա օժանը ։
Ենակը առ ապա առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։
Ենակը առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։
Ենակը առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։
Ենակը առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։
Ենակը առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։
Ենակը առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։
Ենակը առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։
Ենակը առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։
Ենակը առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։
Ենակը առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։
Ենակը առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։
Ենակը առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։
Ենակը առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։
Ենակը առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։ Հայած առ ապա օժանը ։

ՍՈՒՅԵԿ կարող են լալ ԵՐԵԿ ՏԱԿԱՎԱՀԻՆ ։ Բայց չեն
կարող ծիծակիլ ։ գնահատ գնահատ զիս կը սըստի

ՏՐԱՑՏԸ

իմայսարադ մասսար ի նաև վեճը յա պ ։ Յ-
գլուխ նամ գուգուց ուսասար զիմ

ՏԱԿԻԳ ԾԱՇՈԹՈՒԹԻՒՆ իսոսար սմ ։ յ-
ման կը մասաւ աշաւ եւ մասաւ մասաւ պակ

Քառ ։ Կականարած ։ նուարվ ։ Պրկել ։ պինը կա-
պել ։ Կակուգնուզ ։ որդի ։ Պուտ կարիլ ։ Հովանաջ ։
զովանալ ։ Շոգ արեւու Տակ ։ Ժուռ կաղուր ։ Ճաղող ։ Կեր ։
կերակուր ։ Ժաղկարուր ։ Ճաղուր ։

Ընթացք շարապութեամ ։ Արտոյս ։ Զմեռ է ։ մի
քանի արտայտներ կուզեն թողուշի իրենց ծնեւավոր երկիրը ։ Եր-
թալու համար հոն ուր ծիծառները գացին ։ Անսոյու մի տա-
րեց կը հակառակի անոնց ։ Նորա պիտի թողուշ իրենց գիտ-
ցած երկիրը ։ անսոյու երջանկութիւն մը գնտաելու համար ։
այլուր նոբա չպիտի ունենան հածցք ։ Անպատեհութիւնք
երկար ուղեւորութեան մը ։ և այս երկուց յորս կուզեն երթալ ։
Երջանկութիւնն բնադաւառի մէջ է ։ Արտոյտք կանան
իրենց տրուած խորհրդոց ։

Դիմու առ ապա օժանը ։ Եթու առ ապա օժանը ։

ՊԱՐԱԿ ՀԱ ՎԵՐԱԿ ՅԱ Ջ ՅԱ ՎԵՐԱԿ ՎԵՐԱԿ ՅԱ ՎԵՐԱԿ ՅԱ ՎԵՐԱԿ ՅԱ ՎԵՐԱԿ

ԵՐԳ ՓՈՔՐԻԿ ՄԱՆԿԱՆՑ

Յ Ա Ր Ւ

ՊԱՐՈՐ և պատառակ որին յամի վետայի Յ Ա Ր Ւ
ՄԵՆՔ ամենքնիս ալ ձեր առջեւ ենք կանդներ,
կը մոտածէք անշուշտ թէ շատ փոքր եմք դեռ ։
Բայց թողէք որ պատմեմք գործեր մեր անբաւ,
թէպէտ անոնք փոքրիլ ։ սակայն միտ են լաւ ։

1. Դուք կը տեսմէք զիս որոշեալ միշտ ժամուն,
Որ դարակիս առջեւ նստած եմ ժպտուն :

2. Զեռքերս մաքուր միշտ պահէլու տանիմ խնամ,
Որպէս զի երբ տեսնէք զանոնք, չամչնամ:
3. Ես ալ կ'երթամ ի դասարան հանդարտիկ
երբ դասատուն ըսէ. կեցէք կամ անցիք:
4. Ես դասատուիս ամէն ըսած խօսքերուն
Այո՛, կ'ըլլամ յոյժ մտաղիր և արթուն:
5. Կաւ կ'աշխատիմ սորվիլ դամերս ամենայն, — յիս
Գիտեմ կարգալ, գրել, հեգել քերական: Հայութիք
— բայութիք:
6. Քաղաքավար եմ ամենուն հաւասար, Խապան
Զեմ սիրեր զայն՝ որ կ'ուզէ միճ ու պայխար:
7. Թէ պատահման մասսեմ մանկան մի երթէք,
Զուարթութեամբ կըսեմ, խնդրեմ ներեցէք:
8. Խոնարհութեամբ գլխարկի, հանեմ ճիշդ այսպէս,
Երբ ընկեր մը կամ բարեկամ տեսնեմ ես:
9. Մի՛ կարծէք որ ես ալ կ'ուզղեմ առ ընկեր
Խաղի ատեն՝ դպրոցի մէջ գէշ խօսքեր:

ՅԱՄԲԱՍ ԽԴՐՈՓ ՔՐԴ

Պ.Ա.Բ.Ն

Ուխտեմք լինել ժիր, մաքրասէր և րզգօն,
Յիշեմք յաւէտ մեր դպրոցին այս կանոն,
«Ինչ որ կ'ուզէք որ ուրիշներ ընեն, ձեզ,
Գէտք է անոնց համար ընէք դուք նոյնաբան:
(Ազատ քարզմ.)

Անձանե քը լուծար այս գծանման ով գալիք.
Անուրած նու հանուն անուազար զի

յո չեմ այսուն գֆինական ԱՌԱԾ խայտան
ցամիք լամբանոյ չ մասնաւոց զյամանուն ունի ունի
գաղանա՛ լինել փայլուն արտակուս եւ ամբիծ ի ներ-
քուս: Երբ զի զի զմացուն սխ շնչայ, մարս առաց
— ի սիր դրա ժմախան ով զմացունիլոյ զմանմեռուն
— ու զին զման որոց ու ունի: Ճան ով զմայն ներանին
ծառ առ քանի ։ Նուած ու ունի մշտման ի նուած անաշան
մ նաշան մմ մարդ նարս մուտած զգախ միլիստար
։ Ա. Բառ. — Մասդիր, ոււաղիր. — Պայխար ու կիման
Զգոն, խելօն և ցանուա առ առանախանար
Ընթացք շարադրութեան. — Զանձրոյ. — Վահէ ար-
ձակուրդի մէջ է. Կը խաղայ առաւուուընէ, մինչեւ երեկոյ. ու թ-
օրուան մէջ կ'սպառէ իւր ամէն խաղէր (Թուեցէք զանոնք): Կը
ձանձրանայ, Ցցուեցէք զանի դժոհ, անհածոյ, որ կ'ընէւան-
կարեին զիսմնելու համար . (ըսէք նորա ըրածները). — Հայրը
խորհուրդ կրուտայ անոր քիչ մը ոչխատիլ . Վահէ կ'առարկէ թէ
արձակուրդի մէջ է. (խօսակցութիւն). — Վերջապէս կ'որոշէ
աշխատիլ, գառնուլ դպրոցական աշխատութեանց, օգնել առտնին
գործոց, ձանձրոյթը կը փարատի . Կը զուարթանայ Վահէ և կը
վայելէ գեղեցիկ արձակուրդ :

ումին նոր նորու սմեյջ

• ումին ու նույնումն նաւա

սմերով ու միմաց մերոք

Ս Ո Ւ Թ Ա Ը Ա Կ Ա Ր Ա Գ Ա Ր Ա Գ

Գարնան գեղեցիկ երեկոյ մը մանկիկ մը ուսուցչին
հետ անտառին եղեցքը կը պուրտէր : Յանկարծ սոխակի
ձայն լսուեցաւ . «Ի՞նչ գեղեցիկ ներդաշնակութիւն»
ըսամ Պօղոս երկար ժամանակ հիացմանի մոտիկ ընելէն
ետքը, «հետաքրքրութիւնն կը շարժի այս գեղեցկա-
ձայն երգը մօտէն լսելու . Քիչ մը առաջ երթանք,
ձայն երգը մօտէն լսելու . Քիչ մը առաջ երթանք,

«Աղէկ զգուշացիր, ըսաւ

ՅԱՆՔ. — Փառամամանէ, փառօֆ փայլուն . — Լանջ,
կուրծք :

Ընթացք շարադրութեան . — Նամակ . — Մեր եղբայրն ի-
տալիս մէջ նկարչութեան կը պարապի, կը գրեմք անոր թէ մեզ
մեծ հաճոյք է իրեն նամակներ ուղղել միշտ և փոխադարձաբար ի-
րենքուն ընդունիլ : Կը ինկըրեմք որ մեր գիւղի եկեղեցւոյն համար
նուիրէ Աստվածածնայ պատկեր, իւր գրձինով նուիրուած, իւր
ճարտարութեան իրեւ նոր սպացցց և բարեպաշտիկ ոգւոյն յայ-
տարար . Եզրակացութիւն :


— Յօջ —

ՀՈՂՄԱԿՈՄ ԱՆՏԱՐԻԿ

Կը սիրէի յաճախ հողմայոյզ մարդի մը եզրը նըս-
տած, անտառով շրջապատեալ մենաւոր հովտի մը մէջ
տեսնել ծիրանագեղ առուոյներ և դալար մէզեր՝
որք կը տատանէին վլէս վլէս ալեաց նման, և կը պատ-
կերացնէին աշացս առջեւ դալարեօք և ծաղկամթք
յուղեալ ծով մի: Ահա հողմոց ննջով կը շարժէին գըլ-
խոյս փրայ անտառաց վլէհացուք կատարները: Ամէն
մէկն իւր շարժումն ունի: Հաստարմատ կաղնին իւր
ուղէները կը խոնարհեցնէ, առաձգական եղեւինը կը
շարժէ իւր բրդաձեւ բարձրութիւնը, կաղամախին իւր
յարայոյզ տերեւեակոյտն, և ցարափին կը թողու իւր
սաղարթուց շարժին յայերս իրեւ երկայն գիսակ:
Կարծես կրիւք յուղեալ են. մին յոյժ կը խոնարհի իւր
մերձաւոր ծառոյն քով իրեւ վլէհագունի առջեւ, ու-
րիշ մը գրկախառնիլ կը նկրտի մտերմօրէն. այլ ծառ
կը յուղուի խորապէս իրեւ թշնամոյ մի քով: Յար-

ՇԱՐՍ. ԳՐՈՒԹԻՒՆ. ՊԱՏԿԵՐԱԿ

Անտառ :



Ցեղեկութիւն. — Օգտակարութիւն անտառաց. Նոցա մօտա-
ւորութիւնը կը նուազեցնէ սաստիկ տաքն եւ սաստիկ ցուրտն: Ան-
տառաք անձրեւի ջուրերը կը պահէն: Սղոցեալ ծառերը կը մա-
տակարարեն տախտակներ եւ ատաղձներ: — Մեենական սղո-
ցարանն կը շարժին շոգւով: Հաս մը սղոցի կտրոցներ վերէն
վար կուգան կ'երթան: Կոնց մը սղոցներու վրայ կը գրուի, որք
զայն տախտակներու կը բաժնեն: — Ճախարակագործք արագօրէն
կը դարձունէ փայտի կտորքմը և կը կտրէ զայն սուր գործիքով:
— Ծառատութիւնն է անտառի մը բոլոր ծառերն կտրելը:

տերեւուկ (հանգս էլի). արմաւենի. արքայամորի (կուտառապատճեն) . դափնի. դեղձի. դղբի. եղեւին. զկեռի (հաւաքսուս ալւճը). ընկուզենի. թանթրուենի. (ժ-ւ-ւէր). թզենի. թթենի. լեզակ. լիմնի. խահուենի. խնձորենի. ծիրանենի. կաղամախի. կտղնի (կէց). կաղնի. կանեփ. կեռասենի. կնձնի. հայուե. հաղարչենի. հացի (րէլու-րափ -ւլճը). հոյնի (հւուլճէփ -ւլճը). ձիթենի. Ճագում (պարճ ալւճը). Խայրի. մաշկամրդի. մասրենի. մրտենի. յունապի. նարնջնի. նշնի նշի. նոճի. նունենի. շոնի. որթատունի. սալօրենի. աօվի. վարդենի. տանձի. տօսակ. ցափ. ցարասի. փեկոն :

Ընթացք շարադրութեան . — Գրեցէք թէ ի՞նչ կ'ուղէք ըլւլ , երբ գարոցէն ելնէք , քառու : ինչ ոս թիցալումը մասն ու ի վի միջնիւն անըրի մա զաւանիւն կոնի ազան խոյմինարար մասն ու հանութիւնը ով տառը , զմիմարար զառանն ունաւունա մէկ մէջ : զի մու միյու և միսաւ իսլա ունանա բայց մայմանի լին անեար մասնալուրաց մասն ով զմկը զի ցանկը :

Օրորանիս մօտ նստած :

Մայրըս անոյշ երգելով

ինձ շատ անդամ գուն էր արած :

Խաչանրշան կընքելով :

Աջն ու Խաչը գեղ պահապան :

Անթիւ անդամ կրկնել էր,

Խաչն իւր սիրոյն միշտ ապաստան :

Ամէն ժամում կանչել էր :

Երբոր թոթով լեզուս բացաւ ,

Խաչի դասըն աւանդեց .

Խաչ օգնեա ինձ , կրկնի՛ր , ասաց ,

Գըթուտ սիրով պատուիրեց :

Քանի տարին էս սիրուն դասն

Ես շարունակ կրկնեցի .

Մօրս հետը ժամ գընացի , բառաւ , նախար

Խաչելութիւն սիրեցի :

Ուխտատեղի թէ մասուռներ

Ալը որ ես ուխտ գնացի :

Համբուրեցի ես խաչքարեր

Խաչ օգնեա ինձ , կրկնեցի :

Երբոր սիրը . ինչ ես մեծացայ

Մայրըս առւաւ քերական ,

Խաչ օգնեա ինձ , կրկնի՛ր , ասաց ,

Խաչն է ուսման օգնական :

Խաչն օգնական -ինձ կանչելով

Այբուրենէն ըսկսայ .

Ամէն դասում միշտ կրկնելով

Շուտով կարդալ սորվեցայ :

Քերականն աւարտեցի . լուրու դմադ

Ցետոյ մըտայ վարժարան , լուր գմիտ բան

Եօթը տարի ես կարդացի

Ուսմունք առի գանապան :

Քանի՛ քանի՛ շարադրածներ

Որ ես ինձէն գրեցի ,

Դեռ շիսած՝ ճակատներըն

Խաչ օգնեա ինձ դրոշեցի :

Աստուծածացունչ , Աւետարան

Որչափ սիրով կարդացի ,

Այնքան խաչին սիրոյ նըշան :

Սըրափա մէջը ըզգացի :

Զգացի որ խաչի ճառըն

Մեծ ուսմունք է մարդկութեան :

Մեր կրկութեան դրօչն է նա

Ճշմարտութեան սուրբ նըշան :

Մայր իմ , դասըդ չեմ մոռանալ

Քանի որ ես կենդան եմ ,

Նեղութեանց մէջ չեմ թուլանալ,
Խաչն ինձ պարծանք կ'անուանեմ:
Ուրախութեամբ ես կը տանեմ
Ամէն զրկանք, ամէն խաչ,
Քանի միրով ես կը տեսնեմ
Փրկիչն ի խաչ բարձրացած:

ՄԵԼՔԻՄԵԴԻԿ ԱՐՔԵՊՈՒ. ՄՈՒՏԱԵԱՑ

Ա. Ռ. Ա. Ծ.

Երանի՝ մարդոյ՝ երէ աջ ձեռքը կրօնի կարկառէ,
իսկ ձախը՝ զիտութեան:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Հոմանիշք . — Երաժիշտ, գուսան, նուագածու . — Բող-
բոջել, ընձիւզել . — կաթիլ, շիթ, կայլակ . — ցեխ, տիզմ,
գայու . — ձիւղ, ոստ, ուղեշ . — լնծայ, նուէր, ձօն . —
անմիս, յիմոր, խոլ . — Պանդուխտ, նժեհէ, տարաշխտքհիկ .
— Երգել, նուագել, գեղգեղել . — Փափաք, բաղձանք, իղձ .
— Զօրաւոր, հուժկու, կորովի .

Ընթացք շարադրութեան . — Գոյուքիւն Աստուծոյ . —
Հյակապ շէնք մը, մեքենայ մը տեսնելով, իսկոյն կը խորհիմք
թէ նոքա շինող մ'ունին : Այսպէս պէտք է մոտածենք տիեզերաց
համար: Դիտենք երկիրը, տունջեան և գիշերոյ, ըրս եղանակաց
կանոնաւոր յաջորդութիւնը, և նոցա արդիւնք, և պիտի գոչենք
թէ . կայ Աստուծած:

ՀՐԱԺԵԱՅ Եօթնամեայ մանուկ մ'էր դեռ: Տարի մը
յառաջ կորուսած էր իւր հայրը . որբ էր: Իւր միակ
պաշտպանն էր իւր մայրն, այրի մանկամարդ, այլ ա-
ռաքինի ու քաջապիրտ, որ, իւր յոյսն իւր զաւակաց
վրայ դրած, իւր ձեռաց աշխատութեամբ կը սնուցա-
նէր զանոնք: Բայց մօրկան մեծագոյն ակնկալութիւնն
Հրաշեայ ինքն էր: Արդէն իսկ կը կարդար նա եւ կը
գրէր: Դեռ իւր հայրը չմեռած, Սաղմոս սկսած էր, որ
այն տտեն յետ հեգարանին կը տրուէր տղայոց իբրեւ
ընթերցանութեան դասագիրք: Հիմ հայրն, հիւանդու-
թեան անկողնոյն վրայ գամուած, դրացւոյ մը յանձ-
նարարած էր գնել շուկայէն այդ գիրքն, որը թա-
խանձագինն կը ինդրէր իւր որդին, և երբ երեկոյին
տեսած էր մանկան ուրախութիւնն ի տեսիլ մատենին,
հառաչ մ'արձակած էր, վշտի և յուսոյ հառաչ մը
միանգամայն, և ըսած էր իւր կնող. «Ես չպիտի տես-
նեմ, այլ դու պիտի տեսնես այս տղուն ապագայն և
ուրախ պիտի ըլլաս իրուով»: — Հօր գուշակութիւնը կա-
տարուեցաւ արդարեւ մօտաւոր ապագայի մը մէջ, երբ
ինք վալորց մեկնած էր յաշխարհէ: մայրն ինդաց այդ
զաւակէն, թէն, աւաղ, և այն կարճատեւ ժամանա-
կի մը համար: իւր այրիութեան հանդերձներուն, զոր
կրած էր տարիներով, սեւութիւնը մեղմացուց և իւր
ուրախութեան մէջ կը յիշէ՛ր յաճախ իւր դժբախտ ա-
մուսնոյն խօսքերը: Բայց դառնամք այն ժամանակին
ուր Հրաշեայ Եօթնամեայ մանուկ մ'էր տակաւին:

Հրաշեայ երկու բան ամենէն աւելի կը սկրէր, —
իւր մայրն ու դպրոցը: Երեկոյին իւր մօր հետ կ'ար-
տասուէր և կը միսիթարէր զայն խոստումներ ընելով

ապագային համար, յոյսեր տալով նմա . և առաւօտուն ,
մայրիկին համբոյրներով թրջուած , կը փութար ի դըպ-
րոց : Թէ և մանուկ , ո՞չ մի զուարձութիւն առաւել հը-
րապոյր ունէր իւր համար քան դասառութիւնն , և ո-
չինչ կարող էր արգիլել զինքն դպրոց երթալէ . — իւր
ուսանողութեան ամբողջ շընանին մէջ հազլւ քանի
մօրեր և եթ բացակայ գտնուած էր դպրոցէ , և այն
հիւանդութեան պատճառաւ միայն Աղքատիկ , այլ մա-
քուր հագուած , կը մեկնէր կանուխս իւր անէն , տէս-
նողներ բարեկեցիկ ընտանիքի մը զաւակ , կը կարծէն
զինքն . իւր դէմքին տժգունութիւն միայն դիսոզ ա-
չաց կը պատճէր թէ արտաքին այդ կոկ ու վայելուչ
կերպարանքին տակ ի՞նչ դժնդակ զրկումներ կը ծած-
կուէին : Բայց այդ մանկան համար մարմային դրկում-
ները չէին ամենէն դժնդակները :

Ո. 3. Պէրուէրւն

(Ծաղիկ մանկանց)

ՅԱՐԱՏԵՒԻԹԻՒՆ


Պարտինք կանուխէն ընտել մեր կենաց մեր ամէն
գործոց համար պարկես , առաքինի եւ հնարաւոր նը-
պատակ մը եւ բոլոր զօրութեամբ անոր յարիլ , որպէս
զի մեր հոգին կազմակ եւ նեսզինտէ պատշաճի ամէն
առաքինութեանց :

ՊԱԳՈՆ

ՅԱՆՈԹՈՒԹԻՒՆ


Բառեմ . — Մանկամարդ , դեռահաս կին կամ աղջիկ . —
Հերթ , բուռակ . — Վաղոնց , օտանց , — Բարեկեցիկ , լաւ ապ-
րող . — Կոկ , ձեւաւոր . — Դժնդակ , գէօ :

Բարի դպրոցական Գամերի ձիրեւն :



Տեղեկութիւն. — Համեմատեցէք Գամերի արագքը այն
մանկանց հետ՝ որք չունին նորա բարեմասնութիւնները : Գամե-
րի յաճախած դպրոցն ունի դպրոցական ինյողական արկղ , եւ
մանուկը կանուխէն կը սորվի ինյողութեան : Գամեր տիպար
աշակերտ մ'է :

ԹԻԾԻՆԸ ՊՐԵՏԵԿԱՔ ԱՆՔԱՐԱՐԱՐ ՊՐԱՅ



մաս զարգաց պահանջանք . . . Ավելի ուժից է
առաք զբարձր մատուցություն առաջ մեջ շնորհած
ու , չեղաւ մաքարացած մաքարացած հետ ճարդու ճագանաւ կա
զարժի զմանք : ճաման ել արարած միքու ցի ճամանակ ցի առան
ըմբ ուղիղական

Համանիշք . — Պաշտպան , նեցուկ , զօրավիր . — Կար-
տաւ , ընթեռնուլ , վերժանել . — Հեք , թշւառ , տարաբախտ ,
չարաբաստիկ . — Հանդերձ , զգեստ . ագանելիք . — Արտա-
ռւել , լաւ , ողալ . — Եւելթ , միայն , առկ , լոկ . — Բարեկե-
ցիկ , գեւրակեցիկ . — Տգդյան , գունաթափ , դալկահար . —
Դմնդակ , դճնեայ , դժեմ:

Ընթացից շարադրութեան . — Որբն . — Պարգեւաբաշխու-
թեան օր մը . ուրախութիւն մանկանց . միայն մէկն է ախուր ,
թէպէտ շահած է ամէն մրցանակ . Մայրն լինաւ կը հարցունէ
եւր Գամեր որդւոյն թէ օ՞վ է այս մանուկ . որդին կ'ըսէ թէ նո
Զարեհ կը կոչուի , և կը գովէ զնա : Տիկինն կը խօսի Զարեհի
հետ և կը հասկնայ թէ որբ է . յուղում տիկնոջ : Դարոցին մնո-
րէնը կը թշլատրէ տիկնոջ Զարեհը տանիլ Գամերի հետ : Բարե-
կամութիւն մանկանց . Զարեհ այլ ևս ախուր չէ :

Վ.Ս.ՐԴՆ ՈՒ ԳԵՐԵԶՄՈՒՆ

Գերեզմանը հարցուց վարդին .

« Ի՞նչ կընես դու երբ ծոցդ ընկնին

« Արշալուսոյ զինջ արցունքներ » :

Վարդն ալ հարցուց . « Դու ի՞նչ կընես

« Այն որ գլորի ի մահաղէզ

« Բու մշտաբաց վճիր ի ստուեր » :

Հսաւ վարդն . « Ո՞վ նըսեմ վիրապ , վիթի մատ

« Արցունքներէն այդ սիրաւապ , այդ զինուր ամ

որուաց . « Հանեմ բուրում մեղրածուն » :

Շիրիմն ըսաւ , « Ծաղիկ թշուառ , խոլալար

« Հոդիքն որ ինձ գան մահավար » :

« Հրեշտակը շինեմ երկնից արժան » :

Փարզմ .

Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ
Մարդ երբ չգտներ իւր հանգիստն յինքնան, և զնուր
կը փնտէ այլուր :

ԾՍԽՈԹՈՒԹԻՒՆ
Բառ. — Զիմ, լսակ, — Միրաւապ, սիրովայրած ք
սամ. — Մեղրածորակ, մեղր վազենոց:
Ընթացք շարադրութեան, — Ծովասոյզն : — Խշան,
մը իւր պատաստականներով ծովեղբն գանուելով ոսկի գաւաթը նե-
տեց խորոց մէջ : Միայն երիտասարդ մանկաւեկի մը համարձակե-
ցաւ անդունդին մէջ նետուեկը թերաւ նա գաւաթը՝ արհամարհե-
լով մեծամեծ վոտնդներ : Խշանն խոստացաւ իւր աղջիկը տալ ա-
նոր ի կոութիւն, և թէ նորէն արիանար ալեաց մէջ նետուելու :
Երիտասարդն դարձեաւ փորձեց, սոկոյն չվերադարձաւ յոփունս :

ՀԱԶԱՐԱՆ ԲԻՒԼԲԻՒՆ ԵՒ ՍՐՋԱԿ ԹՌՉՈՒԻՆ

Բաղիցյ գալունը ունի սքանչելի սոռանձին ճաշակ
մը . այդ ձորը երջանկացոյց զիս տեսնել տալով հազա-
րան բիւլբիւն յիշատակեալ հէքեաթներու մէջ, զոր
տեղացիք կ'անուանեն նաեւ «Տուտի խումրի» . լսեցի
իւր զմայլելի երդերը, զօրս կ'երդէր զուտ ու քաղցր
գայլայլով, որ կը լեցնէր ձորն ու անտառն . արդարե-
հազար եղանակ գիտէ գեղգեղել . սարեկի մը մեծու-
թեամբ, աշեղ, լանջագեղ, թիկունք և գլուխը փայ-
լուն ուկւոյ դեղնութեամբ . թեւերը սեաթուխ, ծա-
նըր և վսեմ նայուածք մը ու շարժմունք մը ունի .

թուիչը արագ է, բայց ոչ մացառի փոքրիկ բիւլբիւլի
նման վժիկ վժիկ ու ձըռձըռ, և ոչ անոր պէս զավզակ
ոստոստիկ, ու մարդոց անտեսող . սա ընդհանրակին
հաճոյք կ'զգայ ցուցնել իւր գեղն, և կ'ախորժի երգել,
երբ մարդ կը լսէ :

Բազցյ ձորի ծառերուն վրայ, ամէն իրիկուն երբ
արեւը մար կը մտնայ, թիւրու մէջէն մի ողորմուկ,
ամէկոտ աղջկան մը ձայնի նման, սրաի գպչող շվաց մը
կը լսուի . «Սըհա՛կ, Սըհա՛կ, Սըհա՛կ...» . երիցս կը
կրկնուի, քիչ մը կը լուէ, կը թուի թէ՝ արճագանքի մը
կամ պատասխանուց մը կ'սպասէ, ապա անյոյս իւր
սպասածէն՝ կը կրկնէ ու կը կրկնէ . «Սըհա՛կ, Սըհա՛կ,
Սըհա՛կ» . մինչեւ առաւօտ : Պըտըտիկ, կատարգուիս,
վախկոտ, ամէկոտ այս թոշնիկն ո՞վէ, հարցուցի բա-
րեկամէս, — վա՛, չկիտես դու, քոյր մը ու եղբայր
մը եղեր են որբուկ, իրիկուն մը Սըհակ իւր քրոջ ծա-
մերը կը սանտրէր, յափշտակուեցաւ յանկարծ : Արծիւ
էր յափշտակողն թէ գազան՝ Աստուած գիտէ . ճշելու
ձայնին հետ՝ սիրտ կ'եղնէ քրոջ . Աստուած, ինձ հաւ-
քու թեւեր տուր, թումի իմ աղբերուկ գտնեմ : Աս-
տուած թեւ տուեր աղջկան, որ դեռ սանտրն էլ վեր
գլխուն : Սյն օրէն ի վեր ծառեր ու դռներ կը թա-
փառի, լեռներ ու անտառներ կը թոփ ու կը կանչէ .
«Սըհա՛կ, Սըհա՛կ, Սըհա՛կ» :

Գ. ԵՊԻՍ. ՍՐՈՒԱՆՉԵԱՆՑ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Ճշմարիս սէրն ազնիւ սրեւրու բնազդն է :

ՅԱՆՈԹԱԹՈՒԵՆ

Քառզբոյլ . — Զայներ . — Բառաչ , պոչիւն , պոռ-
չիւն (եղան , ցլւ , նշանաց) . — Բգդիւն (մեղուի) . — Բոմ-
րիւն (թնդանօթի) . — Գանչիւն (զանգակի) . — Գոգուալ (ագ-
ռաւու) . — Դափիւն (թմբկի) . — Թունթունալ (արջու) . —
Խաչիւն (իշոյ) . — Խրէնչիւն (ձիոյ) . — Կառանչ (կռնկանց) . —
Հաջիւն (շան) . — Ճիկ (մկան) . — Մնչիւն , վուվու (աղունոյ) . —
Մոնչիւն , գոչիւն (առիւծու) . — Նուալ (կատուի) . — Շա-
չիւն , շառաչիւն (երկաթի) , շլթպի (հն.) .

Ընթացք շարադրաւրեան . — Ծիծենակն . — Ի՞նչ պիտի
ընկեք , եթէ ձիեւանակ մի հաստատէր իւր բոյնը ձեր պատուհա-
նին քով : Ընդպահամ . — Թաշունն իւր բայնը կը դնէ . կը որ-
նուցանէ և կը մեծցնէ իւր ձագուկները . — Կը մեկնի հեռու աշ-
խարհներ . նև պիտի գոյց գարձեալ աւետելու գաղնան գալուստը :

ՀՅՈՅ

ԵՆՄԵՂՈՒԹԻՒՆ , ԵՅԻԾՈՒԹԻՒՆ , ՀԵՄԵՍՈՒԹԻՒՆ

Գ Ե Ղ Ա Ն Ի

Ա .

Տեսէ՞ր երբէք դու մանկիկ ,
Այտից խնճորքըն զոդրիկ .
Որ յորդանի կայ ի քուն
Քաղցրիկ երգոցն ի հնչիւն .
Վարդից թէրթեր են շրթունք .
Որով ժըպտին զուարթունք . . .
Եւ մինչ անյագ՝ մօրն ի սէր
Բանայ խրփէ զիւր աշեր ?
Զի՞նչ գեղանի ,
Զի՞նչ սիրուն ,
Քան ի քուն Անմեղութիւն :

Բ .

Տեսէ՞ր երբէք պատանեակ , Են վիան
Ժիր ծնողաց ժիր որդեակ ,
Որ զարթնու այդուն այդուն
Տալ զանձըն յաշխատութիւն .
Ուրախ դէմք իւր , զուարթ աշկունք ,
Սիրելի Են նմա ուսմունք .
Եւ մինչ ի գործ զողջոյն ափւ ,
Հօր խինդ է և մօր պատիւ ,
Զի՞նչ գեղանի ,
Զի՞նչ սիրուն ,
Քան մանուկ յԱշխատութիւն :

Գ .

Տեսէ՞ր դու կոյս ծընզասէր ,
Իւր անուշիկ մօր պատկեր ,
Սիրոյ ծնողացն ընդ փոխան
Տուեալ զանձըն ի խնամ տան .
Փոքունց օրինակ բարի ,
Պատիւ հայրենի յարիկ .
Եւ մինչ յուսումն միտքն են կիրք ,
Եւ Տեսոն նուէր է իւր սիրտ :
Զի՞նչ գեղանի ,
Զի՞նչ սիրուն ,
Քան կուսին Համեստութիւն :

3. ՈՍԿԱՆ


ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

ԵՐԱՅԻ որք համեստ ծնած էն : Սնապարծութիւնը
զմարդիկ տկար եւ փոքր կը նել :

ՎՈՎՆԱՐԿ

ՕԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Բառք . — Գոյտշիկ , բաղցր , սիրուն . — Խիել , զոցել .
— Ժիր , աշխատակր . — Ծննդասէր , պարկէտ . — Կիրք , վարժ .
Հերացք շարադրաւթեան . — Նամակ . — Զեր հնքամբոյ-
րը տուած է ձեզ իրեւ կաղանդէք լուսանկարներու տեսք մի .
Զայս կ'իմացնէք ձեր մուերմին և կը ինդրէք որ իւր լուսանկարը
դրէ ձեզ :



Զ Ա Տ Մ

Զատիկ է այսօր . միտքս կը բերեմ ձին օրերը , մեր
տաենի Զատիկի օրերը , երբ ողջ էին մեր հայրերն ու
մայրերը : Առջի գիշերուընէ կ'սկսէին ճնշել ուրախու-
թեան ձայները , վառ ձայնը կոչնակին , ու դուռներ-
նուս առջեւ դաւի ու որոս ձայն մը որ մեզ եկեղեցի
կը հրաւիրէր . վեր կը ցատկէինք . ի՞նչ զուարթ է զարթ-
նումը , և այր ու կին , ծեր ու տղայ , ամենքն ալ ե-
կեղեցի կը վագէին , տուները կը պարապուէին , եկեղե-
ցիները կը լենային , ու կ'սկսէր ժամերգութիւնը բար-
ձըր ու խորհրդաւոր շեշտէրով և հանդիսաւոր նուա-
գօք , որ կարծես թէ ընդ տիեզերս համայն պիտի հըն-
չին , և այն սեւցած կամարներուն ներքեւ կը գոռա-

յին ալելուք և օրհնութիւնք ու փառաբանութիւնք ,
և տաղը ու շարականք իրարու կը յաջորդէին մին քան
գմիւսն աւելի հոգեւոր՝ աւելի սրառուց , և կ'երգէին
դպիրք ու մեր սրտերն ալ կ'երգէին : Ոչ մէկ աւե-
տեաց ձայն որ փողերով տալիներով հոչակէ մի վե-
հապանձ թագաւորի յաղթութիւն կամ ազգերու եր-
ջանկութիւն , այնչափ հզօր և այնչափ քաղցր չէ հըն-
չած , որչափ այս բառերը «Քրիստոս յարեա՛ւ ի մեռե-
լոց » , որուն աղաղակը եկեղեցւոյ գմբէթն ալ կը
պատոէր կ'անցնէր : Ու խուռն բազմութիւն մը հեւա-
լով կը մնար ի խոր զմայլման՝ լուսով ու խուռնով ողո-
ղուն եկեղեցւոյն մէջ : Եւ ահա կը դառնայինք եկեղե-
ցին ու-կը բազմէինք նահապետական սեղանի մը ըուրջ :
Մեր հայրը կը փառաւորուէր այն օրը , աւելի փառա-
ւոր էր քան աշխարհակալ մը և մեր սրտերը լի էին
անսպատում ուրախութեամբ ու բնութիւնն ալ կը խայ-
տար մեզի հետ որ նա ալ իւր վերածնութեան տօնը
կը կատարէ այս օրերուս : Մարդիկ ամէն օրուան մար-
դիկ չէին , տարւոյն մէջ այն օրը միայն այն օրն ալ
ըլլար , մեծ և երջանիկ կ'զգային զիրենք : Ա՛լ մեղա-
ւոր չկար ի միջի , ամենքն ալ առաքինի , և էր որ առ-
յապայն ալ պիտի մնար առաքինի : ... Ոչ խեռ մնա-
ցած էր , ոչ ատելութիւն , այլ ընդհանուր եղբայրսիրու-
թիւն : Իրարու կ'երթային , իրար կը չնորհաւորէին , կը
համբուրէին : Անհուն սիրոյ ծուզակի մէջ բռնուած
մոռցեր էին առջի օրուան վիշտերը , զետեւեալ աւուր
հոգերը և ինչ որ բսաւ աշխարհի կիրք է ու շահ զայն
և բաց թողել էին . Աստուծոյ կիրքը միայն ունէին :

Ա՛հ , ի՞նչ մեծ է այս օրը ուսափ կը բզիմին մշտահոս
ալիքներով միխթարութիւնք ու ներշնչմունք անձնութիւ-
ման , սիրոյ , նահատակութեան . և ոչ միայն քրիստո

նէին, այլ ամէն տեսակ հաւատացելոց համար՝ որոնք
ի վերացականն ու ի մտացականն յառեալ էն, որոնց
առջեւ կը պարզի անկապտելի՝ և անկործանելի՝ ան-
հուն իտէականը: ի՞նչ կ'ըլլար, դարէ դար ու թէ հա-
զարաւոր ու բիւրաւոր ամաց շրջաններ լիսարու յաջոր-
դէին, քանի որ հոսէր ժամանակը անսպառելի՝ մնար
նաև խանդն հրաբորբո՞ւ մեր հարցն ու նախահարց,
և ամէն տարի միննոյն օրին, աշխարհի ամէն կողմը,
ուր մարդիկ կը բնակին, Աստուածորդւոյն չարչարա-
նաց ու խաչելութեան յիշատակը նորոգուէր, ինչպէս
կը նորոգուին քիչ-շատ ամէն կեանքի մէջ, ու յարու-
թեան օրն աւ բլա՛ր ընդհանուր ուրախութեան օր,
աւետաբեր յարութեան և փրկութեան հոգւոյ տա-
ռապեալ մարդկութեան:

Գ Ս. ՕՏԵԱՆ

— անջ զի մայիս զի ա զի բայիս զի զույլ զի զույլ
— հայ զի յա մայիս զի զույլ ու զույլ ու զույլ ու հապարաճ
զույլ մայիս զույլ ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ
— զույլ մայուս մայ մայուս ու մայ մայուս զի
Քիստոնէական կրօնի բարոյականն է սիրել ըզ-
մինեանս:

ԺԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Ա Քառէ. — Վան, ծանր. — Դաշն, մեղմ. — Ուրս, որ-
տացող. — Նուագ, երգ. — Մրառուչ, կարօսպին. — Տա-
շիղ, նուազարան մր (ռ-ւ). — Վեհապահ, վեհ եւ փառաւոր.
— Առյապայն, ապազայն. — Խեռ, ատելուքիւն. — Իշկա-
կան, գաղափարային. — Հրաբորով, երով բորբոքալ.

Կորութիւն. — Զեղել նետեալ բառերու առաջին զիր
եւ անու տեղ ուրիշ զիր մը դենը նոր բառ կազմել, — Զայն.
Հուր, լար, հաւար. վեշտ. սէր. առն. գգալ. կիրք. շահ. ։
Նահատակ. տարի. հոգի: Ճարութիւն. խանդ. շատ. կատա-

բել. կողմ. բռնուել. տղայ. շեշտ. կամար. բառ. իոր:
Էնբացցի շարադրութեան. — Դպրոցին մէջ. — Ի՞նչ
պարտի ընել դպրոց գացող. մանուկ մը. — Յո՞րում կը կայանաց
ու սանողի մը աղնուածիւնն առ իւր ընկերու. — Ի՞նչ կը մատ-
ծէք մանկան մը համար. մանկան մը համար՝ որ կը ծաղրէ
իւր այն ընկերն որոյ հագուստն կը ցուցնէ թէ աղքատ է. —
Պարտի՞ք նմանիլ ընկերով մը՝ որ գէլ ընթացք ունի. — Ի՞նչ կը
մտածէք անոնց համար՝ որ կը ծաղրեն տկաները. — Ինչո՞ւ հա-
մար պէտք է լաւ ընտրել ընկերները:

ՀԻՒԾԻԾՈՅԻՆ ԿՈՒԽՆԻԱՅԻ ՍԵՒԵՐՈՒՆ ԶԲՈՅՅԸ

Նախածնողաց որդիքն երկեակ՝
Ոյց մին սեալ էր, միւսն ըսպիտակ,
կանչեց Աստուած, ու՝ անոնց առջեւ
Գիրք մ'ու ոսկի դըրաւ պարզեւ,
Հրաման տալով որ զայն ընտրեն:

Սեաւն՝ անդրանիկն այդ երկուքէն

Նախապատիւ ընտրեց զոսկին,

Գիրքը թողլով իւր կրտսերին:

Սա՝ չէ՛ ծանօթ ի՞նչ պատճառաւ

Ցուրտ ու հեռի երկիր մ'ինկաւ.

Իւր այդ գըրքին նորդիւ սակայն

եղաւ հըզօր և գիտնական:

Խօսնեն իւլ անդրանիկ մընաց անդէն

եւ ապլեցաւ երկար ատեն.

Ապա տեսաւ թէ Գիտութիւն

Քան զձոխութիւն է գերազցն:

Թարգմ. ԵՂԻՇԵ Մ. Վ. ԴՊԻՐԵԱՆ

Էմ յանը թարգմանաւ

ԽՍ.ՆՕԹԱՌԻԹԻՒՆ

Քառք. — Երկեսկ, երկու . — Ճնխորիմ, հարստորիմ, Կրրուրիմ . — ԳՏԵՆԵԼ հետեւեալ բառերու հականիք . — Անաշառ . արուեստական . արցունք . բարեպաշտ . բարիք . բարբում . գերի . գովաս . գոռ . գաֆան . դրւժ . դրախտ . երեւիլ . եւանել . երկինք . զգօն . զուարթ . զուտ . ընկեր . ընտանի . ընդարձակ . թարմ . թափանցիկ . թեթեւ . ժամանակ . ժոռ . լիճ . խաղաղութիւն . խափչիկ . ծնունդ . ծուռ . կարգ . հեղինակ . հրեշտակ . ձայն . ձմեռ . ճիշդ :

Ընթացք շարադրուրեան . — Օգտակարն եւ հանելին . — Հօրեղբայրն Վարդան Կ'ուզէ վարձատրել Սարինէն . եւ Նուարդը իրենց շահած մրցանակաց համար . — Անոնցմէ իւրաքանչերին Կուտայ 5 ֆրանք , և կ'ըսէ որ ընտրեն վաճառանոցին մէջ իրենց համելի եղած բանը . շատ մը վարանումներէ վերջ Ասրինէն կ'առնու զինոց մը եւ թեւնոցներ , Նուարդ՝ ձմեռնային հագուստ մը . Ցցուցէք Ասրինէն զարդարուած տօնի օրն . — Նուարդ կը տիրի . — Զմեռը կուգայ : Ցցուցէք թէ Նուարդ հագած է իւր հագուստն ու Ասրինէն կը տիրի . ո՞վ լաւն ընտրեց :

— 36198 —
ՕԹԱՅԻՏԻ ԿՂՋԵՑԻՔ

Մինչ նաւարկուք առաջին անդամ մտան Խաղաղական Ովկէանոնք , տեսան որ հեռուէն կը պարզուին ավելինէր՝ զորս մշտապէս կը գգուեն խնկանուս սղունքը : Խակոյն անհունութեան ծոցէն կը բարձրանան անծանօթ կղզինէր : Արմաւենեաց պուրակներ , մեծամեծ ծառոց հետ խառն , որք կը թուէին բարձրաբերձ պտերներ , կը ծածկէին այն եղերքն և կիջնէին ամփիթառներ ճեւով մինչեւ ծովուն եզրը . լեռանց կապուտակ սարերը վեհաշուք կերպով կը պատկէին այն անտառները : Բուստերու շրջանակէ մը շրջապատեալ այս կղզինէր կարծես կը ծածանէին . նաւահանգստի մէջ

խարսխեալ նաւուց նման , ամենէն հանդարտիկ ջուրց ծփանաց մէջ . հնարամիտ Հնութիւնը պիտի կարծէր թէ Աստղիկ իւր գօտին պարզած է այս նոր կիթերեանց շուրջը , մրրիկներէ պաշտպանելու համար զանոնք :

Այս անգիտացեալ հովանեաց ներքեւ բնութիւնը դրած էր Ժողովուրդ մը գեղեցիկ այն երկնից նման՝ որ տեսած էր անոր ծնունդը : Օթայիտցիք կը կրէին գլեստի տեղ թղենուց կեղեւէ ասուեղէններ , կը ընակէին թթենուց տերեւներէ տանեաց ներքեւ , անուշահան մոլերով հաստատուած , և կը թոշընէին ալեաց վրայ պրուեալ առագաստներով և փետրալից ու ծաղկեայ երկու մակոյիներ : Կային անդարբեր և զուարձութեանց նուիրեալ ընկերութիւններ . անդ ամենայն տեսիլ կենաց քաղցրութիւն և բոլորովին խաղաղ օր մը , և անաղմելի գիշեր մը կը ներշնչէր : Ննջել վլուակաց ափունքը , ծուլութեան դէմ մաքասիլ անոնց ալեաց խոխովիւնով , տերեւակերտ վերարկուներով և բեղոյներով պարտիլ : Ասոնք էին Օթայիտի վայրենի հանդարտութեանց խակութիւնը : Այն խնամքներ՝ որք ուրիշ մարդոց համար գառն օրեր կը գրաւեն , այս կղզերնակաց անծանօթ էին . անտառաց ուղարկուած կը գտնէին կաթն ու հաց ծառոց ուստերէն կախուած :

Թարգմ.

ՇԱԹՈՊԲԻԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Ունենանք վեն սիրս , եւ համեստ միսք :

ԾԱՌՆՈԹԹԻԹԻՒՆ ուստի յանձնական
Քառ. — Խելկահոն, անուշահոն. — Պուրակ, անառ.
— Պուր, տունկ մը (Եւրեմ օթու) . — Մոյր, նեցուկ. — Պրու-
եայ, եղէքէ.

Ընթացք շարադրութեան. — Նամակ. — Աբր հայրը ու-
ղեւորութեան մէջ է . կը չնորհաւորենք նորա անուան տարե-
դարձ. և կ'ըսներ թէ ոյս տարի իւր անուան տօնախմբութիւն
մեզ ուրախութիւն չպատճառեր, որովհետեւ նա հեռ! է ։ Բաղ-
ձանքներ մեր հօր վերադարձին համար :

ԹԱՐԻՅԱԿԱՆ ԱՐԱՄՔ

Օգուտ չըներ՝ յետոյ լաց .
Ժամանակին աչքըդ բաց :
Երկու լըսէ, մէկ խոսէ .
Խօսիլ չըդիտես՝ լըսէ՛:
Ժամանակէդ՝ միշտ շահէ՛:
Ումալէտը՝ միշտ անշահէ՛:
Եղիր առատ, մի՛ շըռայլ .
Մըսխողին գործն է սին փայլ:

Լաւ քան զամեն մեծութիւն՝
Հանդիստ խղճիւ անուշ քուն :

Բամպակ ազնիւ, մետաքս սուղ ,
Խոնարհ տնկոց են պըտուղ :

Քեզ աւելորդն՝ քուկըդ չէ, հայի առ ։ ար
Անովլ բարիք մը գործէ ; ու ուժակ բացակ
դաստիարակ առաջ ։ անուան անձիւն
Զուարթերես չոր հաց կեր, և ճայիլին . իւս
Դուն գիտցիր, մէկու մըսեր : իւս յանցու զի
մորհուրդ բարի, սիրտ բարի, մայստ անցաւ
Պիտի յաղթեն միշտ չարի : **Յ. ՈՍՎԱՆ**

ԾԱՌՆՈԹԹԻԹԻՒՆ
Քառ. — Ումպէս, փուն . — Սիմ, ոչինչ .
Ընթացք շարադրութեան . — Նամակ առ ընկեր . — Ա-
տոմ իւր ծնողաց իրատուց հակառակ մօտեցաւ գեթակին և հան
նետեց յարդի շիւղ մը . Մեղուները յարձակեց ան անոր վրայ, և
սուզայի կերպով խայթեցին զանի : Հիւանդ երկար ատեն, երկիւղ
աչաց տեսութիւնը կորուելու մասին . բժիշկը բժշկեց զանի ծե-
փելիքով (լուս) և կակլացուցիւ լուացմամի : Ատոմ իւր գժբախ-
տութիւնը կը գրէ մէկ ընկերոջ, և կ'երդնու նմա, թէպէտ ա-
նագան, երբեք շմատնալ գեթակի :

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ

Դու որ մէր գլխուն վրայ կը թաւախս և վահանի
նման բոլորակ ես, ուստի կուգան քու ձառագայթ-
ներդ, ո՛վ արեւ, ուստի քու յաւիտենական լցուդ :
կը յաւաջես քու մեծավայելուչ գեղովդ, և ասուեղը
երկինից խորոցը մէջ կը ծածկեն ինքինքնին, և լուսին՝
թալլացեալ և ցուրտ՝ կ'ընկլմի յալիս արեւմտից : Բայց,

դու, դու միայն ինքնաշարժ ես : Ո՞վ կրնայ քու ընթացիցդ ետեւէն հասնիլ : Լերանց մայրիքը կիյնան, և լերինք անգամ կը կործանին ամաց ծանրութեանը տակ . Ովկիան կը բարձրանայ ու կը խոնարհի . լուսինը կը կորսուի երկնից ընթարձակութեանը մէջ . դու միշտ նոյն ես, միշտ փայլեալ նովին պայծառութեամբ՝ քույաւտենական ընթացիցդ մէջ : Երբոր աշխարհ կը խաւարի մղրկօք, երբ կայծակունք կը շառաչեն, երբ կը սլանայ փայլակը, կ'երեւնս դու քու գեղեցկութեանդ մէջ, ամպերուն մէջէն, և կը ծիծաղիս մրկաց փրայ . . . Աւա՛զ, ի զ՞ուր է քո փայլդ Ոսիանի համար, վասն զի քու ճառագայթներդ չտեսներ, թէպէտեւ ոսկեղին գէսերդ ծածանին արեւելից ամպերուն վրայ, թէպէտեւ լոյսդ դոդդայ ի դրունս արեւմտից . . . : Բայց թէրեւս դու ալ ինծի պէս մէկ եղանակ մը ունիս, ո՛վ արեւ : Թէրեւս քու տարիներդ ալ ունենան իրենց վախճանը : Թէրեւս ննջես դու ալ՝ քու ամպոցդ գրկացը մէջ, և չլսես առաւոտեան ձայնը :

(Պատմ. Մատենագր. Միջին Դարու)

ՈՍԻԱՆ


Ա Ռ Ա Ծ

Հարկ չիկայ երկրիս շուրջ դառնալ, զիտնալու համար թէ ամեն տեղ երկինք կապոյն է :

ԿԵԹԵ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ընթացի շարադրութեան . — Ծագումն արեւու . — Կ'եմացնէ ի հեռուստ բոցը ճառանշեր ծաւալելով, ահա արեւելք բոցերու մէջ . ամէն վայրկեան կարծես պիտի երեւի . վերջապէս հրացեալ գունդ մը դուրս կ'եննէ : Թուշունք հոյլ ի հոյլ կ'ոգջուննեն զշայըն կենաց . բնութիւնը զուարթ տպասորութիւն կ'ազդէ, միծ վայելու տեսարաններ բանալով մեր աչաց տռջեւ :



ՏՐՁԽԵՎԻՆ ՊԱՏԱՍՏԵՆՔ

Մրջիւն մը կար բարակիկ,

Մէջը թէլիկ՝ ոտքը կարմիկ,

Զիյտեմ խելքին ի՞նչ վիշեց, ուզու կազմի

աշ միաստ բարձրէն վաղել ուզեց . աշ միաստ զազեց վազեց չեւալին, աշ միաստ մէջ ելլաւ ինչուան մինարէն .

Վերէն վար որ նայեցաւ,

Ծօ ասնիք ի՞նչ են, ըստ .

Հա՛, հա՛, ան ձին չէ՞ մի սա՝

Որ երէկ դաշտը տեսայ .

Չըսէ՞ս, ես կոյր եմ եղեր

Որ մէկ պահ առաջ խաբուեր

Ու ասանկ խեղճ ձըճիներ

Մէկ մէկ հըսկայ եմ կարծեր :

Աս մըջիւնին կը նմանիք

Դուք անխելք պատանիք,

Որ քիչ մը բան սորվեր էք,

Ցնորած մեծ մեծ կը ջարդէք.

Այդչափ բարձր մի՛ ելէք

Որ դատումնիւ խանգարէք .

Շիտակ դիրքով նայեցէք ,

ի՞նչ ըլլավիդ կը տեսնէք :

(Քազմավեա)

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Սնափառութիւնը գծուծ հոգիներու բաժին է :

ՋՄԾԱՎԱՐՄԹ ԺՎՄՇԽԱԴՐ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

օրինակներ տեսնելէ յետոյ, ոչ ապաքէն ներելի է մեղ-
հետեւցնել թէ աշխարհ նոցա կը պատկանի որք ան-
ընդհատ կ'աշխատին և յառաջադիմութիւնն մի անուն
է միայն թէ չլինի յարաւեւ աշխատանք :

ՀՐԱՆՑ ԱՍՏՈՒՐ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Աշխատութեան սիրելի պտուղնեն են առողջութիւն,
մտի զօրութիւն, սրի անդորրութիւն :

ԾԱՆՕԹ-ԱԽԹ-ԻՆ


Բառք . — Անձիւր, ամեն մէկ . — Խոյ, արգել . — Կա-
սաք . — Անձիւր, ամեն մէկ . — Խաջակիւրսէլր,
սիլ, ես կենալ . — Ճոխացնել, հարսացնել . — Հրաշակիւրսէլր,
հրաշակի զործեր . — Անցող, առանց զօրյ . — Ներւուծել,
հրաշակի զործեր . — Անցող, հասան . — Ի յանձ ածուած, զլիխ
խորել . — Անցողողի, հասան . — Ի յանձ ածուած, զլիխ
ելած . — Զենիք, զազարեական զործիք . —

Յառզիքնի . — Հերկ . — Երկրազրծական զործիք . — Արօր . բրէ . գաւազան . երկմատնի . թի . լողքար . հողաբեր .
հոսոր . մարկեղ . տափան . տրմուղ . ցաքան . քաղաքան զործիք .
քարհատ :

Հնբացք շարադրութեան . — Աշխատութիւն ամենէն շա-
հաւոր գրտմագլուխն է . — Զանձրոյթն ծուլթեան միջոցաւ մը-
շաւ յաշխարհ . — Գրամը բարի ծառաց մը եւ չար տէր մ'է . —

Ա.Ա.Ջ.Ա.Ջ.Ա. Ա.Ա.Ջ.Ա.Ջ.Ա.Ջ.Ա.Ջ.Ա.

Անոնք միլտարի



Դժուռոց ճնշեն ուստ, և թօնք դժուռք . — Անոնք այլուրնէ,
և ճուռական դժուռք . — և ոճ դժուռչափ ուստ . և զաւող
այլուր . և — վան ճյուրման ուստ ճյուրէ ճուռչի զժժիւն՝
ճյուր զուուն . և — վան մանգան մանման վանդ հան զի .
և ճյուրման ով մանման զուուն, զուուն հան, հան զիւն նախ .
զիւն զի ճուռակ ճուռէն անուած զըսան, ճյուրման . և
ճյուրման զըսան . և — զըսան իսպանման ճյուրման . և
տառ գրակի ճըսան զըսան, զըսան ութիւն զըսան ճըսան . և
զըսան յանուանի զըսան զըսան լորդ լորդ . և
զըսան յանուանի զըսան զըսան

Երկրագործն եւ իւր որդիք . . . Աշխատութիւնն մէակ ճշմարիտ
աղնուականութիւնն է :

ՀՈՒՆՁՔ

Ծագէ արշալոյս՝ վարդ կապած ճակտին,
Եւ եկեղեցւոյն կոչնակ հնէէ հաւը .
Մանկունք, օն, աղջունք, շուտ ել՛ք յատին .
Ժամ է հնձելու, վագեցէք ի դաշտ,
Ծագէ արշալոյս՝ վարդ կապած ճակտին :


Զեփիւռ հունձքերուն բարեւ տայ վերջին,
Շողան մանգաղներ . . . թողլով իրենց բոյն
Արտուածին ճագեր սրատրով փախչին .
Իսկ բարդ դիզուկն համկեր ոսկեգոյն,
Զեփիւռ հունձքերուն համրոյր տայ վերջին :

Երբ յետին նշոյլ արձակէ արեւ,
Արտը նմանի ալեծուփ ծովուն .
Կապոցներ շարեն կառքերուն վերեւ
Որք նոնչելով կը դառնան ի տուն
Երբ յետին նշոյլ արձակէ արեւ :

Եւ երդք օրհնութեանց դդրդին զայեր,
Հաց՝ քրտամբ շահած որքան է համեղ .
Առատ ցորենով լցան համբարներ,
Պար բռնած կայտնեն մանուկներ անմեղ,
Եւ երդք օրհնութեանց դդրդին զայեր :
(Լոյս եւ Ստուերք) Մ. ԱՃԵՄԵԱՆ

ՇԱՐՍԴՐՈՒԹԻՒՆԻ ՊԱՏԱԵՐԱՒԻ

Դաւային կեանի :




Ցեղեկուրիւնք . . . Գետինը պիտ է, բայց մշակին բազուկը
զբաւոր է. ահա կ'աշխատի նա : — 2 Յորենք հասունցած են,
հասկերը կ'իյնան հնձողին սուր մանզաղին տակ : — 3. Երկա-
հասկերը կ'իյնան հնձողին մուրճին տակ : — 4 Մայրը խոսին
թը ձեւի կուգայ դարբինին մուրճին տակ : — 5. Երեկոյին,
Հայրը օրուան աշխատութենէն յոգնած կը հանդ-
չի վերսին, հայրը օրուան աշխատութենէն յոգնած կը հանդ-
7. Մեծ հայրը թէպէտ ալեւոր, սակայն նորէն կեանք առած
կ'զգայ զինք իւր թռուանց մէջ :

Ա. Ռ. Ա. Ծ

Թէ շահիս արդար,
Վայելս յերկար :

Տ. Գ. ՍԵԽԵԱՆ



ԺԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառք . — Հաշտ, կամաց . — Արտաքրով, յուզեալ . — Բարդ բարդ, դեղ դեղ . — Աղեծուփ, մրգիւալ . — Ճնեցել, անուի ձայն հանելն . — Դղրդել, տակնութքայ ընել . — Այեր, օդ . — Համբար, տեմարան . — Կայտուել, ցարկել :

Արբորեալ ստանաւո՞ն արձակի լերածել ճնդայմամբ : Գիւտ . — Ճակաս, ճակատարաց, ճակատամարտ . — Հունձք, հոնձել, հոնձող . — Վարդ, վարդագեղ, վարդայտ, վարդապասկ . — Փախուստ, փախչել, փախստեայ, փախստական . — Նշայլ, նշուլագեղ, նշողել . — Երգ, երգասաց, երգարան, երգեցիկ, երգին, երգել :

Ընթացք շարադրութեան . — Եղանակ հնձոց :

ԵՐԿԱՅՆԱԿԵՑՈՒԹԵԱՆ ԶՈՒՐԾ

Արքայն Սողոմոն կը դանդատէր օր մը կենաց կարձութեանն համար : — «Ի՞նչ օգուտ է, կ'ըսէր նա, իմաստութիւնը զոր Աստուած չնորհած է ինձ, որովհետեւ չեմ կարող անոր պտուղը քաղել : Օրերուս մեծագոյն մասն անցուցի իմաստութիւնն ստանալու համար . և, այժմ երբ կը սկսիմ օգտիւ փորձառութենէն, ահա կը դանուիմ յեզր շիրմիս : Ի՞նչ է մարդկեղէն ի-

մաստութիւնը, եթէ ոչ ծաղիկ վաղարացամ : Զեւքացած իւր բաժակն կը ծիլ, կը բողբոջի . և, երբ կը փթթի, կը կորնչի փայլ . կը թօնի, կը թառամի առանց վայելելու իւր պտուղները » :

Այն ինչ տրտմութեամբ այսպէս կը խօսէր, աչերն վեր վերցուց և աեսաւ որ հրեշտակ մը կիրնէ շափիղեալ բաժակ մ'ի ձեռին : «Սողոմոն, ըսաւ ծառայն Սատուծոյ, կուգամ Յաւիտենականին կողմանէ : Նա լեց քո դանդատն, և ինձ յանձնեց բերել քեզ երկայնակեցութեան ջուրը : Եթէ խմես այս ջուրը, պիտի վենիս անմահ և պիտի վայելես մշտափթիթ երիտասարդութիւն . բայց երբ չխմես վայն, պիտի երթաս այն ճանապարհէն, երբ համնի ժամ օրհասիդ, ընդ որ կ'երթան համայն արարածք : Յաւիտենականն քեզ կը թողու ընտրել . ըրէ՝ ինչ որ հաճոյ է քեզ : »

Հրեշտակը դրաւ բաժակը արքային ոտից առջեւ, և աներեւոյթ եղաւ : Սողոմոն կը վարանէր ի՞նչ ընել : Կոչեց իւր պաշտօնեայներն և խորհուրդ հարցուց նոցա : Միաձայն հաւանութեամբ նորա խորհուրդ տուին արքային՝ որ անմահութիւնը ընտրէ : Այլ իմաստնագոյնն ի նոցանէ էր բացակայ . արքայն սպասեց նորա գալատեան, եւ առաջարկեց նմա ինչ որ նիւթ էր ինդրոյ :

«Մե՛ծդ արքայ, ըսաւ իմաստուն պաշտօնեայն, այս երկայնակեցութեան ջուրն քեզ համար է միայն, թէ կարես այսոց ալ արբուցանել :

— Ամենական, պատասխանեց Սողոմոն, ինձ միայն պարգեւեց այս չնորհն :

— Յայնժամ, կրկնեց պաշտօնեայն, պիտի տեսնես մի զմիոյ կնի կենագրաւ լինալն քո որդւոց, քո բարեկամաց, քո սիրելագոյն կանանց . նման ծառոյ՝ որոյ

գեղեցկագոյն պտուղներն ամէն տարի կը կողոպտեն,
պիտի արտասուես ամէն տարի , ամէն ամիս , ամէն օր
սլոտիք սիրելի առարկաներէն միոյն վրայ : Ի՞նչ հրա-
պոյր կարէ ունենալ անմահութիւն մը որում հաղորդ-
եւ մասնակից են սուդ և բախիծ անվախճան : Եթէ ա-
մէն ինչ զոր կը սիրես չէ անմահ իբրեւ զքեզ , քո ան-
մահութիւնը տանջանք մ'է յաւիտենական :

— Ճշմարիտ կը խօսիս , կրկնեց արքայն , դանդա-
տք անխորհուրդ էր և անհիմն : Իմաստուն մը որ դա-
տապարտուած լինէր մնալ յաւէտ այս թշուառութեանց
հոլովին մէջ , առանց յուսալու վախճանի մը , ամե-
նէն թշուառ մարդը պիտի լինէր իւր կենաց մէջ :
«Տէ՛ր , ներէ՛ քո ծառային եթէ անարդեց զքեզ իւր
գործերովն . ի քեզ միայն կը դտնուին իմաստութիւն և
հանձար , որովք ամենայն ինչ կը կարգիս և կը յարդա-
րես , և մականացուաց պարտ է միայն սքանչանալ
գործոցդ վրայ : »

(Ծաղիկ մանկանց)

(Թ. 1.)

Մ. ԱՍՔԱՆԱԶ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Մարդիկ չեն հասկնար կենաց մատեանն մինչեւ
չդարձունեն բազմաքիւ քերեր , բայց այն ատեն այլ
եւս ժամանակ չմնար վերծանելու :

ԹԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Թառք . — Վաղարշայամ , ուստ բուլող . — Շափիլեայ ,
շափիլայէ . — Մի զիոյ կնի , ետեւ ետեւ . — Կենացրաւ ,

մեռած . — Թախիծ , սուզ , տրմուրիւն . — Կարգել , տօնօրինել :
Ընթացք շարադրաւին . — Նամակ որդւոյ առ հայրն
յուղեւորութեան . — Անուանդ տարեդարձ զուարթ չպիտի ըլլայ
բացակայութեանդ պատճառաւ . — Քեզ կը հետեւինք մոտածմանը
քաղաքէ քաղաք . — Վաղը քու բացակայութիւնդ զմեզ սովորա-
կանէն աւելի տիսուր պիտի ընէ . — (Վերջացուցեք նամակն մաղ-
թելով ձեր հօր երջանիկ տարի) :



ԿԱՓՐԵՐՈՒ Ա.Ռ.Ս.ՍՊԵԼԼ

Աստուածըն կափրաց Ունքուլոնքուլու

Գետնասախիւծի մը տըւաւ հըրաման

Մարդկային ազգին պատգամ տանելու

Հսելով՝ «Պիտի չմեռնիք յաւիտեան» :

Սակայն Գետնասախիւծն յամրաքայլ կ'երթար

ի ճանապարհին ըզքոսնով յերկար .

Ու նոյն միջոցին Ունքուլոնքուլու

Ժամանակ գըտաւ միտքը փոխելու .

Ղըրկեց գործադոյն մողէս մ'առ մարդիկ ,

Հսելու համար թէ՝ «Պիտի մեռնիք» :

Այս երկրորդ բանիցն կատարեց զիւր գեր .

Եւ երր Գետնասախիւծն ուշ ատեն հասաւ ,

Արդէն իսկ զըմիոն այն աղետարեր

Ընդունած՝ մարդիկ մեռնին տակաւ :

Վասն այնորիկ այս անաստունք կըրկին

Ատելի են միշտ կափրերու ազգին ,

Մին՝ զի զաւետիսըն տըւաւ շատ ուշ ,

Միւսըն՝ զի արագ հաղորդեց ըզդոյժ :

Եղիշէ Ծ. Վ. ԳՈՒՐԵԱՆ

ԶԻՆԱԿԱՆ ՍՈԱԾ

Հազիւ մօրուկն կ'սկսի ընթանալ ընդոս։ արդեն
իսկ նանապարհն կարի անձուկ է իւրեան համար։



ՅԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Բառք . — բանքեր , լրատար :

Բառզբոյլ . — Անուանեմ մի բանի կենդանեաց ձագերու .
— Զագ (թռչնոց) . կորիւն (գաղանաց) . աքլոր (աքաղաղի) . ուլ ,
ամիկ (այծու) . թռժիւն (արջու) . գաւազ (բազեի) . գայլակորիւն
(գայլու) . եղնործ (եղնիկի) . կողմն (ուղտու) . — իժակորիւն
(իժի) . յաւանակ (իշու) . խուկոր (խոզի) . որթ (կովու) . վառեակ
(չառու) . մորուկ (ծիու) . կորիւն , սկնդուկ (շան) . գառն , որջ ,
բուծ (ոչխարի) :

Ընթացք շարադրութեան . — Միդասայ իղձը . — Բաքոս
իւր արքանեակներով եկած էր ի Փուխգիսա : Իւր գաստիարակը ,
Ծերունին Սիդենոս կանդ կ'առնու մի ազքեր քով՝ ուր Միդաս ,
Փուխգիս թագաւորն , զինի լընիւլ տուած էր՝ զնա յանկոցանե-
լու համար : Սիդենոս այնքան կը իմէ որ թմրած գետին կ'իյնայ ,
եւ հովիւներ կը տանին զնա Միդասայ արքունիքն : Տաննօրեայ
ինչոյք ի պատիւ Սիդենոսի , եւ յետոյ թագաւորն կը տանի զնա
է Լիւգիս յանձնել Բաքոսի : Սա , երախտագէտ , կուզէ արքային
որ եւ է իզձն կատարել . արքայն կը ինդրէ որ ամէն ինչ որում
հպէ , յոսկի փոխարկի . կ'ընդունուի ինդրուածքը :

Կ'անջնի անտառէ , արտերէ , ամէն ինչ ոսկի կըլլայ . կու-
գայ յիւր տուն , գրունք , կահք . . . ոսկի :
Միդաս կ'արթըննայ , սեղանը , ուր ամէն ինչ յոսկի կը փոխ-
ուի : Յուսահատ , կը ինդրէ Բաքոսէն յետո առնուլ այդ պարգեւ :
Բաքոս կ'ըսդունի , կը հրամայէ նմա ելթալ լսդանալ Պագառու գե-
տայն մէջ , որ յայնմհետէ կը թաւալէ իփէ եւ աւազ ոսկի :

ՅԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԻՇԱԳՈՒՅԱՆԻՑ

• բաներ որդի



ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

ԸՆՐԱԴՐՈՒԹԻՒՆՔ ՊԱՏԻԵՐԱՐ

ԳՈՒ ՄԱՐԴ :



Երբ որդին մեռնի՝ հայրը կուլայ ծանրաբախիձ. այլ ժամանակը անոր այս ցաւը միւս ցաւերէն աւելի չյարգեր, բայց տարիներով ետքը նայէ՛ մօր միտու՞ դեռ նոյն վէրքն արիւնահոս է: Արարշագործութեան մէջ այն սիրոյն նմանող բան մը չկայ. մէկ վայրկեանի մէջ կը ծնանի սուրբ՝ անհուն՝ աննուած. այնչափ բուռն որ զայն չդիտցողը կը տանի անդր քան զնիւթական բնութիւն, որ ցաւն իրեն հեշտութիւն կ'երեւցնէ, զրկումը՝ վայելք, և այս ոչ թէ դիպուածով անցորդական իմն՝ այլ անդուլ՝ անեղիլի. անոր համար ոչ նուազիլ կայ, վասն զի այսպիսի մոփոխութիւնք անկատարութեան նշաններ են: Եւայ զգաց իւր Արեւայ անշունչ մարմնոյն վրայ փարելով՝ ինչ որ Հեկարէ տեսնելով իւր Հեկտորին գետնաքարը դիակը, և ինչ որ ի կատարած անդր աշխարհի պիտի զգայ վերջն մայրը: Աբրահամու հաւատարմութիւնը պանձացրնելու համար՝ երեց մը կը պատմէր թէ երբ Աստուած իրմէ մինչեւ իսկ իւր միամօր որդին խնդրեց՝ Սուրբ Նահապեաը զայն չզլացաւ. «Ա՛հ, աղաղակեց, ունկնդրաց մէջն մայր մը, Աստուած այսպիսի զոհ մը չէր կընար մօրմէ մը խնդրել»:

Թ. Թէրճեան

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ
ինձ հասած ամէն տիրառիք կամ երջանկաւէս պատահարաց մէջ իմ մտածումս յակամայից կը դառնայ առ

մայրն իմ : Կը կարծեմ թէ, կը տեսնեմ զնա, կը լսեմ նը-
մա , կը խօսիմ , կը գրեմ առ նա : Որ եւ է ո՞վ՝ զոր
մարդ այսքան կը լիեէ , բացակայ չէ :

(Լամարդին)

Դիւս մարդաց ազն զար ուս դաս զբանահան յան
շարժ զն ճան ուս բարձրաց յան ուս ուժքաւ
մասն անծորդառան . 1 առ ամառ մաս ի ան ուժ
մաս անծորդառան .

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Բառք : — Ծանոթախիծ , ուս տրութեամբ . — Անցո-
ղական , անցնող . — Անդուց , անդադար . — Անյեղի , անփո-
փոխ . — Փարի , փարբուիլ . — Պանծացնել , փառաւորել :

Համանուանք : — Մայր , մայր . — Այր , այր . — Կոյս,
կոյս . — Որթ , որթ . — Գեղ , գեղ . — Խաղ , խաղ . — Փող,
փող . — Օդ , օդ . — Դի , դիք :

Ընթացք շարադրութեան . — Նամակ . — մօր մը հիւան-
դութիւնը . Իմացուցէք ձեր քրոջ՝ որ ամուսնացեալ է , թէ ձեր
մայր հիւանդ եղած է , այլ այժմ վտանգն անցուցած է . (ըսէք
հիւանդութեան նշաններն) . յայտնեցէք ձեր երկիւղն՝ զոր նախ
ունեցաք , եւ ապա ձեր ուրախութիւնը , երբ բժիշկն յուսադրեց
զեղ . — ինամքներ՝ զօրս ունեցաք ձեր մօր համար . անմիջապէս
չգրեցիք նորա վիճակը , որպէս զի ձեր քայլը չխռովէք . — Խոր-
հըրդառութիւնք այն կորստեան վրայ՝ որ ձեզ սպառնացաւ . —
ինդրեցէք ձեր քրոջմէն գալ :

Ա Պ Ա Գ Ա Յ Ն

Ի՞նչ փոյթ թէ ձըմրան ցուրտ սառամանիք
կը ծածկեն դաշտերն ու հիւղին տանիք ,
Բայցէք աչերնիդ , տեսնել ծիծաղկոտ
Ամառուան հունձքերն՝ լերանց ի ստորոտ՝
Որ կ'ամին ձեր մօտ :

Ի՞նչ փոյթ գիշերուան թէ մըթին թեւեր
կը պատեն զերկիր՝ ըզծով եւ զեթեր .
Բացէք աչերնիդ , տեսնել քաղցրահոտ
Սիւզերով իրնկեալ ջինջն այն առաւօտ :

Որ ծագէ ձեր մօտ :

Ի՞նչ փոյթ թէ աղբերք ցամքած են համակ ,
Եւ չըտան ըըթանց ցոլոյ մի կայլակ ,
Բացէք աչերնիդ , տեսնել ընդ արօտ
Վըճիտ վըտակներ՝ ոյց ջուրց էք կարօտ՝
Որ սահին ձեր մօտ :

Ի՞նչ փոյթ թէ խոնաւ խորչ մի անձկագոյն
Վըսպառէ ոգիկն առողջ ձեր մարմնոյն .
Բացէք աչերնիդ , տեսնել մըթնոլորտ
Զովացիկ ունամապ , եւ ծըծել զայն օդ՝

Որ շընչէ ձեր մօտ :

Ի՞նչ փոյթ թէ ամէն կորուսած բարիք՝
Աղքատ ու անտէր տըրտում թափառիք .
Բացէք աչերնիդ , տեսնել հոս ու հող
Աղտամանդն անգին , ոսկին նախանձոտ՝
Որ շողան ձեր մօտ :

Ի՞նչ փոյթ թէ բաղդին նայուածքն անողոք
Լըռեցոյց ձեր ձայն՝ նըւագն ու բողոք .
Բացէք աչերնիդ , տեսնել անաղօ՛
Թըռչնոց խուռն երամ ծաղկանց ի ծըզօտ ,
Որ կ'երգեն ձեր մօտ :

Ի՞նչ փոյթ թէ հացի քաղցըն դըժընդակ
կը կըրծէ ձեր սիրտ , կըքէ ձեր քամակ .
Բացէք աչերնիդ , տեսնել ձոխ ու յորդ
Սեղան մի պատրաստ յոսկեղէն անօթ ,
Որ կանգնի ձեր մօտ :

Եւ ինչ փոյթ դարձեալ թէ բընաւք տան խոյս
Ու շրմին բացուի խորն անդընդասոյզ,
Յերկինս դարձուցէք աչեր նըւաղկոտ,
Եւ տեսէք զԱստուած բարւոյն առաջնորդ՝

Որ հըսկէ ձեր մօտ :

ԵՂԻՇԿ Ծ. Վ. ԳՈՒԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Յոյսն փոխառութիւն մ'Է յերշանկութենէ :

ԾՍՆՕԹՈՒԹԻՒՆ

Բառք . — Սիրք , մեղմ նով . — Համակ , բոլորովին . — Անձկագոյն , նեղ . — Անդորք , անզուք . — Անաղօս , պայծառ :

Ընթացք շարադրութեան . — Աւածք . — Երկայն յաջ-
զութիւնք երբեմն կը սահին մի փայրկնի մէջ , ինչպէս ամառ-
նային ջերմութիւնք կը վտարուին մրիկի օրով . — Մեր ապահո-
վագոյն պաշտպանն երն մեր տաղանդներն են . — Վեհանձնու-
թիւնն այլց ցաւերովն կը տառապի՛ որպէս թէ ինքն լիներ այնց
պատասխանատու . — Երջանկութիւն եւ իդք չեն կարող ընա-
կակց լինել միմեանց . — Իմաստունն կորստեամբ կենաց կը շա-
հի զիեան . — Երբ ժամ համարի , պիտի մեռնիմ , այլ պիտի
մեռնիմ նման այն մարդոյն՝ որ զաւանդն կը դարձունէ առ փոխա-
տուն :



Վ Ո Ս Բ Ո Ր Ը

Քանի՞օն գեղեցիկ և վսեմ է վոսքորն , Երբ միա-
պաղաղ կը հայլիանայ նա հանդէպ երկնից , ոյր կա-
պոյտէն կը ժպտին ոսկերիբ աստղունք ամրան դիշ-

րոյն : Գո՛գ ադամանդեայ թագ մէշայն , զոր պարզե-
ւածիենու Պոնտոսն ու Մարմարան , ապմակելու , համար
երիսասարդ Եւրոպան ծերունի Ամսոյ հետ : Այսիւն
Քանի՞ մոդական , հոմերական , հնապայն քիւրազան
գեղատեսիներ , զորս այցորդին ընդառաջ ի հանդէս
կածեն իւր ափանց նկարէն ամիկիթատերք , նա
ուաւել յորժամ գարունը կը ծաղկազարդէ , ամառն
կոսկեմրդէ և բնութիւնն կոգեւորէ զայնս :


Մըքան մեծավայելուչ կը հանդիսացնեն զԱյն Սկ-
րայներ , որք ծովուց և ցամաքաց աշխարհականերու
պէս յաղթապանծ կը բարձրանան . նորա ափանց վրայ ,
և որոց ահեղ ու շքեղ դէմքէն աւելի ահեղ ու շքեղ
նշանակութիւնն , որքան զքեղ դողացնեն վսեմ զմայլ-
մամբ , վսեմագոյն զմայլմամբ մ'եւս կը դպրդէ զքո
հոգի այն ճարտարապետ հանճար՝ որ արարչագործած
է զայդ հիսակերտներ : Որքան շացուցիչ , հրապուրիչ կը
գործեն փայլն ու շուքն Վոսբորին գեղեցկակերտ ապա-
րանք , կիանալի ամարանոցը նախարարաց , դեսպանաց
և մեծատանց և նոյա վսեմ բնակչաց պետական , պաշ-
տօնական ճոխապանծ ներկայութիւնք , խրամաճանք :

Խոկ ո՛չափ հմայելի կառնեն մեզ Վոսբորն այն սիրուն
գիւղօրէք : Ումանք ջրարբի հովտաց մէջ թաղուած , այլք
առ ստորոտս պրակեղ ըլրակի մի տարածուած , մի
քանին արծւոյ բոյներու նման մամուստ ժայռերէ կախ-
ուած , ուրիշներն կուռանդանի մը կամ սարտւանդի մը
վերայ սլացած : Հոս բուրաստան մի փթթինագեղ ,
հոն պարտէղ մի պտղաշատ : Սատ անտառ մի , անդ՝
բլուր մի , այլուր մարդ ու մարմանդ : Քիչ մ'աւելի հե-
ռին գեղածիծաղ զափիվայր մի , ոյր կողերէն , իբր
յատեանց կը ծորէ լուսաղբերն : Դէպ ի վեր՝ լերին ար-
տեւանէն կը խոյանան սարտւոյբն կամ գեղակ մի : Քայ-

ԴՅԱՆ անդամ՝ մի հասարակաց զրօնավայրեր։ Ամենուր ճեմուղիներ, ծառուղիներ, ուր կը գեռայ զրօնասիրաց թափորը։ Եւ երբ ամրան լուսնկայ գիշերն՝ իւր ստուերներն իրբեւ շուշը կը ձգէ վարորի այս հիատեմիլ համապատկերին վերայ, ու երկնից ջահերուն ճետ՝ երկի ջահերն ալ վառուելով։ Այս մի տուն կը լինի ստեղամուն մի, ո՞րքան կը բիւրապատկեն վարորայ, առփունք իրենց դիւրն ու հմայք։ Ապարանին սկսեալ ցհիւղեակ կը պարպուի, և վոստոր իւր ալեաց չափ խառն ու ծփուն հոգիներ կը համիէ գեղազուարձ ափանց վերայ։ Ես կերթամ ման դալ մենիկ, մերթ սա հեղասահ առուակին եղը, սիզուին վերայ։ Իյր թաւշին ի ծոց կը նիրհէ լուսնեկին դոզդոջ նշոյլը։ Մերթ կերթամ հանգչիլ դա վարսագեղ ծառոյն ներքեւ, ոյր տերեւոց մէջէն, իւր յայզերն կ'երգէ մելամաղձոտ ֆիլումելը. Երբեմն յասմկեայ սարքինայով քողբուած պատշգամի կը քաշուիմ, երազուն աչքով կը հայիմ ծովուն, երկնքին, և, երբ աշւդադրած է վերջին ուաքը խոսվելէ զծովափին, և վերջին աչքը՝ պլոսորիէ զալեակն, կը նետուիմ դա ծիրանեծ ածկոյթ մակոյկին մէջ, և ցյադուրդ կը շրջագայիմ արծաթծազիկ վոստորը։ Մովակն յայնժամ իմ տաճարս է, երկինքն՝ ինձ ձեղուն, աստղունք՝ կանթեղք, հողմունք՝ խորհրդակից, ստուերս՝ ինձ ընկեր։ Անդ միայնակ կը սիրեմ ծովուն ու աստեղաց Աստուածը և կ'աղօթեմ նմա։ Կը ծրարեմ իմ գրօնանաց յիշասակը՝ գիշերոյն ստուերաց, լուսթեան, ալեակին, նշաւին, սիւքին և թեւնակաց ներդաշնակ ճողվիւնին մէջ, որ պահեն զայն մշտաթարմ։ և երբ ամէն անդամ որ նշին ծաղիկ, դադթական ծիծառն ի բոյն վերադառնայ, և մարդիկ ալ, նոր ի նորոյ, և քան զիս յետոյ, գան վոստորի

ՇԱՐՍ.ԴՐՈՒԹԻՒՆՔ ՊԱՏԿԵՐԸ

Ի՞նչալէս կը լուսաւորեն։



Տեղեկուրիւմք. — Ճրագներ, որք եղանց եւ ուխարաց ճարպով կը շնուրին, ունին անպատէհութիւներ [թուեցէք զանոնք]։ Մումի, որք կը շնուրին զտուած ճրագուով [թուեցէք առաւելութիւնները]։ Կանքեղի. — Քարիւղ, կը գտնուի հողյն մէջ, մասնաւորապէս ի Միացեալ նահանգ։ — Լուսաւորութեան զազ հանգածութէն կը հանուի։ — Ելեքտրական լրյուն ամենէն փայլուն լցուն է։

գեղազուարձ միթմնց վրայ կը օնուալ Երդել, վկայեն և
ըսեն նոցա թէ՝ «Ես ալ զրուայ, աղօթեցի, երգեցի
Վոսրորայ դրախտավայր՝ ափանց վերայ»¹²

ԱՐՄԵՆ ՀՈՒԽԻՆԵԱՆ

ՀՅԱՆԴԱՐԱ ԱՐԱ ԱՐ ՀՅԱՆ ԱՐ
Ա Ռ Ա Շ


Աւխարիի մէջ չկայ գեղեցկագոյն բան հան արդա-
րակորով ուղղութիւնն:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Բառք. — Միականադ, միակտուր (ԷՒ-Ք) . — Գոգ,
կարծես թէ . — Բիւրազմ բիւր զանազանութեամբ . — Նկա-
րեն, զոյնզոյն . — Ճարտարակետ հանձնար, կ'ակնարկեմք զա-
լվան զերպատանին՝ յօրում նեանաւոր հանդիսացան ընել զաս-
սակերտերու շինուրեամբ, Յակոբ պէջ Պալեան, Սարգիս պէջ .
— Հիակերտներ, հիանալի ժեներ . — Զրարքի, ջրոս . — Արե-
ւան, լերան զլուխ . — Սարաւոյր, բագան պալս . — Դիր,
յափշակուրին . — Սիզուտ, կանանչաւէտ տեղ . — Ճիլունի,
սխալ . — Թեւմակ, թի :

Ընթացք շարադրութեան. — Նիւրոց վերնազրեր . —
Ժողվուրդն անառուած է անչոդի մարմին . — Ազօթք . — Թօշ-
նեալ վարդը . — (ՍԱՀ ԱՆՁՈՒԵՒ) . Կէթէ ութուներեամեայ
հասակին մէջ մեռնելու պահուն իւր կենաց բոլոր ներշնչութեալ
համառօտեց այս խօսքին մէջ՝ զոր դուք պիտի բացատրեցէք .
«Ծայ», աւելի լցու ամոց ՅԵ ՅԱ ՅԱ ՅԱ

ՅԱՅՈՒՅ. Յ



Հանդիսական աշխաց պար, ունիրակիք . — Անոյութեարձ
[աշխաց գերա ու ան անման մէջ անասին չկայ անասին չկայ
անաս առ ան ան] Անոյութ հաւառ մհանձն չե՞ն ուր, Ան Ա-
սան, չե՞ն մորու կամեաք չե՞ն քրամաք . Արդաւան՝ [աշխաց գերա
պար մակարաւառ] . — Արձանաք յանձնանի հ անքարաւաճ
պար մէջնաւառ նոր նախարարիք . — Հանձն չե՞ն մէջնաւաճնաւ
պար մէջնաւառ նոր նախարարիք . — Հանձն չե՞ն մէջնաւաճնաւ

պար

Ա ճամանի ու լարավայր առաջարկ
վեցը բարձր անողոք լի ան» ։ Եթ արդև մնաց
Զիք վատագոյն ճողւոյ ախտ, բարօսով
Քան թէ լինել ապերախտ :

Արօր վէմէն նահանջէ.

Լաւ սերմ լաւ արտ պահանջէ :

Մ Բ Ա

Լաւ է բացէն միշտ ըրջիլ,

արտա մտ մազ սիրաթիմիքը լորի ու միջամտած

Ճամփան գանէ կոյր: մմայով որբու խորիօտ

Անմիտն է կոյր բաց աչքով:

Եղիր երբեմն մունջ ու խուլ.

Խօսելու տեղ թուքը կո'ւլ:

Չափ — . (Գոց երնիր մէջ խօսքնէ անես) . Համար
անջ — . զԱղձակես սամի դլանար նուետ: Ու — . ոյ սենար
ամբ նեմիտամիքար, առանու ամբանաբառ — . Ելորմար, նմէ
արտ թաւ մասաւ ամբանաբառ: Ելորմար, նմէ
Շատ խօսքէ շատ սլըտադող: Առաստարն մայ
թիր սիրաթիմիքը մասանէ, պիչ մալ թող: առամետմաս
մասի — . տուր, մասան: — . տուր սիրաթիմիքը, նմենժիահաւ — .
Չափ — . կիրքով իսօնքը խոր փոս է, վոյր նորմ, նմէ
յնորին: — . ու առաջանամար մայութիւնը մայութիւնը առաջանամար
Մեծի հետ միշտ մեզմ խօսէ: առաջանամար

— . ամբանմասի բարում — . մասաւ առաջանամար կազմը
Ոչ ոք մինչ ան պազմիկ է: առանձ առանձ մասաւ առաջանամար
Եւ ոչ հոգի տակի միծ: Եւ (1) — . կը բար յանձ
արտաքիւնը ու առաջանամար ու առաջանամար մասաւ առաջանամար
Ով որ կառնու ու չի առաջանամար առաջանամար առաջանամար
Օր մը հաց ալ չի գըտնար առ այս առաջանամար

Յ. ՈՍԿԱՆ

այսու պահու մասն օթաք բայց առաջ առաջ
առաջ ով առ ճն լուս, մայտաւառու լուս: և առաջ
Ընքացք շարայրութիւն: — Սփոխական զիւ, որդու մը
ուղիթալ նորա հօր մանուան առ թիւ: — Ցաւակցութիւն: —
Հանգուցեալ կը թուլու իւր որդւոյն ի ժառանգութիւն առաքի-
նութիւններ եւ բարի օթիւակներ, որ իրական ստոցուտք են,
եւ, իրեւնի պատահն՝ քրիստոնէի մը կեցազը և, գեղեցիկ մահ
մը: կը մազմէք որդւոյն հօրը կենաց աման շքնաղ կեանք մը անդ

— ըս մզմայր ըս լի առ գեղուր ըս առար մաս
մասն առայնացը ըս — . մայտաւառու լուս առայնացը ըս առայնացը ըս
ՀԱՆԴԻՍ Ս. ՅԳՈՐԴԱ. Յամայնասուրան

ա ըմայսու իւր առառուն, մասն իւր չ մայնառու
ա Ս. ՅԳՈՐԴԱ եղբայրութիւն մը կատապուտած է ի
վէ վէ երկար ժամանակէ իւր իւր: Այսն եղբայրութեան
նպատակն եղած է քաջալերել և զարդացնել այգեգոր-
ծութիւնն: Եթէ ո'ր և է այգեպան մը զանց ըրած է
իւր այգեւոյն պատշաճ մշակութիւնն, իրենք կը խնա-
մէին զայն, և բնականարար կը տիրանային այդ տար-
ուան արդեանց: Ս. ՅԳՈՐ ևս տարին երկիցս մասնախումբ
մը կայցելէ այգիներն, կը նշանակէ խնամք և զանցա-
ռութիւն, մրցանակներ կը բաշխէ իւրաքանչիւր երեք
տարի: Ս. ՅԳՈՐ եղբայրութիւնն է որ տասն և հինգ կամ
քասն տարին անդամ մը կը կատարէ մեծ տօն, տեսակ
մը դիսաբանական ներկայացում, ում կը մասնակցին
հարիւրաւոր արք, կանայք և մանկունք, և ուր կը
փութան ներկայ գտնութիւն հաղարաւորք ամէն երկիրէ:
և Դիոււար է որու գաղափար մը տալ սոյն հանդիսին
գրայ, այնքան տարօրինուկ են իւր տարագներն ու դե-
րերն: Թափօրին կ'առաջնորդէ նուազած ու այս իւրաքանչիւր
մը եօթ անսառուն անձերէ բաղկացեալ: Ապա կ'երեւի
փետրազարդ հրամանատարն և իրեն դկնի հարիւր

զինուորաց վաշտ մը ռահենալով։ Ամենէն աւելի ուշագրաւ է հսկայ դրօւակալիքն, որոյ մեծադիր գունաւոր պատկերն ամենուրեք կը տեսնուէր ի Զուիցեր այս տարի։ Աբրամ, այսինքն նախադահն, լրջադէմյահաւքայլ ի լաւածնորդէ Խորհրդականաց, որոց կը հետեւին խումբ մը երիտասարդէք մրցանակաց կողովն ուսւերնուն վրայ, և իրենց ետեւէն մրցանակ ընդունող եօթանամսուն հպարտ այգեգործք, և ի վերջոյ այգիներն այցելող մասնախումբն, որ կ'սկսի այլաբանական մասն թափորին, չորեքին խումբեր չորեքին եղանակաց համապատասխանող։

Առաջինն է Փալէսինն, Աստուածուհի խաշանց ու հովըւաց Հառովմէտական տարագով քառասուն նուագածուք կ'առաջնորդէն։ այս խմբին Ութ անձննք կը կրկն ընձաներն յուսա ճաղլկապարտ կողովներով։ Հեռ տըզհետէ կուգան ի տես Փալէսի քրմապեան և իւր ընկերք, ապան կայտառ մանկունք գարնան, որոց գինի հսկայ, ու պաճառաճագարդ եզներից քաջաւած փառաւոր կառքն, յօրում ծաղկապասի ամայչովանւոյ մը տակ աթօռի մը վրայ կը բազմի գեղանին Փալէս վսեմ, ան վըրդովի կառքին կը հետեւին յաջորդաբար այլ եւ այլ խմբերն, նախ աւրից երեսուն և վեց մանկունք գարնան, մերկ սրունդներով, մերկ բազուկներով և գոյնորդոյն ծաղկունք ի ձեռին։ Ասրա վաթաւն և չորս պարտիզաննք ու պարտիզաննէիք, գանազան տարագոներով և գործիներով, ապա երեսան և վեց երեջանիկ հովիւր և հովուուհիք որոց կ'ընկերանան իրենց պիրեւագոյն ծխարքն, և այծք, որիք կը հրճուին իւրեանց տեւարց գուտանքներով։ Ասյա կը յաջորդէն եւ րեսուն և վեց երկսեռ խսաբագք, որոց գինի կը յառ ռաջանայ յամրընթաց ճռնչածայն ծանրաբեռ սայլն

խոտի, որոյ վերայ կ'զբօննունք անհոգ մանուկներ եւ ահա՛ Ալպեան փողահարք, ահա՛ անդէորդք իրենց պարարտ կովերով ու հորթերով գումարած Յնատան

թափօրին երկրորդ մասը կը ներկայացնէ Դեմետերէի, երկրագործութեան պաշտպանուհոյն խումբն . այն ալ իր բազմաթիւ երաժիշտներով, քուրմերով, ամրան մանկանոր, հնձողք հասկաքաղք, կասիչ, արօտավարք, սերմինացանք, աշօրեպանք, ևայն։ Երրորդն է Պաքոսը, թագաւոր աշնան, ամենէն ծիծացարք ու հետաքրքրական խումբն, շահապետք ու զաշարք ու հետաքրքրական խումբն, այծամարդք, երփներանգ կառքն Պաքոսի, քառասուն այծամարդք, երփներանգ կառքն Պաքոսի, քառասուն ևութը մատաղատի քրմանոյշք ծնծղաներով, պսակներով, Սիլենոս Պագոսի գիրուեկ, խրախսամիտ սանահայրն, քառասուն նուագածուք այգորդաց, այդորդք և տերեւաթափ, ողկոյզն Քանանու, այգեկութք, տակառագործաց սայլն, այգեկթաց սայլն զարդարուն, մսավաճառք, որսորդք։

Նոյի տապանն ու շինական հարսանիք մ'է վերջին խումբն, որ կը ներկայացնէ ձմեռն, եղանակն հանխումբն, իր կը ստեեան, խրախսանաց ու ընտանեկան հաճոյից։ Ներկըստեան, խրախսանաց ու ընտանեկան հաճոյից։ Ներկայ են ամբողջ քաններկու քաննինք՝ իրենց տարրեր տարազներով իրր հրաւիրեալ ի հարսանիս։ Հարիւր անձանց զինուորական մէկ չոկատն կը փակէ այս երանցանց կինուորական պարագաներն ալ ունին իւրեանց կայն թափօրն։ Բոլոր խումբերն ալ ունին իւրեանց յատուկ երգերն, խօլական պարերն ու խաղերն։

Հուսկ ապա, ամենեքին, նուագածուք և դերակատարք, արք և կանայք ու մանկաի, բազմութիւն կատարք, գործ և կանայք ու խուռներամ, կը միանան հնչեցնելու օրհնորդք մը առ բարձրեալն Աստուած ճմարիտ, զոր պատած են իւրեանց քաջարի նախահարք։

(Արեւելք) Աբր. Տէ՛ր ՅԱԿԹԵԱՆ

արմենան յուշգ. Եղեցիկ ԲԱՆՔ այս լուս ։ լուսով
ունից քրդաբան ածու ։ պահանջման մասով առաջ այ

ԱՍՏՈՒԹ Երանուրեան համար ստեղծին զմարդիկ,
իւրեանց յանցանօք տարաբադդ կը իթին նուա :

մասուն մաս առարկան մաս կան ուն բարձր ։ վեց
խոյնուաց ։ Խոյնուաց ուն մաս ուն մաս
էլուսու ։ պահանջման մաս մաս մաս մաս

ԲԱՐԵ : — Տարագ , հազուս . — Կասիչ , կասող . — Խը-
րախամիս , ուրախ . — Խօյական , յարախական :

ԼԵՐԱԳԻ շարադրութեան . — Սրասելլս . — Երկու չա-
րագործք որ Հռովմայ մի եկեղեցին մոտած էին սպաններւ ։ Հա-
մար այս հռչուկաւոր երաժիշտը , Հրապարութեով անոր ձայնին
քաղցրութենէն , և վերջ պատարագին անոր ուրքն կիյնան եւ ի-
րենց մոտքրած ոմիրը խոստովանելով անկէ ներում կը ինդրեն :

384

Դ Պ Ռ Ա Մ

լըսէ , եղբայր , թէ դըդմենին այս , մասունք
ինչ խօսեցաւ օր մը ինքնին , Հորին մէ չու
էր ինչու մարդիկ ամէն :

Անխելքին դըդում ըսեն : ախոյուանձի սմանմա-
էց , ուրեմն ըսել է ուրու : մայսիակ մայզ

թէ դըդումն անխելք է մայզ քանի քանու
քննենք , անխելքն ՞վէ է , ես եմ , իւսու :

թէ մարդիկ են , օնն հաստատեմ . պահանջ
Նայէ մէկ մը տեսակ տեսակ առ անհայ

Սա մեծ խօնին ձըմերուկաց . ուր ուր ուր ուր
Նայէ մէկ մալ մարդկանց խելքի մէ ծառ
Որ ըրեր է դոքա յարգի :

(Ամենու)

Գէթ մէկ օգուտ իրենց ունին ,
Թող ինձ ջոյց տան . Եթէ ունին .

Հիմակ շատ լաւ
Միտքս ինկաւ :

Զի զովութիւն մարդկանց ամէն
Կուտան եղեր ամրան ատեն ,

Թէ լոկ այդ է

Այդ ալբան է ապ մմայդառափամն
Բայց իմ օգուտ համեմայժմէն ու ութամն

Ամէն տեսակ անուշեղէն
Ու կերակուր ես կը լինիմ ,

Թող որ ամէն տեղ կը բուսնիմ .
Եւ ձմերուկէ դիմացկուն եմ

Եւել համեղ , խոշոր ալ եմ ; ապաց Եպաց
Քիչ մը դդում հոս կանկ առաւ .

Թէրեւս զուր կը մեղադրեմ ,
Մարդիկներուն սանկ նանկ կ'ըսեմ ,

Կարելի է տեղս է պատճառ ,
Որ ինձ նոքա պատի չեն տար :

Դարուվեր տեղ մը բուսած զանուն միքան
Միս մինակ հոս եմ մընացած

Եթէ երթամ

Ու միանամ

Խառնըմ մէջ ձմերուկներին ,
Գուցէ մարդիկ ինձ ալ նային :

Փորձեւան զի ուներազն չափարափ
Տեսնեմ :

Հսաւ , բրդաւ իր արմատէն ասինուն . մի ծայրա-
գըլտոր մըլտոր դէպ վարդարէն ազգին միքան
Գալով մըտաւ դետեղեցաւ , և այս քանակ է
Բայց ինչ վախճան , հոն ունեցաւ , ապաց մայ

Դըդմին երես նայող չեղաւ,
Հոն լըխկեցաւ ոչընչացաւ:
Վ. ՀՀ Ե. Վ. ՏԾԲ ՄԻԱՍԽԱՆ

Ճանա բնափ բան մայ կայաց մի
ՃԳԵՑԻ ԲԱՆՔ մատուց

Սնափառութիւնն յանգիտութենէ յառաջ կուգայ:
Սնափառ մարդն կոյր մի է որ չնախեռ զանձն :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ընթացք շարադրութեան . . . Պատմութիւն եւ գիտութիւն . . .
Աշխարհաշրջիկ ուղեւորն եւ գարերու խաւարին մէջ խորասուզ-
եալ պատմագիրն ամենութեք եւ միշտ կը պատահին մարդոց մէջ
եղբայրասպան վէճերու տեսարանին :

Ընդհակառակի , ի՞նչ անդորրութիւն այն մոտաց համար , որ
կը նկատէ բնութեան եղելութիւններ եւ օրէնքներ , թէ՛ տնկոց
կենաց մէջ , թէ՛ նիւթոց կանոնաւոր շարժմանց մէջ , թէ՛ երկ-
նային մարմնոց հրաշալի ներդաշնակութեան մէջ :

ՀՅԾ

ՄԻՔՍՅԵԼ ՎԵՐԻՆՈՅ

Փաղաքուշ երազներ կը հաւաքուին որրանի մի
շուրջ . ապագայն այնքան շուայլ է քաղցր խոստմամբք ք
նորածին մանկան մը համար , զի անհնար է առանց
խորին տիրութիւնն մը զգալու խորհիլ այն ակնկալու-
թեանց վերայ՝ որք կ'աներեւութանան մեռնող ման-
կան դագաղին հետ : Այն , ծերունոյ մը կեանքն գո-

նէ գիտենք թէ ի՞նչ եղաւ , մինչդեռ չենք կրնար ըսեւ
թէ տղան ի՞նչ պիտի ըլլար : Դայլ զէ չէ մայ զայն
Հայրենիքն աւելորդ օգտակար քաղաքացիներ , չու-
նի , եւ վասն այսորիկ կ'արտասուէ վաղամեռիկ արա-
րածոյն վերայ որ կը չինանի իբրեւ ջահ և որ թերեւս
պիտի լուսաւորէր զայն : Հանձարեղ մարդոց արժէքն
իմանալով է որ կը ցաւինք այն մանկան վերայ որ բա-
րերաստիկ տրամադրութիւններ ցոյց կուտայ յանձին ,
որպէս թէ իւր բնտանեաց համար այնքան ողբավի ե-
ղող կորուստն անդարմանելի պիտի լինէր նաև մեզ
համար . և արդէն պատանեկորթենէն առաւել ի՞նչ
գելցիկ բան կայ , և մօր մի կակիծէն աւելի ի՞նչ տա-
ժանելի վիշտ :

1502 յաւնիա ամսոյ օր մի պատանւոյ մի դագաղն
կ'անցնէր Հռովմայ մէջն , աւատել քան երեք հազար
անձինք անոր կը հետեւէին : Այդ նշանաւոր մայրա-
քաղաքին բոլոր գիտունք և նշանաւոր անձնաւորու-
թիւնք գլխաբաց կը քալէին դագաղին ետեւէն , զոր
կը զջապատէին Հռովմի բոլոր դպրոցաց ուսանողք :
Նա որ վերջին բանն կը ննջէր եղերական պատասխն
արծաթեայ խաչին տակ՝ վեմ մանուկ մէր արժանի
ամէն աղեկէզ ցաւոց : Մահն տիրած էր այն աղնի
սրտին՝ յօրում բոլոր առաքինութիւնք ապաստան մի
գտած էին գոգգես , և սառեցուցած էր այն անրիծ
ճակատն՝ որ արդէն բազում փառապանձ պասկօք
պինեալ էր :

Կը կոչէին զնա ուսումնասէր մանուկ , հրաշալի մա-
նակ , և բոլոր այն տիտղոսներէն մշմարտասէր մա-
նուկ , մականունէն միայն կ'ամորժէր ինքն : Երբէք
նուկ մականունէն միայն կ'ամորժէր ինքն : Երբէք
առախօսութիւնն չաղարտեց նորա շուրթերն , չէր գե-
տեր նա թէ ի՞նչ է ներութիւն գանել յանցանքի մը

Համար, կամ առաւել ճշխրտութիւն խօսելով՝ պար-
ափնք ըսել թէ չէր գիտեր նա ի՞նչ ըսել է յանցանք
գործել: Ութ տարեկան հասակին մէջ՝ Փլորենտիայէն
ի չոռվլմ զրկուելով՝ երկու տարի միայն պէտք եղաւ
նմա աւարտելու համար իւր դպրոցական ուսումը, Մի-
քայէլ Վերինոյ այսչափ ի սուղ ժամանակի ուսաւ լիր
հրաշխւք: Դեռ տասն և չորս տարեկան չկար երբ տը-
պագրել տուաւ Բարոյական ասացուածք վերնագրով
գիրք մի որ լնդհուպ դասական եղաւ և թարգմանե-
ցաւ եւրոպական լեզուաց, և ձեմարանաց բազումք
ընդունեցին զայն իբրեւ բարոյականի լաւագոյն ճառն
ի պէտք մանկութեան:

Հոկ օգտակար և հանճարեղ մատենադիր մի չէր
նա, նաեւ բարեկրօն մանուկ մի : Իւր սրտին ամբծու-
թենէն կ'քաղէր իւր ոճոյն մաքրութիւնն . յոյժ ճշմա-
րիս է թէ հանճարի լաւագոյն առաջնորդն աստի-
նութիւնն է :

Նորա բարձր իմացականութիւնն չէր խափանած ի
նմա իւր համարի մանկանց սովորական զուարթու-
թիւնն . թէպէտեւ իւր դասընկերաց մէջ առաջինն էր ,
նուազ ծիծաղկոտն չէր ի նոցանէ , և լուրջ կերպարան
մի այն ատեն կ'առնուր երբ նոքա խաղի ժամանակ
պատշաճից սահմանէն դուրս կ'ենէին . յայնժամ կ'ար-
ձակէր ի նոսա տխուր ակնարկ մի , կը հեռանար , և
այս պատկառութ լրջութիւնն ընդհուպ ի զգաստու-
թիւն կը յորդորէր յանցաւոր աշակերտներն : Պաուր
Լասսիա գիտունն՝ որ Վերինոյի դասատուն լինելու
փառքն ունեցաւ , ուսման ագահ մի ուրիշ աշակերտ
եւս ունէր , այլ նորա ըմբռնութմ այնքան զօրաւոր չէր :
Պէլվիսինոյ (այսպէս կը կոչուէր Լասսիայի երկրորդ ա-
շակերտն) գիշեր ցորեկ կ'աշխատէր գերազանցելու հա-

մար իւր մաստալատի այսովեանն , բայց առանց յաջութեանն , զիշու գէջթ հաւասար նմա : Նախանձն՝ որ ո՞չ թէ ա-
նիրաւ լինելուն համար միայն մոլութիւն մ'է , այլ վա-
սըն զի կը թշուառացունէ նաև իրմով վարակեալներն
և վերջապէս կրնայ սպաննել զանոնք , նախանձն տի-
րեց Պէլվախնոյի սրտին ; Հիւանդացաւ , և նոյն իսկ
մեռնելու վտանգին հասաւ . չէր ուղեր յայտնել ու-
մեջ իւր ծինութեան պատճան . Վերինոյ գուշակեց
զայն , և որովհեաեւ կը միրէր իւր աշակերտակիցն եւդ-
րայրական սիրով , սկսաւ հարեւանցի կերպով պատ-
րաստել իւր դասեր : Այսու տաժաննելի աշխատութեան
ենթակայ կը լինէր նա՝ որ այնչափ դիւրաւ կը պատ-
րաստէր լաւապէս : Ոչ սակաւ օքեր գործածեց այս
ազնիւ խորամանկութիւնն . Պէլվախնոյ առաջին թիւն
ընդունեց և այնպիսի հակառակորդ մը գերազանցած
լինելու ուրախութիւնն բժշկեց զնա ;

Ոչ ոք կրնար բան մի գիտնալ այս գեղեցիկ գոր-
ծոյն նկատմամբ : Իւր դաստիարակն կարի սահիեց զնա
հարցումներով , վասն զի չէր կրնար ըմբունել թէ ինչ-
պէս Վերինոյ շատ անդամներ կրցած էր ընել այնքան
խոշոր սխալներ : Նա որ չէր գիտեր ստել , պարզու-
թեամբ խոստովանեցաւ ձմարտութիւնն . իւր վարժա-
պետէն գաղտնապահութիւն խնդրեց և աղաչեց զնա
տակաւին երկար ժամանակ առաջին թիւն տալ Պէլ-
վախնոյի :

Տասն և հինգ տարեկան էր. իւր անդւան համբաւն
կը հնչէր գիտնական աշխարհին միջ։ Իտալիա ուրա-
խութեամբ կը դիմէր նորա հասակին աճումն իբրեւ
իւր երկրին պատուաթեր հանձարն, բայց մահն իւլեց
զայն։ Վշտաց առարկայ, մը եղաւ նա Փլորենտիոյ հա-
մար որ ծնած էր զնա և Հռովմի համար որ կը հպար-

տանար զայն ժառանգելուն համար : իւրաքանչյուր ոք
լացաւ զնա . իւր կորուստն հասարակաց աղէտ մ'եղաւ :

Թարգմ. Ե. Ա.

մանաւածիայի խնոր ձամ մետառուն ով ի՞ն ոց
շի մենայն . գլուխ բանարա լունը և խոնչի և
թոյ մաս և , ար աղաւ պահան պահիսի մը ըդ
ու յանալու դպրու ու . ասաւ մաքսար արձանա
բանականութեան յադրանակն Է բարւու կենցաղա-
վարիլ նոցա հիես՝ որք գուրկ են յամնանէ : այսու մայր
աւար խորչի վերանակը ասաւ . խորչ մաքսարա
մանենաւու մասունքն է : զամար զայ լուսան
ուսար զի արդիս մարդի ու ու ու զմել ով լուսա կման
ուս ը մենանոր զայ արտ Յ : սիրայ զամաս
մայր Թառք . — Պանեալ , զարդարուած . — Ախոյեան , հոկա-
ռակորդ . — Ծիրուրիսն , մատում :

Ընթացք շարազրութեան . — Զեռքն . — Բացատրեցք
թէ հ'նչ բարձր նպատակաւ ըսած է Արհաստել աս խօսքը . «Ա-
սուած տուաւ մարդոյն ձեռաց գործարանն որպէս զի նա գերա-
զանց լինի այլ կենդանիներէն :

ԱՅ ԳՈՅՆԱՐԻԿԱ

Ո՞վ է պղտիկն այն աղջիկ և յափէմ միաբառ
Սիրուն աղւոր և փափիկի ,

Սեւ մազերով մեւ աշքով բնի և մաս
առյու ինքը բոլոր խատուտիկ .

Ո՞չ , այն աղջիկ ինձ ինու
բայր մաս ըսացաւ անաւանաւուր մշամ

երբոր իջնայ պարտէ զիկ ինուուր զանցէ : մայր
թաղել ըզգարդ կամ յասմիկ .

Դու չես կընար որոշել

Ո՞վ է վարդ , ո՞վ Գոհարիկ .
Ո՞չ , այն աղջիկ

է Գոհարիկ :

Երբոր թռչուն ճըւճըւայ

Երբոր վառեակ կըտկըտայ .

Դու չես գլտեր թռչունն է ,

Զէնէ Գոհար որ ձայն տայ :

Ո՞չ , այն աղջիկ

է Գոհարիկ :

Գոհարիկն է այն ծաղիկ ,

Գոհարիկն է այն թռչնիկ ,

Որ այս աղովա փոխարէն

Ինձի տուաւ մէկ պաշիկ .

Ո՞չ , այն աղջիկ

է Գոհարիկ :

Ո՞վ է սղտիկն այն աղջիկ

Անհնաղանդ շարաձիկ ,

Որ շատ անգամ տունին մէջ ու զան բան

Յարուցանէ վոթորիկ .

Զէ այն աղջիկ

Զէ Գոհարիկ :

(Մատենագրութիւն)

Մ. Պէտական Անդամական

Հայուն ու աղջիկ մատուցուած աղջիկ մատուցուած

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Ընթացք շարադրութեան . — Ցիշտակը մանկութեան :

ՏՊԵԿԻՆ ՈՒՐԾԽՈՒԹԻՒՆՆ ԵԻ ԾԱՆՐԾԲԾՈՅՈՒԹԻՒՆՆ

Բանահւս մ'ըսաւ, «Մանկան ծիծաղը ծաղկի մը փթթին է : Ընդունելու ուրախութիւն է, չնչելու ուրախութիւն է, ծլելու ուրախութիւն է նկատելու, ապրելու, աճելու ուրախութիւն է : Տունկի մ'ուրախութիւնն է» :

Բանահւսը կրնար յարել թէ այս ուրախութիւնն որքան ամենուն հաղորդակցական է : Պատանի ու ծերունի, մայր ու մեծ մայր կը հրճուին սրտովին այս ծիծաղէն որ պահ մը կենաց հոգերը կը մոռցնէ : Զկայքան զայս զովասուն ցող մը : Այս խնդութիւնն արդէն հեռաւոր անցեալի մը վրայ բացուած պատուհան մ'է : Մարդ անոր մէջ կը առաջին տպաւորութեանց թարմութիւնը կը գտնէ : Կը խորհի թէ ի՞նչ զոհողութիւններ պէտք են տղեկին այս անգին զուարթութիւնն անվթար պահելու, և այսպէս սիրտ առնլով՝ կը ընելիք ճգունքն իրեն թեթեւ կ'երեւին արդէն :

Բայց թէ՛ւ աւելի խոհական բնութիւնն մը ունի, ծանրաբարութիւնը՝ որ երեքն մանկական ծիծաղին կը յաջորդէ՝ նոյնչափ հրապոյք մը կ'ընծայէ :

Ծանրաբարոյ տղայ մը մտածող տղայ մ'է : Արդէն մի շատ խնդիրներ կը լուսաբանին այս ուղեղին մէջ որ միայն զուարթ զդայութեանց ընդունակ կը համար ուէր . արդէն իր անթարթ աշկունքն իրերու խորը կը թափանցէն :

Երբեքն կարծես թէ տղեկը հեռուն կը նայի, համը կը մնայ դիտողութեան առջեւ՝ թէեւ այնքան բնական կերպով կը մտնէ մտացը մէջ որքան ամանի մը մէջ հոսող ջուրը :

Տղեկին իր ծաղիկ հասակին մէջ հաւաքած այս դիտողութիւններն իր կենաց ամենէն իրական գանձերն են : Ինչ որ այն ժամանակ կը տեսնէ, լաւ կը տեսնէ . գործարանաց մաքրութիւնը մեծ գրգիռ մ'է համբարել զգացումներ՝ որոց հունձքն առատ է :

Բայց պէտք չէ տղեկի մը խորհրդածութիւնները վարել, զի նա թղթի կտորի մը, կենդանւոյ մը, հովին թռչող թերթի մը մէջ աշխարհ մը տեսնէ :

Սյս անգիտակ յատկութիւնն՝ որ անդուլ կը գործէ, անօգուտ է ուղղելու ջանալ . թոյլ տանք որ բընութիւնը գործէ, ոչ նեցուկի և ոչ թարգմանի պէտք ունի :

Թարգմ. Մ. ՍԱՄՈՒՐԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Մանկան սիրեն մի իմաստուն տեսչի ներեւե բնականաբար կը բացուի առաքինութեան, ինչպէս ծաղկանց բաժակն արեւու բարերար նանանչից ներեւե :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Ընթացք շարադրութեան . — Նամակ . — Գրեցէք ձեր ընկերոջ թէ այս տարուան քննութեանց մէջ յաջողած էք առաջին հանդիսանալ :

իման, իրան աւուղիմ աւուղիմ աւուղիմ աւուղիմ
մասնաւ մասը աւուղիմ աւուղիմ աւուղիմ աւուղիմ
ու ան
նոր կը լըռէք ծառոց ետին : զարչ բա
Սոխակին երգն այն գիշէր,
Հով մը թեթեւ թեթեր վարդին
իւր թըրից տակ կը քըշէր : մը դո չի է ման
ծառն ու լուսէր շուք, լուսնակ նըշյլ
Այն լըճակին մէջ վայրուն, լըճակին լըճակին
Ուր կը պարէր զեփիւռն իւսյլ
մինչ ան չետ եթերին աստղերուն :
ան
ուր ան չեռուն գիւղին լըշտերուն վայլ, ան այլ
այ դո չին քաղաքին խոռու շըշուկ, չ արտօնուն : չն
գանձր դժու Մարդաց վրայ հազիւ իմ քայլ
կը գըծէր ձեւ մը անշուք :

ՄԱՐԴԱՌՈՒՄ. Ա յերան
Եւ միայնակ և երազուն՝
Զէի խորհեր ես զախարհ,
Թէ ես անոր մասն էի խուն .
Ակրտս այն արահան չէր ըզտար, Խօթան Ա
պմաքան սրբաւ մասնամիտառ վարագ զի տագան
կը զգձայի մէր ելնել ի վեր,
Ամպէն ալ վեր, և աստղէն
կը խնդրէի լուսոյ թեւեր
չասնիւ երկինքն հըրեցէն :

«Ո՞հ, ի՞նչ կայ հոն, միայն արե՞ւ, զի՞ն
Միայն հոգ, բոց, կայծ ու շուշ, ու չի չորդ
Այդ միօրինակ տարեց ետեւ
զըկա՞յ գէթ սիրտ մը սիրու »:

— «Ակրտս մը սիրու ու միայն գոււ պայն
Մէլամազձու հոգւոյդ մօտ ան չուն
Հընչեց քովէս անոյշ մի ձայն,
Այդ սիրտ սիրու է կարօտ » : վար
ծառնար այ տակ մը դէ՞ն պայք
Եւ տեսայ քոյրա՝ այն կոյս մասագ
Գեղով, բոցով, կեանքով վար գրձ
ձերմակ ձեւաց մէջ իւր չըքնաղ
Փոնջ մը ճապէկանց կը ցնձար վար
մօն բառն վայսար մէ Ա
Բոլրոն էին Միօօրիս խարդար մը
կապոյտ վարդիկ ծաղիկներ, մուտ
Ուր բնութիւն « մի մոռնար զիս »
Անգր գայնովէ գըրերէւ դու յան
— « Ֆորեէր մի հօր, առ պահէ՛ գու ,
Յարեց իւր ձօնն ինձ սալով, դո՞ն
Քեզ մօտ լինիմ կամ թէ հեռու .
Միշտ պահէ ինձ դու գորով» : բայ
միան նոյ մնանք դո վայսար
Գըրքի մը մէջ պահէցի զայն մասը ի
իբրեւ մի գանձ թանկագին դու դո՞ն
Այն եռանդուն սիրոյն վըկայն ,
Ուր ամփափածէր հոգին : այս ան
դու մըսին սալուար մին Ա
Դեռ կը լըռէք ծառոց ետին դուն
Սոխակին երդին պյա գիշէր, զի՞ն Ա
Հով մը թեթեւ թեթեր վարդին
իւր թըրից տակ կը քըշէր :

Եւ միայնակ և երազուն
Քունն աչերէս կուտար խոյս ,

Միտքըս կերթար շըրջիւ հեռուն,
Հոն՝ ուր կերթան սըրտեր կըս։
Գըրքի էջ մը բացի խակոյն ուր քան
Գիրք մէր այն շատ լաւ պահուած,
Եւ լեցուեցաւ հոգիս անհուն
Հեղեղներով արտասիւաց։ իսրե՛
Փունջը տեսայ, ո՞հ, փունջն այն սուրբ
Այն պատելի ձեռաց ձօն,
Եւ կարդացի դրերով նուրբ
Ֆորկէր մի նօր գըրուած հոն։
Այլ ո՞ւր այն ձեռք, ո՞ւր այն պատկեր,
Ո՞ւր սիրող սիրոն այն բոցեղ,
Ուր այն հրեշտակ, ո՞ւր իւր աչեր,
Ո՞ւր քաղցրաձայն իւր զեղգեղ։
Արդ կը ծածկին ցուրտ չիրմին տակ
Ձեռքեր՝ որ փունջն ինձ տուին,
Միտան որ ըդգաց, ո՞հ, այնքան շատ,
Զոր հողն ունի իւր բաժին։
Եւ դու հոմեա, Միօգօրիս, ո՞ի
Ո՞սին պատկեր սիրոյն իւր,
Անոր սըրտէն ինձ կը խօսիս,
Մինչ իւր շըրթունք մընան լուռուն

(Մասիս 1 օգոստ 1890)

ԶԱՊԵԼ Կ. ՏՕՆԵԼԵԱՆ
(Սիսկի)

ԴԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Աւելի ցանկալի է զեղեցիկ ման մի բան Երկարա-
ձիգ կեանք մի։

—————
ՃԱԾՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառք . — խուն, իիչ — Տարեր, մասն բնուրիւն . —
Գեղ, զեղեցկուրիւն . — Մկօգօրիս, վոկէր մի նօր, միեւնոյն
ծաղին է անմոռուկ . — Ծուրբ, բարակ . — Բոցեղ քոցալի .
— Գեղգեղ, երգ .

Ընթացք շարադրութեան . — Ծաղիկը . — Ծաղիկն է
դուստր առաւոտու, հասպյր գարնան, աղբիւր բուրմանց, չորտ
կուսանաց, մէր բանաստեղծից . կ'անցնի շուտ մարդոց նման .
այլ մեղմիւ իւր թերթերն զետինը կը ծդէ . Ուր նախիս, անով
կը պատկէին սեղանին բաժակը եւ իմաստոնցն սպիտակ մազերը .
նախին քրիստոնեայք անով կը ծածկէին մարտիրոսներ եւ զետնա-
գամբաններու սեղանն . Այսօր, եւ ի յիշատակ այն նախին տ-
ռուց, կը գնենք զայն մեր տաճարներուն մէջ . . . կան շատ
աղքեր, յորս այն զգացմանց թարգման է . Հրաշալի՛ մաստեան որ
չպատճառեր ոչ աղմուկ, ոչ կռիւ, եւ կը պահէ յինքեան սրախ
յուզմանց վաղմացիկ պատմութիւնը .

ԱՐ ԶԵՓԻԻՈՆ ԱԼԵՄՑԱՂԻ

Դու վամիկաթեւ մանկիկ զեփիւռ,
Աղբերց վըրայէն լուսակարկած՝
Անուշ հոտով ծաղկանց ըսիիւռ,
Ի՞նչպէս թռչսին ինձ ընդ առաջ .
Ու խունկ և զով ընծայելով,
Զիս ողջունես հեղիկ շընչով :

Ո՞հ, կը սիրեմ ըզքեզ, հողմիկ,
Երբ դու գութեաս ինծի գալու յալացած վիմար
Ի պար ի թոփէ ի սոյլ մեղմիկ,
Այրած ճակտիս իմ այցելու .
Ծաղկ հոգւոյս քեւ զովացած,
Բացուի ի լոյս ախործ կենաց :

Սլացիր փափկիկ դու սուրհանդակ, Դուռի
Ալուսմիկ լուր տար հովտին ու, ծործորին սվայթը քը, քաջ
Ռիար մուտառաց բարձրադիտակ յառանիտ և նիշքան
Ուր երամով սոխակք թառին, բայ, քըքաջ՝ —
Թէ մոնթիմ իւրեանց եկաւ
Բիւր ըզմայլմանց յիշատակաւ :
Ո՞հ, կորսւած իմ հաճոյքներ նեմաց միշտար ցի
Հոս վերստին գըտնեմ ըզքեզ.

Այս մաստակաց պատմութիւն պատմաց մասունք մասունք
Ծառոց շըքով էք ծածկը երեր, մասունք աղմամայիսաք
ուաց մա վրդիտրով առուեակին հեզ. աղմաք ոչ, բայս
Աչա կայտուէք ի յայս ծըմակ,
Ի յայս թըփուտ հովանոցակ :

Հոս դառն հոգեր մէկիկ մէկիկ
Ճակտէս ի բաց հեռանային .

Ու փունջք ժամուց գեղապարիկ
Սիրտը թեթեւ օրօրէին .

Եւ բընութիւն, մայր որդեսէր,
Քընքուշ գրկաց մէջ զիս գըտնէր :

Հոս ճեմէին Երեկոյեան
Ի զով ըստուեր պար մի կուսից .

Մազերն հոյուն բագմաբուրեան,
Սիրտը ընծ այսուած հեշտ վայելից .

Շող լուսնակին, կոյս ու ծաղիկ, միջուրա վայր
Զիրար շյեն սիրատարիկիկ :
Մտերմութիւն, սէր կրակուբոց,
Ինչ անուշ էք յայս տեսարան,
Ուր բիւր դալարք ձեզ հանգըտոց,
Ու անհուն դաշտեր ըզբօսարման, ու զարդի դու
Մտերմութիւն, ինձ երանի,
Թէ զո՞ս ծոցէս հոգիս թռանի :
Դու փափկաթեւ մանկիկ զեփիւու,
Սղերց վրայէն քաղցրակարկաջ .
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւու,
Թոփիր, թոփիր ինձ ընդ առաջ,
Ու խունկ և զով ընծայելով,
Պարէ չորս դիս հեզիկ շնչով :

Մ. Պէշիկթաշլիան

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ .
Արտակարգ պատմուած Աստուած մը եւ ամեն
պարտաւորութեանց կոստուկին սիեզերէր տանար մը
կ'ընեն եւ ամեն մարդիկ եղայիներ :

—————

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառե . — Աղջ, տուրմ . — Ախործ, խայց . — Բարձրացիտակ, բարձրածայր . — Ծմոնէ, հովանուս տեղ . — Աւարտիսակ, ամեն կողմէ գեղեցիկ . — Բագնարութեան, առ անու պարիկ, ամեն կողմէ գեղեցիկ . — Սիրատարիկ, սիրալից :

Ընթացք շարադրութեան . — Միլտն . — Սիլտն Անդ լինց մեծ քերթողն, մանկութեան առեն այնքան գեղեցիկ էր, որ

զանի դպրոցին մէջ զեղեցիկ կոյս կը կոչէն : Հանձարեղ էր յոյժ, բայց յաչս իւր ժամանակակցաց նա անհան քերթող մ'եղաւ, եւ իւր մահուանէ շատ տարիներ յետոյ իւր ազգային հարստութիւն համարուեցաւ անոր քերթուածն , Դրամաս կորուսեալլ : Հաղիւ անոր կենդանութեանը կը հաճէին կարդալ քանի մը հաստուածներ Դրամաս կորուսեալէն , եւ անոնք որ այն տաղերն կարդացին, նախատանաց արժանի համարեցան զայն : Ալյազէս դուք ամենեքին որ կ'զգայք թէ կը ծնի ի ծեղ փառաց ազնիւ տենչն, դուք որ կը դատէք թէ բաւական զրութիւն ունիք ըսելու ընդ ինքն : «Աւելի հեռուն պիտի երթամ» . ուրեմն գացէք , միշտ գացէք առանց երբեք վշարելու , եթէ այսօր ծափահարութիւնք ծեղ զակամին , յիշցէք թէ Միլոնի իւր մահուանէն կէս գար յետոյ արձաններ ունեցաւ :

ՄՐՅՈՒՀԻ ՄԱՅՐԱՊԵՏ ԳՈԼՖԱՅԵԱՆ

Քաման եւ չորս տարիներ առաջ կը պատահի որ գրեթէ փողոցը մնացած որբուհի մանկիկ մը Սրբուհի Մայրապետին գութը կը շարժէ : Կ'ընդունի և կը հիւրընկալէ զայն, և որովհետեւ , բարեկեցիկ պայմաններու մէջ չըր գտնուեր , բարերարաց աջակցութեան կը դիմէ իւր ինքնատուր — կամ երկնատուր — աւանդն ըստ արժանուոյն հոգալ կարենալու համար : Ինքինք բարեգործական ձեռնարկութեան մը նուիրելու համար բնաձիր կոչում մ'ունէր այս կին՝ որ կենդանի հաւատքի մարմացումն էր կարծես , և ուլսուելով ամուսնական կենաց մէջ չմոնել , բոլորանուէր կ'ընդգրկէ այս նոր պաշտօն — որբուհեաց խնամակալութիւն : Քաջալերեալ Շահնազարեան լրսահոգի Կարապետ վարդապետէն , հոգելոյս Ներսէս Պատրիարքէն , որ յայն ժամ Խասդիւղի քարոզիչ էր , ծերունազարդ Արծրունի

քահանայէն և ուրիշ անձերէ , Սրբուհի Մայրապետ հանդանակութեան կը ձեռնարկէ , անոր հասոյթով որբուհու մը կազմելու համար . իւր կրօնական և բարեգործական զգացմանց հաւասար ճարտարութիւն եւ գործնական յաջողութիւն ցոյց կուտայ սոյն ձեռնարկութեան մէջ : Շատ դժուարութիւններէ եւ մաքանումներէ ետք , Սրբուհի Մայրապետ Խասդիւղի մէջ օդասուն տեղ մը կը գնէ իւր նորահաստատ Որբանոցին համար բաւական ընդարձակ և յարմար չէնք մը , պարտէզով և առաս ջրով , իւր 1000 ոսկւոյ ծախիւք , և կանոնաւորապէս կազմակերպեալ հաստատութեան մը նիւթական և բարոյական պայմանաց մէջ կը գնէ իւր Գաղֆայեան Որբանոց : Միշտ 20-30 կամ աւելի որբուհիներ կ'ունենայ , ընդհանրապէս ձրի , զորս կը կլթէ , ձեռագործներու կը վարժեցնէ , և մինչեւ իսկ կը յաջողի իւր ձեռաց տակ մեծցած ու կլթուած քսանէ աւելի աղջիկներ ամուսնացնել ու իւր հաստատութեան մէջ , որբուհիք , ուսուցիչք , կամ վարժուհիք , միշտ 30-40 և աւելի անձինք կային . և կը հասկցուի թէ այս չափ բազմութեան մը ծախքերն հոգալ դիւրին գործ չէր : Բայց Սրբուհի Մայրապետ ինքիննէ կը բազմապատկէ : Երբ մարդ միրէ գործն , աշխատութիւնն շատ անդամ մինչեւ անձնուիրութեան կը հասնի : Եւ զարմանալի եռանդեամբ Սրբուհի Մայրապետ փարած էր իւր գործն : Ցերեկ և գեւեր գաղար չունէր : Միշտ բան մը կ'ընէր , բան մը կը խորհէր իւր որբուհեաց պէտքերն հոգալու համար : Անոնց համար կը մուրար , վլնսուէր ալ չէր վշարեր , և գիտենք թէ նա որ վիատիչ էլ չիտեր , կը վիատեցնէ . և հետեւապէս Սրբուհիատիչ էլ համարին ոգնել կը հարկադրէին այնպիսիք անհի Մայրապետին օգնել կը հարկադրէին այնպիսիք անհի Սրբուհի գործն մը կ'ընէր հաւատացած որ կարենար ինք գամ որք ի սկզբան չէին հաւատացած որ կարենար ինք

միայնակ ի գլուխ հանել արդիւնաւէտ գործ մը : Միայն աղջային շըանակներու մէջ չէ որ կը գործէր Սրբուհի Մայրապետ յօդուս իւր Որբանոցին : Զարմանալի հաստատամտութեամբ մը միջոց գոտած էր կառավարական ակմբոց մէջ եւս համակրելի ընծայելու իւր մարդասիրական գործ : Վեհ : Սուլթանն համեցաւ օրական հայի և մսի կանոնաւոր պարէն յատկացնել Գալֆայեան Որբանոցին , և երբ՝ վերջին պատերազմէն ետքը՝ խնայողական տնօրինութեամբ մը կայ . կառավարութիւնը դադրեցուց առեն ոչ-մահմատական բարեգործական հաստատութեանց արուածնակատներն , ամենէն առաջ Գալֆայեան Որբանոցին նպաստը վերահաստատուեցաւ : Վեհ , Սուլթանն , Որբանոցին աշակերտուչեաց գեղեցիկ ձեռագործներն ևս գնահատելով , մանաւանդ յատկապէս Նորին Վեհափառութեան համար բանուած մետաքսեաց գորդ մը , բարեհաճեցաւ դրամական կարեւոր նպաստով մը քաջալերել անխոնչ Մայրապետն :

Իւր համբաւ վերջին տարիներս Վասրորէն դուրս ալ ելած էր , և մանաւանդ մեր ուսւահայ եղբարց մէջ հանրածանօթ անուններ դարձած էին Սրբուհի Մայրապետ և իւր Խասդիւղի Որբանոց :

Գալֆայեան Որբանոցը տարեկան եօթն կամ ութիւնարիւր ոսկւոյ ծախք ունէր , զոր Սրբուհի Մայրապետ կը հոգար հանգանակութեամբք , իւր որբուհեաց ձեռագործներուն վաճառմամբ , կառավարական մնայուն նպաստով և այն կարուածոց հասյթով զորս քիչ խնայութեամբ գնած կամ շնած էր : Իւր հարստարմատակարութեան իրեւ ամենէն շօսակելի պատցոյը կրնանք համարիլ որ այսօր Ազգին կը թողու իրել հազար ոսկւոյ արժէք ունեցող շարժուն և անշարժ

ստացուածք : Եւ իրօք , այս զարմանավի կին ներկայն միայն չէր խորհեր : Իրեն հետ խօսուներ միտք կ'գտային թէ ապագային հոգը կը մաշեցնէր այս գործունեայ կինն : Կ'ուղէր մնայուն հաստատութիւն մ'ընել Որբանոցն : Այս նպատակաւ օրինական ու և է ձեւակերպութիւն թէրի չթողուց : Որբանոցին քարոյական դռութիւնն եւս անվթար պահելու համար , 4876 ին Սրբուհի Մայրապետ կտակ մը շինած էր ձեռնհամագործականութեամբ կողմէ զորհութեամբ ու զոր հոգելոյս Տ. Ներսէսին Պատրիարք վասերացնել տալով Ազգային ժողովայ օրէնքի ոյժ տուաւ անոր : Այդ կտակին համեմատ , Որբանոցն իւր մէջէն պատրաստուած մայրապետներու տնօրինութեամբ պիտի կտակավարուի ընդ հսկողութեամբ Պատրիարքականի , պարբերաբար հաշիւներ պիտի հրատարակուին , և Որբանոցն և յարակից կալուածք իւրենց էական նպաստակէն տարբեր նպաստակի չպիտի կրնան գործածուիլ երբեք : Սրբուհի Մայրապետին նպաստակն էր ո՛չ միայն որբուհիներ ընդունութիւն ու դաստիարակել և ընկերութեան մէջ վայելուչ կերպիւ հաստատել , այլ և մայրապետներ հասցնել , կուսութիւն ուխտող և իրենք զիրենք բարեգործութեան ոնքին , որ կը յուսանք թէ հանրեղմաւոր խորհուրդ մէ , որ կը յուսանք թէ հանրեղմաւոր մայրապետին բաղձանաց համեմատ կ'արդիւգուցեալ մայրապետին բաղձանաց համեմատ կ'արդիւգուցիւնաւորի :

Սրբուհի Մայրապետ շատ ծեր չէր , հազիւ 66 տարեկան . բայց , ինչպէս ըսինք , իւր որբանոցին հոգերը կը մաշեցնէին զինք , մինչ իրեն պէս ժուժկալ և քաշապող կին մը կրնար խոր ծերութեան համար : Եթէ

ԲԱՐԻՑԱԿԱՆ ԱՐԱՄՔ

այս աժքարտությունը մասնաւութեանց և մատահո-
գութեանց շարք մ'եղաւ, իւր իննամսեայ հիւանդու-
թեան անկողնոյն մէջ քիչ շատ սփոփանք գտաւ : Տէ-
սաւ որ իւր կատարած մեծագործութեան համբաւը
տարածուած է ամենուրեք ուր Հայ կայ, այսինքն աշ-
խարհի ամեն կողմն, և ամենուստ ընդունած մէծ թէ
փոքր նպաստք՝ իւր Որբանոցին նիւթական կարօտու-
թիւնները թեթեւցնելէ զատ՝ զինք եւս կրցան սփո-
փել և ապահովցնել թէ Ազգն երեսի վրայ չպիտի թու-
զու իւր քառորդ դարու անձանձիր աշխատութեանց
պտուղը :

(Սիրեմք)

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Առաքինի սիրս, ազնուախոնի միտ:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Ընթացք շարադրութեան. — Մանկութիւն Սրբուի Մայ-
րավետի . — Սրբուի Մայրապետ, 1822 ին ծնած, բնիկ Գար-
թալցի էր, գուստը Գալֆայեան նշան աղայի, տեղական հին-
ընտանիքէ մը : Տասն տարեկան եղած ատեն Սրբուի ժանտափ-
տէ կը բանուի, եւ այս անագորյն հիւանդութեան միջոցին երազ-
մը կը տեսնէ յորում իրեն կ'աղդարարուի Մայրապետ մինեւ.
կ'ուժու ըստ այնու, կ'աղէկնայ : Շատ գեղեցիկ աղջիկ մ'էր, եւ
18 տարեկանին մէջ վերջապէս կ'որոշէ կոյս մասլ :

Յոյժ գործունեայ աղջիկ մ'էր Սրբուի : Այն ժամանակ մե-
ծապէս յարգ ունէին ոսկեթել բանուածքք՝ որոցմէ ինքն եւս կը բա-
նէր, եւ կը բանեցնէր տեսակ մը արհեստանոցի մէջ զոր ինք կազ-
մած էր : Այս կերպիւ 180 ոսկւոյ չափ գումար մը ինայտ էր,
որ կը լինի Որբանոցին առաջին եւ միակ դրամագլուխը :

Լաւ կայ՝ լաւի չի զուգիր,

Զէթ ջուրի չի խառնուիր :

Ուկին ագահին բեռն է,

Մինչ նա կարծէ թէ տէրն է :

Փայլունն ոսկի չի կարծես,

Աչքով նայէ՛, մըտքով տե՛ս :

Զելլար գառնուկ մի գայլէն,

Ճերմակ փոշի ածուխէն :

Որոց հետ որ տեսնուիս .

Հարկաւ անոնց նըմանիս :

Համեստ անուամբ լաւ գործէ՛ .

Մէծ անունը մէծ բեռն է :

3. ՈՍԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ՕԹՈՒԹՅՈՒՆ

Ընթացքի շարադրութեան . — Կարապետ վարդապետ Շահնազարանի աղքատ ընտանիքէ : Տղայ դեռև՝ կը թերուի յէջմիածին . Հոն ժամանգաւորաց վարժարանի ամենէն ժրածան աշակերտն կը լինի : Արդիւնաւոր կեանք մի կը վարէ եւ կը ծառայէ իբրեւ մտածագիր , կը հանդիսանայ կրօնասէր եւ կրթասէր անձ : Հետեւեալն է նորա տապանագիր . «Աս հանգչի յուով փառացն յաւիտենից կարապետ վարդապետ Շահնազարանց , ծնեալ ի Համատան 14 մայիսի 1814 թ. եւ վախճանեալ ի Խասգի-դ Կոստանդնուպոլսոց յամի 1865 , օգոստոսի 3 » :

ԱՅՐՎ ԵՒ ԿԻԵՎ

Երբ նախածնողը եղեմէն արտաքսեցան , ողբացին ընդերկար և ըսին միմեանց .

— Ի՞նչպէս այժմ պիտի լոււնք մեր ճակատագիրն երկրի վերայ . ՞Վ պիտի առաջնորդէ մեզ :

Այն ատեն յառաջացան դէպ յայն քերորդն՝ որ կը պահպանէր դրախտին մուտքը ; Եւայ կը յենուր Աղամին , և ծածկուեցաւ նորա ուսաց ետեւ , երբ նոքաներկայացան երկնային պահպանին առջեւ : Աղամ կըսէ պաղատագին առ քերովրէն :

— Այժմ Աստուծոյ պատգամաւորը մեր առջեւէն չեն երթար , որովհետեւ մենք ամպարիստ եղած ենք . աղաչէ՛ ուրեմն աշխարհի արարչին , զի մեզ զրկէ՛ մին իւր հրեշտակներէն , կամ դէժ աստղ մի՛ որ զմեզ կարենայ յառաջ վարել :

Քերոր կը պատասխանէ .

— Մարդն յինքեան ունի իւր աստղն , և հակա-

ռակ մեզաց այդ պատղն պիտի փայլի միշտ աւելի փայլուն և աւելի անբիծ քան երկնից աստղերն : Ուրեմն դուն անս'ր պէտք է հետեւիս :

Բայց Աղամ պատասխան գարձեալ և կըսէ .

— Ո՞վ Եհովայի սպասաւոր , տուր մեզ տեսանելի պատկեր մը , զոր կարենանք դիտել , վասն զի նա՛ որ միանդամ մոլորեալ է ուղիղ ճանապարհէն , իւր միրտն կը գտնէ խաւարչտին և համբ : իւր ներքին ձայնն լսեմ չլինիր այլ եւս :

Այն ատեն հրեշտակը մտախոհ կըսէ Աղամին .

— Երբ յաւիտենականն զքեզ յօրինեց երկրի կաւէն և փչեց քեզ շունչ կենդանի , դու գլուխդ բարձրացուցիր յերկինս , և քու առաջն նայուածքդ ուղղուեցաւ արփոյն . թող արեգակն լինի քո նախատիպար : Նա կսկսի իւր աշխատութեան՝ ճաճանչագեղ դիմօք . չխոնարհիր ոչ յաջ և ոչ յահեակ . իւր անցած տեղերն օրհնութիւն կը բերէ . կը ծիծաղի մրկին վերայ՝ որ կը փայլի իւր ոտից առջեւ , և այն մրրկային պայքարէն յետոյ կ'երեւի գեղեցկագոյն , և այնքան բարիք կը ծաւալէ : Այլ դու , թող այսպէս ըլլայ երկրի վերայ քու ուղեւորութիւնդ :

Այն ատեն նորհագեղ նախամայրն դող ի դող մօտեցաւ երկնային պատգամաւորին և ըսաւ .

— Տուք ինձ խօսք մի սփոփական և կրթիչ : Ի՞նչպէս պիտի կարենայ տկար կինն իւր նայուածքն բարձրացնել և հետեւիլ անոր ընթացքին :

Այսպէս խօսեցաւ Եւայ , և քերորն գթաց այն կը նոզ , միրաժամա դիմօք նայեցաւ անոր և ըսաւ .

— Երբ յաւիտենականն զքեզ առեղծեց վերջալուտ ճաճանչերով , քու ուխտեր չբարձրացան յերկինս , ոյ ճաճանչերով , և այս առաջնորդ կըսէ աղամ պայքարէն Եղեմի ծաղկանց վերայ , և քո լսած այլ խոնարհեցան Եղեմի ծաղկանց վերայ , և քո լսած

առաջին ձայնը՝ աղբեր մի մրմուճն Եղաւ։ Թող քու
գործի լինի հանգունախիպ բնութեան գործոյն։ Լը-
ովկ նա յառաջ կը բերէ մեծն և փոքրն միանդամայն։
Ամէն ինչ կը ծի ծոցոյն մէջ, ծաղիկն և պտուղն, և
անոնցմով կը զարդարուի։ Տկա՛ր կին, ահա պատկերդ։
Յետոյ հրեշտակն աւելցուց առն և կնոջ ուղղելով
խօսքն։

— Թող ձեր միութիւնն լինի անկեղծ և կատար-
եալ, որպէս երկնի և երկրի։

ՔՐՈՒՄԱԽԸՆՔ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Երեք ատեան կայ որ գրեթէ երեք համաձայն չեն։
օրինաց ատեանը, կրօնից ատեանն ու պատույ ատեանը։


ԾՍ.ՆՕԹՈՒԹԻՒՆ

Բառն. — Մուտ, դուռ. — Խաւարցին, մուր. — Նա-
խատկար, առաջին օրինակ. — Պայմար, կուլ. — Հանգու-
նատիպ, եման։

Ընթացք շարադրութեան. — Նախնի քրիստոնեայք. —
ի հնումն քրիստոնեայք հաղիւ կրնային ապաստան մի գոնել աղ-
թելու համար յոտո խաչին. իւրեանց Արտուրածն տարագրուած էր
ի խօս անդնդոց. Աշխարհի ապագայն գետնադամբանաց մէջ էր,
որ մի երբ քրիստոնեայք սուրբ զոհը կը մատուցանէին նկողներու
և արարողութիւնն յանկարծ ընդմիշեցաւ. անծանօթ շշուկ մի
մէջ, արարողութիւնն առաջնորդող սրահին մէջ, թշուառ մ'էր
լուեցաւ ի սրբավայրն առաջնորդող սրահին մէջ, թշուառ մ'էր
եկողն՝ որ չգտնելով սփոփանք երկրի վրայ, անոր խորն կը մտնէր
միջնակցելու քրիստոնեայներու հացոյից եւ աշխատութեանց, նո-
մանակցելու քրիստոնեայներու հացոյից եւ աշխատութեանց, նո-
մանակցելու քրիստոնեայներու հացոյից եւ աշխատութեանց, յա-
շաք որք ուխտած էին առ. յաւետ աղօթել, սիրել եւ տառապիլ։

ՃԱՐԱ.ԴՐՈՒԹԻՒՆՔ ՊԱՏԱՐԱ

Ճաղորդակցութեան միջոց։



ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Առաջասաւոր նաև հողմով յառա-
կերթան. — Վանառարած սայլի, վաճառք տանող սայլի. —
Հանրակառք, թրամվայք, քաղաքի մէջ գործածուած մեծ կառ-
քեր, մարդոց փոխացրութեան ծառայող. Թրամվայն երկաթէ
քծերու վրայէն կ'երթայ, — Երկարուղիք, որոց միին արագու-
թիւնն է մամբ ութ փարսախ. — Օղապարիկ. զանօթ ուղղելու
միջոցը գտնուած չէ ցարդ. — Ելեկտրական հոսանք, ելեկտրակա-
նալութեան էրկաթէ թելերու մէջէ անցնին. — Ելեկտրական հե-
ռագիր. Թովին մէն մի ծայրն կայ գործի մը որուն ամէն մէկ
շեռաւորի գիր մ'է, — Հեռաւայն. ելեկտրական հոսանքի մի-
շարժումը գիր մ'է, — Հեռաւայն. ելեկտրական հոսանքի մի-
շարժումը գիր մ'է, — Հեռաւայն. կը լսէնք այնպէս, որպէս թէ մեր
ջոցաւ հեռաւորի մը ձայնը կը լսէնք այնպէս, որպէս թէ մեր
մօտն լինի նա։

ԴԵՐԱՍԱՆՆ


Չունի ոչ կայք , ոչ բնակարան հաստատուն ,
Շրջի մոտած կոտ և նիշար ,
Յուզմունք , տագնապ՝ են լոկ սընունդն իւր կենաց .
Դափնիք ձակախն էլ դալար
Քրտամբ , ճըգամբ , և արտսուքով են քաղուած
Ժողովրդից ծափահար :

Մերթ ծովեզեր , մերթ էլ երկթէ ուղեաց վրայ
Կը թափառի սփրան ի հոգ՝
Փշալից փառաց նոր հորիզոն որոնել ,
Ուր ողջունեն երան ծաղկօք .
Բայց նա ծաղկանց իւրաքանչիւր լուրջ թերթեր
Յօլէ լեզի արտասուօք :

Թարգման մարդկան պէսպէս յախուռն կրեթին՝
Ունի հանձար և դիմակ ,
Զիւր սեպհական անձըն վաղուց մոռացած՝
Այլոց համար կեայ մինակ :
Մերթ է տըխուր , բայց Մոլիէռ ձեւանայ ,
Մերթ է յանկամա՝ ողբերգակ :

Զանձն իւր ըստէպ խարէ փառօք անցաւոր ,
Որ ի հեռուստ զինչ թմբուկ
Սնոյւ հնչեն նախանձորդին լըսելեաց ,
Մինչդեռ ամբաւ վիշտ և անձուկ
Կըրէ պաշտողն նէխսպիրի և մեկնիչ
Որոյ լուծէ զհանելուկ :

Բզբեմ թողնել , ա՞հ , չէ կարող նա բնաւ .
Իւրաքանչիւր պըսակներ



Տառը խերը՝ Ամո յախուռալու ։ Անվերներն
— այսու յանձնու քանձնէք Արաս նախառութեան ։ Վահնչի
ուսք օնն նախանձուք Յանձնարար ։ Արտսուռի Աստիտան
ուսք օնն նախանձուք Յանձնարար ։ Արտսուռի Աստիտան ուսք
ժիշտիք ներաւուած ։ Խըստած մաս վաղարշու քայլան ուսք
անցաւած հնձնան Յանձնարար ։ Վահնչի սանցալ առաջ ք
անցրան զնձնար ։ Արտսուռի անցարդ են նախ ք մեջ են
ուսպազան ։ Անոն նախառութեան ։ Արտսուռի անցարդ զնձնար
ուսք նորմառութեան ։ Այդին անց առջան Յանձնար ։ Անձ նախ
ք անցրան Յանձնար ։ Արտսուռի անցարդ ։ Վահնչի սանցալ առաջ
զնձնար ։ Անոն նախառութեան ։ Արտսուռի անցարդ զնձնար

Հետըզհետէ կազմեն նորա շդթային
 Օշակներն այն ծանրաբեռն,
 Որոց ահեղ չեղին տակ օր մի նաեւ
 Մահն էլ խալայ զիւր մեծ դերն:

 Քըսակն ահա չէ համաշափ վիճակին:
 Հարկ է սակայն չքեղ հագնի.
 Զէ փոյթ թէ է անօթի կամ թէ ծարաւ,
 Չեռնոց պիտի գեղանի.
 Փոշին կարմիր սքօդէ զդիմաց գեղնութիւն
 Գիշերն անքուն թէ տքնի:

 Աղէ՛ ուրեմն թափառականդ Ակասիէր . . .
 Ա՛ռ ըզդիմակդ, ե՛լ ի բեմ,
 Ծափ զարնելով թէպէտ ըզբեղ միշտ դովեն,
 Երբ ցոյց տաս չարն ու վըսեմ,
 Բայց դու մի մնար ոչ մի տեղ չատ օրերով,
 Որ չընային քեղ նըսեմ:

 Սուլեց շոգին, ժամ է գնալ ու թափառիլ,
 Մելպեմոնի հէք զինուոր.
 Բարեկամներդ և սիրելիդ թո՛ղ մինակ,
 Մայրիկդ և հայր ալեւոր,
 Փութա՛ ի տես հանել մարդկան տիպարներ,
 Պատառ հաց է հարկաւոր:

 Նկարչին մնայ գէթ յիշատակն ի կըտաւ,
 Փիդիսային ի կըճի,
 Կանհետանայ քեղ հետ հանձարն, և զդիմակ
 Կուտէ հողոյն ոււ ձըճի,
 Պատմութիւն՝ նա՛ դուցէ զքեղ օր մի յիշէ
 Յապագայում, թէ հաճի:

Լաւն ու վըսեմ, նա՛ էլ գրաւել զքեղ ի սպառ .
 Ո՛հ, սիրեցեալ այն ճիւաղը . . .
 Պատանք՝ կեանքիդ լինին թատեր վարագոյր .
 Մարին Եշուր, դաղըին խաղը .
 Գուցէ յետոյ գաշտի մի վրայ թէ գտնեն զնուի ամ
 առար դրանք . . . անունի մասն անունի անունի անունի
 ՊԵՏՐՈՍ Հ. ՍԴԱՄԵԱՆ
 Զանթաղ մարմնոյդ չոր կըմախը:

 Միրէ կը փափախի՞ն որ մարդիկ լաւ խօսին վըադ,
 դու բնաւ մի՛ խօսիր: Ն մարդուն խորացնելու ամ
 անունի անունի անունի անունի անունի անունի անունի
 ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ սպասելով միւս
 մասն . . . հար չըսուու ըսուու և չէ հարցի
 Միրէ կը փափախի՞ն որ մարդիկ լաւ խօսին վըադ,
 դու բնաւ մի՛ խօսիր: Ն մարդուն խորացնելու ամ
 անունի անունի անունի անունի անունի անունի
 ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ սպասելով միւս

 ԾԱՌԵ. — Էլ, ալ . — Ճողովրդից, ճողովրդէն . — Նուն,
 զանի . — Կրերին, կրերուն . — Վաղոց, շատոնց. — Մոլի-
 կո, կատակերգակ (դերանութեամբ), — Յանկան, ակամայ .
 — Շեխապիր, նաւանուր ներդող անդիմայի . — Համաշափ, հա-
 ւասար . — Պիտի, պէտէ է . — Ակասիէր, առասպելական անձ-
 նաւորութիւն՝ որ նանցուած է թափառական շրեայ անուամբ . —
 Մելպեմոնն, մուսայ ողբերգութեան:

Ընթացք շաբարդուքեան . — Հայ վարժապետն . — Վերա-
 գրեալ ոտանաւորին հետեւողութեամբ նկարագրեցէք անցեալ եւ
 ներկայ վիճակն հայ ուսուցչին, եւ մաղթանքներ ուղղեցէք մօտա-
 ւոր ապագայի մէջ ուսուցչական մարմու բարւոք կացութեան մա-
 սին:



ՏԵՍՈՒԻՉ

Ութ են մեր դպրոցի վարժապետք, որոց մէջ կայ
նաև փոքր և անմօրուս մէկն՝ փոխան ուսուցի, կար-
ծես դեռասի երիտասարդ մ'է: Կայ չորրորդ դասու
կաղ ուսուցիչ մը, բրդէ մեծ վզնոց մը պատաժ, միշտ
ցաւօք վարակեալ, որ իւր ցաւերը գեղջական վարժա-
պետութեանը միջոց ստացեր է՝ խոնաւ դպրոցի մը
մէջ՝ որոյ պատերն կը կաթկթէին: Զորրորդ դասու
ուրիշ վարժապետ մ'ալ կայ՝ որ ծեր և բոլորովին ձեր-
մըկցած է, և կուրաց ուսուցիչ եղած: . . . Ասոնցմէ
վերջ Տեսուչն կուգայ, բարձրահասակ, ճաղատ, ոսկ-
եայ ակնոցներով, գորշագոյն մօրուօք որ մինչև կուրծ-
քըն կիջնայ, բոլորովին սեւ՝ և վերէն ի վար ճարման-
դաւոր զգեստ մը հագած: այնքան ազնիւ է իւր վար-
ժունքը տղայոց հետ, որք երբ յանդիմանութեան մը
համար կը կանչուին: և ամենքն ալ դողալով իւր Տես-
չութեան սենեակը կը մտնան, իրենց չի նեղանար, այլ
նոցա ձեռքին կը բռնէ, և այնքան համովիչ խօսքեր կը
զուցէ թէ պէտք չէին այնպէս ընել, և թէ պէտք է
որ զզան, և խօսք տան թէ աղէկ ալիսի ըլան, և
այնքան ազնուութեամբ կը խօսի, և այնպիսի քաղցր
ձայնիւ որ ամէնքն ալ կարմրացած աչօք դուրս կ'ել-
նեն, աւելի ամշած քան թէ զիրենք պատմէր: Խե՛ղձ
Տեսուչ, ամէն բանի մէջ միշտ առաջին կը գտնուի,
առաւօտեան աշակերտաց սպասելու և անոնց ծնողաց
խօսքերն լսելու, և երբ վարժապետք իրենց տուները
կ'երթան, դեռ դպրոցին չորս կողմն կը շրջի դիտելու
որ տղաք կառաց տակ չերթան, կամ պայուսակներն
աւաղով կամ քարերով չլեցնեն, և ամէն անգամ որ

անկեան մը ծայրը կը տեսնուի, այնպէս բարձրահա-
սակ և սեւազգեստ, ձնձկաց խումբերու պէս տղայք
ամէն կողմանէ կը փախչին, և ինքն ի հեռուստ ցուցա-
մատիւ անոնց կը սպառնայ, իւր սիրագորով և տխուր
կերպարանօքն: իւր որդւոյն մահուանէն վերջ ալ ոչ ոք
իւր ծիծաղին տեսաւ, կ'ըսէր մայրս. և միշտ անոր
լուսանկարը իւր աչաց առջեւն է: Այն դժբաղդու-
թենէ վերջ հրաժարիլ կ'ուղէր. արդէն իսկ հրաժարա-
կանը դրեր էր, բայց կը ցաւէր տղաքն առանձին ձը-
գել: Սակայն անցեալ օր որոշած կ'երեւէր, եւ հայս
որ իրեն հետ Տեսութեան սենեակը կը գտնուէր, կ'ը-
սէր իրեն. — Մեղք չէ՛ որ կ'երթաս, պարոն Տեսուչ. —
երբ մարդ մը ներս մուաւ՝ տղայ մը ընդունելի ընելու:
Երբ տեսաւ այն տղան՝ շատ զարմացաւ տեսուչն, —
բաւական ատեն՝ զիտեց զայն: Այս տղան միշտ իւր
մեռեալ որդւոյն կը նմանէր: Բայտ Տեսուչն. — Շատ
աղէկ: — Բնդունեցաւ զայն, արձակեց հայրը և որ-
դին, և անոր վրայ մտածութեանց մէջ ընկլմեցաւ:
Մեղք չէ՛ որ կ'երթաս. — կրկնեց հայրս: Այն ատեն
Տեսուչն իւր հրաժարականն առնելով երկու կտոր ը-
րաւ և ըսաւ. — կը մնամ: (Բազմավեայ)

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ
Լաւագոյն տեսուչն կարծէ տասն ուսուցիչ:

ԸԱՆՑՕԹՈՒԹԻՒՆ
ԸԱՐԱՊՈՒՐԵԱՆ. — Յարուքիւն Պէզնեան. —
1771 Ապրիլ 10ին ծնաւ ի Պոլս՝ Պէզնի Պողոսի որդին Յարութիւն՝

որդ անուն այսօր մեր շատ մը եկեղեցեաց , գպրոցաց եւ հիւան-
դանոցաց ձակասներն գրուած է : Թէպէտ ոչ ուսեալ , այլ ուշիմ
եւ հանճարել , իւր ընտիր ձրից շնորհիւ 1819 ին փողերանոցին
վերատեսուչ կը կարգուի , եւ մինչեւ կենաց վախճանը իւր վեհա-
պետին մասնաւոր շնորհաց կ'արժանանայ :

Պէզեանի յիշատակն անկորուստ պիտի մնայ , որովշետեւ
այս մեծահոգի անձն եղած է ի կենդանւութեան՝ բարեպաշտ , բա-
րերար , աղքատասէր , գրասէր , կրթասէր , խոհուն քաղաքագէտ ,
տիրասէր : Մեռաւ 1854 Յունուար 3ին , եւ թաղուեցաւ ի Մայր
Եկեղեցւոջ Գոռմ. Գ.աբուի :

ՍՍՂՄՈՍ ԿԵՆՍՅ

Մի՛ տրտում երգովք ըսէք ինձ աւանձ զի՞
թէ սնոտի երազ մ'են կեանք , այս մասն այս
թէ թմրեալ հոգին մեռած է՝
եւ պատիր են կերպարանք :
կեանքն ըստոյդ՝ կեանքն իրական է՝ և զրան
եւ շիրմին չի լըմննար .
« Հող էիր և ի հող դարձցիս դու »
Չըսուեցաւ հոգւոյն համար :

կեանք մեր սուղ ու արուեստ երկայն է ,
եւ մեր սիրաք՝ թէպէտ արի՝
Սեւասիօն տրոփին թմրկաց պէս
Բզիրաւէր գերեզմանի :

Աշխարհիս պատերազմին մէջ՝
Յարինոս դաշտ ձակատու՝
Մի՛ նմանիր անխօս նախրի մը ,
Այլ դիւցազն մ'եզիր դու :

Յապագայն գու վմտահ մըլլար ,
թո՛ղ զանցեալն անցած վշտաց ,
Գործէ՛ , գործէ՛ ներկայիս մէջ՝
Սիրտ ի լանջա ի վեր Աստուած :

Վեհ մարդկանց վարք օրինակ են ,
Թէ ի՞նչ բարձր ենել կրնանք
եւ տարեաց աւազներուն վրայ
Հետք ձգել երբոր երթանք :
Հետք զոր գուցէ այլ նաւող մը ,
Յընդարձակ ծով աշխարհի՝
Նաւարեկ մոլուած եղայր մը՝
Տեսնելով քաջալերուի :

Զեռն ի գործ ուրեմն և ժի՛ր լէր ,
Դիմագրաւ յամին արդել ,
Յարատեւ ջանիւք ուսմի՛ր դու ,
Աշխատիլ և սպասել :

Թարգմ. Թ. Թէրջեսէն

Լօնկէլլո

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ
Խղճի նանդարտուրեան մէջ է երշանկութիւն :

ԾՍՆՕԹԱՌԻԹԻՒՆ

Բառք . — Պատիր , խարեբայ . — Սեւասոյ , սեւով ծած-
կուած . — Տրոփի , զարնել . — Նախրի , անասուն . — Լանի ,
կուրծ :

Ընթացք շարադրութեան . — Արձակի վերածեցէք վերս-
գրեալ տաղն :

ՊԱՏԿԵՐ ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ

Ահա կ'անցնի դարձեալ : Այսպէս ամէն երեկոյ ,
վերջալոյսի ժամանակ , կը դառնայ ի տուն , յանուրն
առած նկանակ մի հացի , գլուխն հակած ի հող , կրոս
ծնդօք հազիւ կրելով անարիւն անմարմին իրանն . ոս-
կերոտի մը դաճնկոս մորթով պատառուած , կմախք
մարդկեղէն , որ դեռ կը կընէ ողի , կը ծծէ շունչ՝ ոչ
լիարոք անհուն մթնոլորտէն՝ յոր կը լուծուի տակաւ
իւր էութիւնն :

Առանց դառնալու յաջ և յանեալ , առանց ուժ դնե-
լու մանրիկ մանկուոյն որ կը խաղան կը ճռուղեն առ-
դուրս տանց , կամ դեռատի սիրուն աղջկանց որ զոյգ
զոյգ կ'երթեւեկեն ի փողոցի , կ'անցնի կ'երթայ նա-
խ ճանապարհն : Ուր ուրեմն դիւերոյ սեւ ստուերաց
հետ , կը մտնէ ի տուն , ուր կը սպասեն նմա երկու
սիրուն զաւակունք , երկուքն ալ աղջիկ , մին տասնա-
մեայ և միւսն իբր ութիւնաց : Մայր չունին . անդրա-
նիկն հազիւ կը յիշէ իւր մայրիկն , զորմէ ոչ եւս կը
կարծէ թէ պիտի գայ . գիտէ միայն թէ դնացած է
յերկինս :

* * *

Նեղ և ժանտահու փողոցի մը մէջ է տունն՝ յո-
րում կը բնակի հէք մարդն իւր զաւակօք , գետնայար-
կի մէկ սենեկին մէջ փողոցի վրայ : Իւր քենին երեքն

երրեմն կը հոդայ որբոց . ինքն ալ աղքատիկ մարդու
կին է , զաւակաց մայր , բնակեալ գիւղին հեռաւոր
մէկ թաղին մէջ . բայց կ'այցելէ յաճախ , և սերտիւ
խնամ կը տանի անոք մանկանց : Կ'զգայ թէ իւր քե-
ռայրն այսօր կայ , վաղիւ չկայ . արուեստիւ ձկնորս՝
անկարող պիտի լինի ընդհուպ թիավարելու իսկ . կը
սոսկայ բարի կինը խորհելով՝ թէ ինչ վախճան պիտի
ունենան գժբախտ մանկունք , երբ սրբանան և ի հօրէ :

Հայրն և երկու զաւակունք կը նստին ի սեղան ,
ուշ ժամանակ , երբ մութն արդէն պատած է : Կանթե-
ղին աղօտ լուսով հազիւ կը տեսնես բռնազրօսիկ ժը-
ղին որ կը թուշտի կիսակենդան հօր շրթանց վրայ ,
պիտն որ կը թուշտի կիսակենդան հօր շրթանց վրայ ,
երբ անմեղ մանկունք անզիտակ չար ժամուն՝ որ չէ
հետի , կը խօսակցին զուարթութեամբ : Երկու ժամ
հետոյ կանթեղը մարած է , երեքն ալ կը ննջեն ի նմին
սենեկի , ձայն չկայ . միայն կը լսես մերթ չոր հազի մը
շուկ , որ չընդհատիր ցայզն ի բռն :

Օր մը , չորեքշաբթի առաւաօտ , արշալոյսն հազիւ
ծագած , անձրեւայոյզ փոթորկալից օդով , դուրս կ'ել-
ծագիւն , երբ դեռ կը ննջեին իւր զաւակունք : Սրա-
գիւն հայրն , երբ դեռ կը ննջեին իւր զաւակունք : Սրա-
գաքայլ կ'ընթանայ դէպ ի ծովեզր , ուր սակայն իւր
պարուեստակից ձկնորսաց հետ ի զո՞ւր կը սպասէ ալեաց
հանդարտութեան . ինքն անսուադ է , և բնաւ ստակ
չկայ քսակին մէջ , տունն ալ հաց չունին , գիտէ . կը
հազար կը հազար մէջ , տունն ալ հաց չունին , գիտէ . կը
սպասէ , կը հազար ու կը հազար . ծովն խաղաղելու ե-
սպասէ , կը հազար կը հազար . կ'արձանանայ անդ ժամերով . իւր ար-
թեւոյթ չունի , կ'արձանանայ անդ ժամերով . իւր ար-
թեւոյթ չունի , կ'արձանանայ անդ ժամերով . իւր ար-
թեւոյթ չունի , կ'արձանանայ անդ ժամերով . իւր ար-

և կ'ամբոխէ ծովս : Յանկարձ սեւ լսորհուրդ մը կը ծագի իւր մտաց մէջ . կը շարժի դէպ յառաջ , հառա- չանք մը կ'արձակէ ի խորոց , ոչ եւս կըզզայ անձին . երկու քայլ մնացած է իւր և անդնդոց մէջ . պիտի նետուի . քայլ մը միայն . . . երբ զոյդ մը հրեշտակը կը կանդնին իւր դէմը . կը սարսայ , յետս յետս կ'ընկրէի . զաւակունք պատկերացած են իւր աչաց հանդէպ , անհնարին զիզջ մը կը յուզէ իւր միաքը և աչերն յեր- կինս ամբարձած կը մրմիջէ դառնագին . Փառք քեզ , Աստուած , յաղագս ամենայնի , Տէր , փառք քեզ . . . :

Յ. ԳՈՒՐԳԻՆ

(Արեւելք)

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ
Սիրոյ յութէ
Սըրտի փութէ :

ԹԱՆՅՈԹ-ՌԱԹԻՒՆ

Բառք . — Անուր , թեւին տակ (Ք.Բ.՝ Ք) . — Հակած , ծը- ռած . — Կրոս , տկար . — Երան , զիասոր մասն մարմայ , (Ք.Ե.՝ Ք) . — Դաշնիս , դեղնացած . — Պատաժէ , փարբել . — Լիարոյ , լիուլի (Բ.Ա.՝ Ա) . — Անեակ , ձախ . — Ուշ դնել , միք դնել , — Ժանտահոն , զարշահոն . — Մերժիս , բոլոր սրտաց . — Բոնազրոսիկ , ակամայ . — Անզիսակ , անեղեակ . — Ցայդ , գիշեր . — Անսուաղ . անօրի . — Ամբոխէլ , յուզել . — Զգալ անձին , խելիք զլուխը գալ . — Ընկրկիլ , ետ կենալ .

Ընթացք շարադրութեան . — Երկու որբեր . — Գիշեր , յեզր ծովու . Հողմն զայրագին կը փէք + անհանդսութիւնք Եւ-

գինեայ իւր ամուսնոյն վիճակին համար . դուրս կ'ենէ , կը տես- նէ լըս մը մօտակայ իրանիթին մէջ . անդ թշուառ հիւանդ այրի մը կը բնակի իւր երկու որդւովք . — Եւգինէ ներս կը մտնէ . — այրին մեռած է , մինչ որդիքն կը քանան անոր քով . — Եւգինէ յիւր տուն կը բերէ Տէք փոքրիկները . — Ա.յըլ կուգայ . ձկնոր- սութիւնը գէշ եղած է (Խօսակցութիւն) . — Եւգինէ կ'իմացնէ նմա՞ գրացուհոյն մահը . — Խոնչ ընէ որդիքը . այրը թէպէս աղ- քատ , պահ մը վարանելէ յեսոյ որբելն ընդունիլ կ'առաջարկէ . այն ատեն Եւգինէ խնդագին կը ցուցնէ նմա անհայր , անմայր այդ մանկիկները :

— 308 —

ԼՍԻԱՏԵՍՆ ԵՒ ՅԱՌԵՏԵՍ

— 1. Ի՞նչպէս ենք :
— Յ. Երկար կենաքը Երկար վիշտ , փափաքելն կարձն է միշտ .

Երբեւ դըրամ որ վասնի , իբրեւ ճըրագ որ հասնի .
Գիշերն անցաւ , տիւն անցաւ , չանցաւ մէկ օր մը անցաւ .
Կրանքէ ցըմահ մի թել է , զոր կարձել կամ Եր- կարել

Անըշան է վլահին մօտ՝ ուր հարկ է մեզ իջանել .
Գունտու՝ աղօրիք , մեք՝ հատիկը , դառնանք դառնանք չափակինք :
Այսպէս ենք . — Ի՞նչ ընենք :

— 1. Ա.յո՛ ,
Դեռ անցած վիշտն ի յութ է , և գալիքը միշտ փուշ է . . .

Բայց ,

Յաւոց աճումն է զայրոյթ , համբերելն ընենք
լինկմբ վիշտը՝ փառք մեր այդ , անընկելիին՝
խղճի խայթ . Անտի զմեզ ազատ պահենք , խաղանք , խըն-
տանք և կայտուենք . Ի՞նչ որ գայ , թող բարով գայ . մահուան առ-
ջին այ ապօքնք :

Եցէ՛ք թէ կարենայի Յ. ԱՄԿԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Ըսկ՝ իմաստութեան թէ դու իմ ժոյրա ես, Եւ քող գիտութիւնն լինի ժեզ բարեկամ:

‘ԸԱՆՈԹԱԿԹԻՒՆ’

Բառեր. — Վասմիկ, հասմիկ. — Իյուզ, մաս մէջ. — Բնոյք, բնուրիւն. — Անընկածիշ, որ չնուանուիր. — Կայտուկ, ցափիկ.

ԷՅՐԱԳՔ Հարադրութեան. — Ո՞վ ստեղծեց Երկինքը . . . Երեւելի անդղիացի չափագէտ, բնագէտ եւ աստղաբաշխ մէծն Նեւտոն Երբեմն կ'ընդունէր գիտնոյ մի այցելութիւն՝ որ դժբախտաբար անաստուած մ'էր . . օր մի այցելուն կը նշանէ Նեւտոնի ստոլին վրայ գեղեցիկ Երկրագունատ մը . . . կը զարմանայ եւ նոյն իսկ կ'պահանայ . . . ի վերջոյ կը հարցունէ թէ ո՞վ յօրինած է զայս : — Ոչ ոք, կը պատասխանէ Նեւտոն : Գիտունը սրտաբեկ կը հեռանայ, իւրաովի բաելով . . . :

ՄԱՀ ՄԵԴԱԿՈՐԻՆ

բանն ինքնին կը բացուի կը դոցուի, մարմինն ամբողջ կը սպառայ. և այս յետին ձգան մէջ իւր տարաբախտ հոգին կը խոռուի իբրու թէ այս աղմալից մարմնոյ մորմոքէն, կ'իշնայ Աստուծոյ ձեռաց մէջ, և առանձին կը դտնուի ահաւոր դատաստանին առջեւ :

Թարգմ. վերաբեր մասնաւոյ ՄԱՍԻՅՈՒՆ

ԳԵՂԵՅԻԿ ԲԱՆՔ

Առանց կրօնական հաւատոյ չունի մարդ ո՛չ պնդուրին ոգւոյ, ո՛չ երջանկուրին եւ ո՛չ իսկ յոյս՝ կենաց դժնդակ վրդովմանց օրւան մէջ :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառ. — Ակնկալուրին, յոյս. — Պրծիլ, ազատիլ. — Կաշկանդել, պինդ կապել. — Մահաւեսիլ, մահաւերձ. — Կիսահեղձ, կիսովին խղղուած. — Շարժաւիր, պատճառ. — բեւուեալ, յառած. — Դիմացիծի, դիմաց գծերը :

Ընթացք շարայրութեան . — Մահ արդարոյն. — Որոտմանց, մրկին յիշասակը համելի է այնմ՝ որ նաւահանգիստ հասած է. սիրելի է նմա մոտք տեսնել վերտին ցայնվայր ամէն պատահած այն արդեւքներ, գժուարութիւններ : Վերջապէս պիտի բաղդատենք արդարն՝ մահամերձ Մովսիսի հետ սուրբ լերան վրայ, խոստացուած երկին դէմ :

Պիտի նկարագրենք զՄովսէս մահամերձ, որ կը յիշէ Եգիպտոսէն Ենելին ի վեր ունեցած ամէն վտանգներ, կրուատներ, նեղութիւններ, եւ այժմ քանի՛ ել ջանիկ է զի հասած է ասպարիզին վերջն, եւ կը նկատէ զմա՞ իբրեւ վարձք իւր վաստակոց եւ բարեյաջող վախճան իւր ընթացից :

—————○○○○—————

ՍՊԻՏԵՑԻ ԶՄԻՄԵԱՆՍ

Վարդակարմիր, Գողգոթային վիճ գագաթ, Միշտ վայլվլող սիրոյ անւելջ ճառագայթ, Դեռ կ'ըսպասե՞ս թափել արլոտից քու սըլաք. Զո՞վ կը հսկես, վի՞հ և անդո՞ւնդ թէ կըմախք, Որ սեւ ժայռից մէջ մարեցաւ այն բեկին բարբառն վըսեմ թէ « ըզմիմեանս սիրեցէք » :

Ծածկէ՝ ամպով կարմիր կողերդ, Գողգոթայ', Եւ թող խայտան ցաւոտ ոսկերք սեւ Յուդայ. Ժանդուա ու գուլ թուրելն առին կարմիր փայլ, Նոր կըրճնին հետ արեան ուղիս առին քայլ, Թնդանօթին առջի բոմբիւն խեղդեց սէզ Զըրացըր հագագ թէ « ըզմիմեանս սիրեցէք » :

Տնանկին դամբանը կ'անհետի ոտնակոխ, Տընակին մէջ մարի առ կայծ կանթեղն հող. Այն մութին մէջ նօթի արղեկը կը հեծեն. Դրզեակըն խրախ մինչեւ լոյս ջահք կը հւեծեն, Հարուստին կառք ծխորով կ'անցնի սըրարչաւ, Հէդին դագաղն իւր գերեզմանն լուռ իջաւ :

Գեթսեմանին իջնող հրեշտակն դալկանայ, Որ գեղ՝ ծաղկի՝ արցունք ու փառք չըճանչնար. Նորս ցուրտ գողն աղքատը սոսկ կ'ըսփոփի, Ճոփսն և տընանկ պատանեքին մէջ կ'ըլլան մի. Կայծակնաթեւ թէ մըուընչեն մըրրիկներ, Թէ « սիրեցէք զիրար » . հէդն հոս չեն սիրեր : Պ. Դուրեան

(Տառ)

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Այս երեք առաջինութեանց, այսինքն՝ հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ մէջ զերազանցն սէրն է:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Բառք. — զեկ, բարձր, փառալոր. — Աշշէշ, աճմարեղի. — Բեկրեկ, Տկար. — Դուլ, բբացած (առ-ը) • — Ռողիս, հնամիք. — Բուրխւն, բնդանօրի ձայն. — Սիզ, հպարտ. — Հազար, աւաչ, ձայն. — Տեսանկ, աղիաս. — Առկայծ, մարած. — Խրախ, ուրախ զուարը. — Ժիռ, աղմուկ. — Դաշտ, դեղնած. — Դաշկահար, դեղնած.

Գիւտ. — Հետեւեալ բառերու սկիզբի տառերը փոխելով ուրիշ տառ դնել. — Սէր. • Ժայռ. • Քայլ. • Մէդ. • Մութ. • Մուռ. • Գեղ. • Լոյս. • Հաչ. • Մանչել. • Կառք. • Գոր. • Տեծել. • Մարել. • ցաւ. • Գեռ. • Հասեր.

Ընթացք շարադրութեան. — Սէր. • Սէրն աստուածային զգացում մ'է, յերկնից իջած մի ճառագայթ, ծաղկեց քաղցրաբոյք. գթութիւնն նորա գուստոն է: Առանց սիրոյ՝ առաքինութիւնն անուն մի է միայն. — Ինչպէս հոգին կեանքն է մարմնայ, այսպէս եւ Սէրն հոգւոյն կեանքն ու կատարելութիւնն է ...:

Ա Շ Ս Ա Շ Ի Շ Ա

Իր այրի մօրն անդրանիկն ու միակն էր, ուխտի զաւակ, զոր Սեբաստիոյ Ս. Նշանէն արցունքով առած էր իր Աննա մայրն և անունն ալ դրած՝ Նշան: Երբ տասներկու տարեկան եղաւ, Աննա զրկեց զնա ի Պոլիս: Գաւառացի ամէն մօր հաւատոքն է այս — տղաս

Պօլիս երթայ և բան մը սովորի ուսանելի տարիքը չկորուած: Այս համոզման մէջ երկու բան նկատելի է, — զաւկէն զրկանք, զոր յանձն կ'առնու ասլագայի խորհրդով. — բան մը ունենալու մոածումը: Իսկ եթէ ոչ, ո՞վ է այն, ո՞ր կինը, ո՞ր անգութը որ չխոռվի մինչ աղիքներն իր սրտէն դուրս կը քաշուին. դիւրին է բռնել 42 տարեկան զաւկին ձեռքէն ու ըսելթէ, « Գնա՛, զաւա՛կս, այս այն ճանապարհն է, ուրեկէն անցաւ գնաց հայրդ ու ալ չդարձաւ . . . »: Այսպէս ըրած է Աննա, իր ձեռքովը ճամբու դրած սիրուն գուռելի Նշանիկը, և իբրեւ վերջին պատուէր ըսածէր որ ամէն բանէ առաջ երթայ Պալըգւըի հայոց գերեզմանատունը, իր հայրիկը գտնէ հոն ու օրհնել տայ . . . :

Նշան եկած էր ի Պօլիս. Սեբաստացի ծանօթներ, որոց յանձնած էր Աննա իր զաւակը, կը տեսնեն, կը նային անոր վրայ. տակաւին մասոցուկ էր, մօր մը կուրծքին վրայ սնած շյոււած մանուկի պէս. կակուղիկ ոսկորներ, արեւէն, ցուրտէն պահուած դաստակեներ, սիրուն, սեւուկ, անմեղ աչքեր, որք շատ կանուխ սկսած էին պանդիստութեան արցունքը թափել աղի ու լեզի: Երկար բարակ մասածութներէ ետքը, կ'որոշեն Ս. Փրկչի որբանոցը գնել, և իրաւ ալ, ամէտ աւելի լաւագոյն որոշում կարելի չէր ընել Սեբաստացի մատաղ տղեկի մը համար, որ թողած էր մայրն հօր գերեզմանը: . . .

Պալըգւըի գերեզմանոցը կ'երթան նախ և առաջ. Նշանիկ մոռցած չէր իր Աննային վերջին պատուէրը, — տեսնել հօրը գերեզմանն ու օրհնել տալ զայն: Գտան. Նշանիկ տեսաւ իր հայրը. հողը տակաւին գետնի հա-

ւասար եղած չէր, վայրի ծաղիկներու հետ վուշեր կը փաթթուէին անոր վրայ: Վանցի գեղջուկ տէրտէր մը եկած մօտեցած էր անոնց. օրհնել կուտան, և Նշանիկ, տակաւին տասներկու տարեկան, մօրն աղի արցունքն բերած էր ու արտասուած հօր մը վրայ, զոր բաւ տեսած չէր: Դուրս կ'ենեն մեռեներու մտածութեան տակ ճնշուած ճմլուած, և կը շոկուին դէպ ի հիւանդանոց, ուր Նշանիկ կը տարուէր ապագայի խորհրդով:

(Մասիս) Ս. ԿԻՒՐՃԵԱՆ
(ՀՐԱՆԴ)

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Ո՛ՐԲԱՆ թուառ է նա՝ որ կենաց առաւօտէն կը լսէ մեռելական ողբեր:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ընդհանուր զարարարեան. — Դարձ պատիստն:

ՀՅԱՅ

ՓԼՈՐԵՍՏԻՈՅ ՍՈՒԻԾԸ

Ամէն տարի պարապաց մօտ վլորենտեան:

Հին սովորյթ էր խմբել տօն գեղջկական.

Մօտի դաշտաց մէջ ժինական ամենայն:

Խմբով գային ողջունելու զդարձ գարնան:

Քանի սոսկում, յանկալծ մըունչ ահագին:

Մանէ ի խորս մեծահնչիւն պուրակին:

Անդ յերեւան գայ առիւծ, աչք հըրափայլ,

Ամենք խոյս տան. ի յոյզ, մայր մի խունապեալ

Տանի զորդին, ով Տէր, այն բեռն անուշակ

կ'անկնի գրկէն. արձակէ հէքն աղաղակ.

Որդին գէւ գէւ պատող ժանեաց մէջ ահա.

Մայրն ողեսպառ, տրժգոյն, դիտէ և գողայ.

Ակնկառոյց, բազկատարած, անսասան,

Վերըգենու նա զիւր կորով նոյնժամայն.

Սարսափահար որպէս մեռեալ մայրն յահէն

Ոգեւորի, պատրանք սիրոց, ցնորք վեմ:

Ծունըր դրած գոչէ. տուր, տուր զիմ որդեակ.

Նորա ձայնէն յուզուի առիւծն այն վայրագ:

Անոր հայի, կենայ, հայի և նորէն,

Թուի գուշակել թէ խնդրէ մայր մի իրմէն.

Հանդարտ և քաղցր ուղղէ առ նա մի հայեաց,

Տայ զայն քաղցր ինչք, դնէ առաջ մօր ծնկաց.

Ուշիւ դիտէ մանկան ժըպիտն անիրուով,

Եւ անտառաց խորն երթայ յամբ ընթացքով:

Թարգմ.

ՄԻԼՎՈՐԱ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Մօր մը սիրը բնուրեան զլուխ զործոցն է:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Բառ. Շինական, զիւղայիք. — Խոհապեան, շիորած.

Գէշ զէշ, բգիկ բգիկ. — Ակնկառոյց, աչք տնկած. — Ահ-

սասան, անսարծ. — Յամբ, կամսց:

Էնքայք շաբադը ուրեմն . — Կոյր պատմելոյն վիճը . — Կոյր պատահի մը կը թուէ հետզետէ , լնչ որ այլք կ'ըսեն իրեն գարբնան տեսարանաց գեղեցկութեան վրայ , առաւօտնի , գարբնան , ծովու եւ երկնից ցցուցած զանազան երեւոյթներու վրայ +

Պատանին նկարագրաբար կը կրկնէ ըստ ոյլոց ինչ որ այս չորս խումբ երեւոյթք ունին մամաւորասկօ զմայելի եւ հրապուրիչ ի տեսանել , եւ ուրեք ուրեք , հասուածի մ'ի վերջ , ընդհատելվ տեսանել , և բայց զայսոսիկ չտեսնելս չէ որ կը իւր Նկարագրութիւնը կ'ըսէ : « Բայց զայսոսիկ չտեսնելս չէ որ կը իւր Զուակ ուրեմն կ'ամփոփէ . եւ կը վերջացը-վշտայնէ զիս այնքան : Հուակ ուրեմն կ'ամփոփէ . եւ կը վերջացը-վշտայնէ յայտնելով թէ ինչ բանի համար ամենէ աւելի ցաւ կը պատ-ճառէ ինքեան իւր կուրութիւն . — Անոր համար որ չէ կարող տեսնել . . . իւր մօր դէմքը :

ՀԵՄԵԾԱՆՔ ՓԱՅՏԻՆ

Բոցանշոյլ վասարանին մէջ կը ըսէ ու կը պայմանագրու վասարանին մէջ կը ըսէ մենակերպ ձայ-պայմէի , և վաղնջուց փայտը կը հեծէ մենակերպ նուվ :

Կըսէ թէ ծնած էր , որպէս զի ապրէր մինչ ողին մէջ , հոգին սնանէր և երկնից կապոյտը ծծէր , յամ-րաբար ամենալով՝ ամէնատարի աւելի բարձր , միշտ աւե-լի բարձր մղէր իր կանաչապատկ գլուխն . ապրիլը խըն-լի բարձր մղէր իր կանաչապատկ գլուխն . ապրիլը խըն-լի ծաղկանց ողկոյզներով , ապաւէնն ըլլար բոյ-էր իր ծաղկանց ողկոյզներով , անոնց տուններն ու ա-նոնց երկիվաններն : Ո՞վ այլազան երկինքներ , ո՞վ նո-րանոր հորիգոններ : Ե՞նչ անծանօթի բարիքներ պիտի ճանշնաս դուն վերջապէս : Արկածներու ինչ տարօրէն շունչ կը թափանցէ իներքս ի քեզ : Բայց այս ամէնը բան մը չէ , որպէս ետեւ կը սողաս տակաւին : Թող ձեւքեն ու վառե՞ն զքեզ , յայնժամ կ'առնւս թուիչդ : Թող վայրագ հուրը լափիզէ նեարդներդ , այն ատեն ահա ազատ ես դուն . հմակ դուն կ'ապրիս , ազատ ես դուն հուսկ ուրեմն : Ծաղիկներուդ գարնանաբոյր ա-նուշահոտութիւններէն վեր , գեղասոյլ թոչուններուդ երգերէն ալ վեր , հասաշանքներէդ ալ վեր , խոս-քերէս ալ վեր , ամպերուն ու անսահման անջըր-պէտին մէջ կը թոխ դուն : Դէպ այն գոլոքիններն վար-

զի ծառն ալ կենդանի էակ մ'է : Կ'ըսէ թէ ինք որչափ բարի եղած է յաճախ մարդուն համար , և թէ մենք , ապերանիսոք , անազորոյն կերպով կը կտրենք ան-պաշտպան հմայն :

Ու վառարանին մէջ փայտը կը հեծէնէ ու կը գա-լարի :

— Ո՞վ փայտ , իմաստուն չես դու և յանկաւի կը գանգաւիսա : Մեր ձեռներն ոճաբարձ չեն , երբ գքեզ կը կտրեն : Դուն միեւնոյն տեղը կը մքէիր , անշարժու շլթայակապ , արմատներուդ կապանքին ենթար-կուած և անրածանելի կերպով միացած հողին : Դուն որ կ'ուզես ազատ ըլլար և կը յայտարարես թէ ծառն ալ կենդանի է . դուն հօն անկուած կը մնայիր արձա-նի համարունատիպ , կեղեւիդ մէջ գերի և կաշկանդեալ , և թոշնոյն նայելով միայն գաղափար մը կ'ունենայիր թուիքին վրայ : Մենք զքեզ ազատեցինք հողին , ուր գամուած էիր , և ահա կը տատանիս ջուրց վրայ , տես-նելով ափունք և նաւորդներ , անոնց տուններն ու ա-նոնց երկիվաններն : Ո՞վ այլազան երկինքներ , ո՞վ նո-րանոր հորիգոններ : Ե՞նչ անծանօթի բարիքներ պիտի ճանշնաս դուն վերջապէս : Արկածներու ինչ տարօրէն շունչ կը թափանցէ իներքս ի քեզ : Բայց այս ամէնը բան մը չէ , որպէս ետեւ կը սողաս տակաւին : Թող ձեւքեն ու վառե՞ն զքեզ , յայնժամ կ'առնւս թուիչդ : Թող վայրագ հուրը լափիզէ նեարդներդ , այն ատեն ահա ազատ ես դուն . հմակ դուն կ'ապրիս , ազատ ես դուն հուսկ ուրեմն : Ծաղիկներուդ գարնանաբոյր ա-նուշահոտութիւններէն վեր , գեղասոյլ թոչուններուդ երգերէն ալ վեր , հասաշանքներէդ ալ վեր , խոս-քերէս ալ վեր , ամպերուն ու անսահման անջըր-պէտին մէջ կը թոխ դուն : Դէպ այն գոլոքիններն վար-

դակարմիր, ուր երեկոյեան արեւը կը շիջանի որպէս
կրակն ի խորս խնկամանին, դէպ այն երկնակամարն
կապուտագեղ որ քու ծխեցին հոգիդ կը ծծէ տար-
փառենչիկ, դէպ այն հեռաւորութիւնն խորհրդաւոր
և վեհապանձ՝ ուր վաղը պլատի գայ արթըննալ արշա-
լըյան կենացնցուղ և ուր այս գիշեր պիտի շողողան
աստեղային պայծառութիւնք. բարձրացի՛ր, բարձ-
րացի՛ր յաւէտ, թաւալէ՛ պարոյլներդ, բարձրացի՛ր,
մարի՛ր, փախի՛ր, անյայտ եղիր: Ահա վերջին ծուէնդ
կը տատանի մինաւորիկ, կարի յոյժ նրբացած, ու
կը հալի, ու կը լուծուի, ու կը մեռնի: Էութիւնդ կը
կորսնցընես. հիմակ ա՛լ աչք մը չլրնար ճանչնալ ըզ-
քեզ, և գուն որ հառաչանօք կը յիշէիր արձակ եր-
կինքն և ջինջ օդն, ո՛վ փայտ վաղնջուց, երկնակա-
պոյտին մէկ պատառն ես հիմակ:

Թարգմ. Լեհու Բաշաւեան

Ժան Շիբիկ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Ես ի նոցանէ եմ որք կարեւորութիւն կուտան կե-
նաց եւ կը խորհին թէ կ'արժէ լաւ գործածուիլ: Այլ
մանուան վրայ ծանօթութիւն չկրնար ունենալ կենդանի
էակն. որովհետեւ երբ այն կը սկսի, ինք կ'աներեւի:

Թարգմ. Ե. ՏԿՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ


Կմիլ Կիդու

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Ընթացք շարադրութեան . — Մանուկն

ՇԱՐՍ.ԴՐՈՒՅԹԻԿԱՆՔ ՊԱՏԿԵՐԸ.Ի

Դարաւոր ծառն :



Ա Շ Ո Ւ Ն

պարագաներ աղքատներ հայոց զայտ
զամանական նկարութիւն
բարձր աղքատ աղքատութիւն
զամանական հայ ընթ միջնադար
ԱՌ, Եկա՛ր վերջապէս, ո՛վ աշուն,
Այրի հարսդ առանձին,
Շատ հոգիք յուզմունքով դողդոջուն
կ'սպասեն քու դարձին :
Մաղկահաս կուանը շատ երազուն՝
կը պաշտեն քու պատկեր,
Եւ գեղնած վարսերուդ ազագուն
իրենց միրտն է ընկեր :
Միդամած երկընքիդ տակ տրտում
Գիշերներ անձրեւոտ
Ի՞նչ իղձեր, ի՞նչ խոհեր անհատնում
կը հըսկեն ցառաւօտ :
Եւ երբ հովդ ըսկըսի թափել վար
Մառերէն տերեւներ,
Շատ կեանքեր անոնց պէս սրբավար
կը մեկնին երկընք մեր :
Ի՞նչ ունիս դու անոյշ և չըքնաղ
Սեւ քօղիդ տակ թագուն,
Որ տժգոյն վերջալոյադ ալ նըւաղ
Զեն փոխեր յետ այգուն .
Ոչ չորսած արօտներդ անմարմանդ՝
Կարմրագեղ վարդերուն,
Ոյց վերայ ցօղն իբրեւ ադամանդ՝
կը չողայ երերուն :
Զեմ ճանչնար ես գաղտնի քու հրապոյր
Եւ գեղոյդ անտարբեր՝

Նոր չնորհ տեսնելու հեշտաբոյր
Կ'սպասեմ անհամբեր :
Սրցունքոս այդ աչեր քու հիւանդ
Չունին գեղ ինձ համար ,
Դակահար չոր ճակտիդ մանաւանդ
Չեմ բընաւ միրահար :
Զի վէրքեր քեզմէ շատ ունիմ ես
Տառապեալ մէջ հոգւոյս ,
Տրտութիւնդ ալ լոկ խաղ մ'է , դիտե՞ս ,
Բաղդատմամբ ցաւերուս :
Թերթերուդ մէջ ունիս դու բընաւ
Այնքան նուրբ ու մաշած ,
Որքան թերթն , ահ , հոգւոյս իմ անքաւ
Վշտերով անձկայրեաց :
Քու հովերդ ալ տիսուր ողբերգու
Զայն ունին բաւական
Կոկիծներս անհամար գոռալու
Երկնից մէջ անսահման :
Հեգնութեամբ կը նայիմ պատկերիդ
Տըրտութեան այդ աղօտ ,
Որ ըստուեր մ'է միայն անժըպիտ
Հոգւոյս քով արիւնոտ :

(Մասիս)

ԶԱՊԵԼ Կ. ՏՕՆԷԼԵԱՆ

(ԱՒՊԻԼ.)

ԾԱՌՈԹՈՒԹԻՒՆ

Ընթացք շարադրութեան . — Անձակի վերածել վերսութեան :

- ՅԱՆ Կ Ն Ի Ւ Թ Ո Յ
- Երես
1. Բնտանեկան յարկ (Ծ. Յ. Պէրպէրեան) 1
 2. Մանուկին (Թարգմ. Ե. Ծ. Գ. Դուրեան) 3
 3. Հօր տունը (Յ. Ուկան) 5
 4. Բնտանկիք (Բ.) 8
 5. Ո՞ւր պիտի երթան հոգիք արդարոց (Հ. Ղ. Ա.) 9
 6. Գլուխ հրեշտակն (Աղեք. Գ. Փանոսեան) 13
 7. Առաքել Տատ 14
 8. Տերեւեկ (Թարգմ. Հ. Բ. Քուշներեան) 17
 9. Կոյրն և իւր ընկերքը (Հանդէս Ա. մաօրեայ) 18
 10. Բարոյական առածք (Յ. Ուկան) 21
 11. Զանասիրութիւն կենդանեաց (Խ. Հ.) 23
 12. Բնագդումն (Թարգմ.) 25
 13. Ողոզում (Թարգմ.) 27
 14. Մանկտին (Տիգրան Ս. Աեթեան) 30
 15. Երկիր երկիր (Մասիաց Աղաւնի) 31
 16. Թեւաւոր միջատն (Լամարդին * * *) 34
 17. Վեհաշուք կազնին (Թարգմ.) 35
 18. Աշնան հովիկ (Թարգմ. Հ. Բ. Քուշներեան) 38
 19. Բանք առ մանուկն (Բաղնակիւպ) 39
 20. Աղիւրն և ծով (Թարգմ. Ա. Գ. Փ.) 41
 21. Վարագայ լեռն (Դարեգին եպիս Արտանձ.) 42
 22. Օրօր Մաննիկին (Ծ. Յ. Պէրպէրեան) 44
 23. Աննա և Սալովմիթ (Բրումախըր) 46
 24. Հրեշտակ և Մանկիկ (Հ. Բ. Քուշներեան) 49
 25. Դարձ պանդխտին ի տուն իւր (Արտանձ.) 51
 26. Երգ փոքրիկ մանկանց (Թարգմ.) 53
 27. Սոխակ (Պուշանժէ-Բագմավիպ) 55

28. Մանուկն առ խաչ (Պետրոս Դուրեկան) 57
 29. Հողմակոծ անտառք (Պ. առ Սէն Բիէռ) 58
 30. Խաչ օգնեա' ինձ (Մելքիսեդեկ Սրբազն) 60
 31. Հրաշեայ (Ռ. Յ. Պէրալէրեան) 63
 32. Վարդն ու գերեզման (Վ. Հիւկո-Աղամեան) 65
 33. Հաղարան բիւլբիւն և Սըհակ թռչուն (Գ. Ե. Ս.) 66
 34. Անմեղութիւն, Աշխատութիւն, Համես-
տութիւն (Յ. Ոսկան) 68
 35. Զատիկ (Գ. Ս. Օտեան) 70
 36. Հիւսիսային կուէնիայի սեւերուն զրոյցը
(Ե. Ծ. Վ. Դուրեկան) 73
 37. Օթայիսի կղզեցիք (Շաթոպրիան) 74
 38. Բարոյական առածք (Յ. Ոսկան) 76
 39. Առ արեգակն (Ոսկան) 77
 40. Մրջիւնին դատաստանը (Բաղմակէպ) 79
 41. Հայ գրագէտն (Եղիա Տէմլրձիպաշեան) 80
 42. Երազ մը (Սիւլիի Բրիւտոմ — Ռ. Յ. Պ.) 83
 43. Զմեոն (Հ. Դ. Ալիշան) 84
 44. Վաղամեռիկն (Մ. Անէմեան) 86
 45. Անտոպէ (Ֆենելոն) 88
 46. Բաժինք (Հ. Գարբիէլ Այվազովսքի) 89
 47. Վերջալոյս (Զ.) 91
 48. Հայելի և կապիկ (Ա. Ա. Նալպանդեան) 93
 49. Վիսպատ (Գ. Ս. Օտեան) 96
 50. Շուշան հովոաց (Աղեք. Գ. Փանոսեան) 98
 51. Նինջ մանկան (Ե. Ս.) 99
 52. Ռւսումն (Թագէոս Կէղիւրեան) 100
 53. Ի՞նչպէս պէտք է լինել բարի դպրոցական մի 102
 54. Գարուն (Մ. Պէշիլթաշլեան) 103
 55. Շուետացի լուզորդք (Նորայր) 105
 56. Իմ մահը (Պետրոս Դուրեկան) 108

57. Կինն՝ կրթասէր (Մ. Մամուրեան) 109
 58. Աղքատ մանուկն (Յ. Սեթեան) 111
 59. Մանկութիւն (Մ. Անէմեան) 113
 60. Ա. Յ. ոչ երբէք (Հանդէս ամսօրեայ) 115
 61. Յարատեւ աշխատանք (Հրանտ Սաստուր) 116
 62. Հունձք (Մ. Անէմեան) 119
 63. Երկայնակեցութեան ջուրը (Թարգմ. Մ.
Ասքանազ) 120
 64. Կափրէրու առասպէլը (Ե. Ծ. Վ. Դուրեկան) 123
 65. Մայրական սէր (Թ. Թէրզէկան) 125
 66. Ապագայն (Ե. Ծ. Վ. Դուրեկան) 126
 67. Վոսբորը (Սրմէն Լուսինեան) 128
 68. Բարոյական առածք (Յ. Ոսկան) 132
 69. Հանդէս Ս. Յ. գորդաց (Աբրահամ Տ. Յակուրեան) 133
 70. Դուռմ (Վ. Ծ. Վ. Տէր Մինասեան) 136
 71. Միքայէլ Վերինոյ (Թարգմ. Ե. Ս.) 138
 72. Առ Գոհարիկ (Մ. Պէշիլթաշլեան) 142
 73. Տղեկն ուրախութիւնը և ծանրաբարոյու-
թիւնը (Թարգմ. Մ. Մ.) 144
 74. Միօգօթիս (Զապէլ Կ. Տօնէլեան) 146
 75. Առ զեփփուն Ալէմոսաղիի 149
 76. Սրբուհի Մայրապետ (Բ. Թէշէան) 152
 77. Բարոյական առածք (Յ. Ոսկան) 157
 78. Ալրն և կինն (Քրումախըր) 158
 79. Դերասանն (Պետրոս Հ. Աղամեան) 161
 80. Տեսուչն (Բաղմակէպ) 164
 81. Սաղմոս կենաց (Թարգմ. Թ. Թէրզէկան) 166
 82. Պատկեր թշուառութեան (Յ. Գուրգէն) 168
 83. Լաւատեսն և յոռետես (Յ. Ոսկան) 171
 84. Մահ Մեղաւորին (Թարգմ.) 173
 85. Սիրեցէք զմիմեանս (Պ. Դուրեկան) 175
 86. Նշանիկ (Հրանդ) 176
 87. Փլորենտիոյ առիւտք (Միլվուա) 178
 88. Հեծեծանք վայտին (Ժան Բիշբէն) 180
 89. Աշուն (Զապէլ Կ. Տօնէլեան) 183

ԳԵՂԱՔԻ ԲՈՒԺԻԹԻՒՆՔ ՍԻՐՈՆ ԳԸՐԵՄԱՇԵԽԵՆԻ

ԵՎԱԼՈՒ

ԵՎԱԼՈՒ

ԵՎԱԼՈՒ

ԲԱՌԱԳԻՐՔ

Ա. Յ Ե Վ Ի Ե Վ Լ Ե Վ Ի Ե Վ

Ահա բառապերք մը՝ որ ըստ կարելոյն կը դիւրացնէ հայ լեզուի ուսումն, ամիսովելով յինքեան նախանեաց մատենագրութեան բառեր, նորաբանութիւններ, դիցաբանական անուններ, դիտական և դաւառական բառեր, որոց ամենքն մասնաւոր խնամօք ճշդուած են չնորհիւ խորհամիտ հետազոտութեանց և օժանդակութեամբ այլ և այլ հոյակաց մշակութեանց:

Սոյն բառարանի առ լութիւններէն մին է բարդ եւ ածանց բառերու ուսումն դիւրացնել գնահատելի նորութեամբ:

Մէն մի օրինակն, ընտիր լաթակաղմ, կը վաճառի կ. Պօլսոյ համար 15, խակ գաւառաց համար (թղթապարական ծախուց պատճառաւ) 18 դաշեկան:

ՀԱՅԱԲԱՆՈՅ

Ա Ն Տ Ի Բ Գ Ր Ո Ւ Ա Ծ Ո Յ

ԱԶԳԱՅԻՆ ԵԿ ՕՏԱՐ ՄԱՏԵՆԱԳՐԱՅ

Ա Հ Ա Ր Բ Ի Լ Պ Ե Վ Ո Ւ

Մասն. Ա. (պատկերազարդ) 5 դահեկան

Մասն. Բ. 7 1/2 դահեկան

Երկուքն ի միասին կազմեալ 11 դաշեկան: Կեդրոնատեղի վաճառման, կ. Պօլիս Համօ-Բուլօ խան, թիւ 29 վաճառատունը:





تیکت ۵ یاره

